ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Երեւան
2020

Զեկույցը պատրաստվել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի» ֆինանսական աջակցությամբ:
Զեկույցից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Open Society Foundations - Armenia
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Մարո Մաթոսյան

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն

Աննա Հովհաննիսյան

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ շահերի պաշտպանության մասնագետ

Գլխավոր խմբագիր՝
Մարո Մաթոսյան

Խմբագիր՝
Ստելլա Չանդիրյան

Սրբագրիչ՝
Ալետա Հակոբյան

Գրքի ձեւավորում՝
լուսինե թալալյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

II ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 13

Իրավիճակի վերլուծություն *16*

III ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 19

IV ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 22

V ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔ 29

«Թեժ գիծ» ծառայություն *30*

Ոստիկանությունը որպես առաջնային արձագանքող 32

Աշխատանք բռնության ենթարկված անձի հետ *35*

Բռնարարի պատասխանատվությունը *37*

Ոստիկանության արձագանքի հետ կապված այլ խնդիրներ *38*

Երբ ոստիկանը բռնարար է *43*

Անհետաձգելի միջամտության որոշում եւ նախազգուշացում *44*

Վերահսկողություն *48*

Ռիսկի/վտանգի գնահատում *49*

Բռնություն գործադրող անձին ոստկանության հաշվառումից հանելը *51*

Քննչական գործողություններ 53

Դատաբժշկական փորձաքննություն 56

VI ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 58

Դատախազներ 59

Ընտանեկան բռնության դեպքերով դատական քննությունը 60

Պաշտպանական որոշում 62

VII ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64

Ֆինանսական աջակցություն ընտանեկան բռնության զոհերի 70

Երեխաների պաշտպանության ծառայություններ եւ ընտանեկան բռնություն 71

Երեխաների խնամակալությունը 77

Երեխաների խնամակալությունը եւ դատական քննություն 84

Երեխաներին վերաբերող գործերով կայացված դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը (ԴԱՀԿ) 88

VIII ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ 90

Ընտանեկան բռնության դեպքերով իրավապահ մարմիններին հաղորդման ներկայացումը 91

Մեկուսի եւ գաղտնի պայմաններում բժշկական խորհրդատվություն 98

Բժշկական ծառայությունների մատչելիություն 100

Առաջնային բժշկական խնամք բռնության ենթարկված անձանց համար *104*

IX ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ 106

Երեխայի տեղափոխումը մեկ այլ դպրոց *108*

Ընտանեկան բռնության կանխարգելումը կրթական համակարգում *109*

X ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ 112

Հաշմանդամություն ունեցող կանայք եւ աղջիկներ *113*

ՄԻԱՎ/ՁԻԱՀ եւ գենդերային բռնություն *114*

ԼԳԲՏ եւ գենդերային բռնություն *116*

XI ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 118

XII ԱՄՓՈՓ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 123

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 129

ՀԱՎԵԼՎԱԾ 1 134

I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միանշանակ պատասխան չկա, թե ինչպես վարվել ընտանեկան բռնության երեւույթի հետ (ԸԲ) կամ կանխել այն: Բռնությանը վերաբերող եւ զոհերի կարիքները հոգալու համար գործող օրենսդրությունը կենսական նշանակություն ունի, բայց ինքնին անբավարար է: Բռնարարների պատիժը կարեւոր է, բայց ոչ բավարար: Զոհերին տրվող ծառայություններն ու աջակցությունը անհրաժեշտ է, բայց պահանջում է համապարփակ մոտեցում:

Ընտանեկան բռնության դեմ պայքարելու եւ այն նվազեցնելու համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում: Ընտանեկան բռնությունը տեղի է ունենում այն միջավայրում, որտեղ շրջապատը թույլ է տալիս եւ նույնիսկ աջակցում է այդպիսի բռնությանը: Այսպիսով՝ դա համակարգային խնդիր է եւ միայն այն դեպքում, երբ նրանց կողմից այն ճանաչվի, հասցեագրվի եւ փոփոխվի, ընտանեկան բռնության երեւույթին պատշաճ արձագանք կտրվի: Հետեւաբար, անհրաժեշտ է հաշվի առնել համակարգի բոլոր օղակները:

Նշված մոտեցումը մասնագետներն անվանում են բազմաոլորտային, համակարգված արձագանք ընտանեկան բռնությանը: Այդ արձագանքը պահանջում է պետական մարմինների ջան-

քերի ներդրում՝ համապատասխան վերապատրաստումների, օրենսդրական փոփոխությունների եւ բազմազան համայնքային ծառայությունների միջոցների ներդրմամբ: Ընտանեկան բռնության դեմ համալիր արձագանքը ներառում է արդյունավետ համակարգային աշխատանք պետական մարմինների եւ համայնքային ծառայությունների/միջեւ: Երբ բռնության ենթարկված անձը զանգահարում է «թեժ-գիծ» ծառայություն, կամ երբ ոստիկանությունն արձագանքում է տեղի ունեցած բռնությանը, ապա համակարգի տարբեր հատվածներ պետք է ակտիվանան՝ բռնության ենթարկված անձի եւ նրա երեխաների կարիքներին համապատասխան անվտանգությունն ապահովելու, ըստ անհրաժեշտության ապաստարան տեղափոխելու, նրանց աջակցություն տրամադրելու եւ բռնարարին պատասխանատվության ենթարկելու գործում:

Պետական որեւէ առանձին մարմին կամ ծառայություն չի կարող բոլոր գործառույթները անել արդյունավետ: Այդ նպատակով անհրաժեշտ է մի շարք սոցիալական ծառայությունների առկայություն՝ համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներով, փորձով եւ ռեսուրսներով, ինչպես նաեւ պետական եւ իրավաբանական ծառայությունների ներգրավմամբ: Նշված ծառայություններից յուրաքանչյուրը պետք է պատրաստված լինի արձագանքելու եւ մասնակցելու համապատասխան եղանակով:

Այսուհանդերձ, Հայաստանը չունի բազմաոլորտային համակարգ կամ համակարգված արձագանք եւ գործողություններ ո՛չ համայնքային, ո՛չ էլ պետության մակարդակով: Հետեւաբար պետք է սկսել ուժեղացնել համակարգի յուրաքանչյուր բաժին, այնուհետեւ աշխատել համակարգման մեխանիզմների վրա, որպեսզի ընտանեկան բռնության պարագայում պետության արձագանքն ինքնին դառնա բազմաոլորտային:

Վերջին տասը տարիների ընթացքում «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն իր գործունեությամբ կենտրոնացել է բացառապես ընտանեկան բռնության կանխարգելման եւ գենդերային բռնության ենթարկված անձանց օգնություն ցուցաբերելու, ինչպես նաեւ համակարգային անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու հարցերում:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն իր գործունեության ընթացքում մեծ փորձ ունի սեռական բռնությունների եւ ոտնձգությունների հարցերում, մասնավորապես՝ դրանց պատճառների, կանխարգելման, կանանց իրավունքների մասին պաշտպանության կարեւոր հիմնախնդիրներում:

Սույն հետազոտության ամբողջ ընթացքում ներկայացվում են բազմաթիվ օրինակներ՝ վերը նշված երկու կազմակերպությունների աշխատանքի հիման վրա: Այդ օրինակները մատնանշում են համակարգում առկա բացերը: Այս փաստաթղթում առկա բացերի եւ մարտահրավերների լուծման նպատակով ներկայացնում ենք առաջարկներ՝ հիմնված մեր եւ միջազգային լավագույն փորձի վրա: Հայաստանը կարիք ունի կիրառելու լավագույն փորձը՝ պաշտպանելու զոհին, կանխելու ընտանեկան բռնության դրսեվորումներն ու առաջացող հետեւանքները, ինչպես նաեւ ընտանեկան բռնության դեմ պայքարն իրականացնելու ինչպես պետական, այնպես էլ հասարակական մակարդակներով:

II

ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտանեկան բռնության դինամիկան տարբերվում է բռնության այլ ձեւերից: Բռնությունն իրականացվում է այն անձի կողմից, որին բռնության ենթարկվող անձը սիրում եւ վստահում է: Ընտանեկան բռնությունը հանդիսանում է երկարատեւ ուժի եւ վերահսկողության շղթայի օրինաչափության մաս՝ ստեղծելով կախվածություն, որն էլ բարդացնում է բռնության ենթարկվող անձի հեռանալու հնարավորությունը: Հազվադեպ չեն նաեւ այն դեպքերը, երբ ընտանեկան բռնությամբ ավարտվող հարաբերությունները սկսվում են ակնհայտորեն առողջ եւ երջանիկ հարաբերություններով: Փաստորեն, բռնության առաջացման եւ առաջընթացի (էսկալացիա) այս գործընթացը բարդացնում է բռնության ենթարկվող անձի զգացմունքները բռնարարի նկատմամբ եւ դժվարացնում նրանից հեռանալը կամ օգնության դիմելը[1]:

Ընտանեկան բռնության ենթարկված կանայք ֆիզիկական բռնության հետեւանքով վտանգում են առողջությունը եւ ունենում են մի շարք առողջական խնդիրներ: Զոհերը նաեւ գտնվում են սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, չպլա-

1 Տե՛ս «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ, “Guidelines for Domestic Violence Service Providers”, 2016, էջ 13:

նավորված հղիությունների եւ հարկադիր աբորտ կատարելու վտանգի տակ: Շատ դեպքերում էլ ընտանեկան բռնությունը կարող է ավարտվել մահվամբ:

Հոգեբանական տեսանկյունից ընտանեկան բռնությունը կարող է հանգեցնել դեպրեսիայի, անհանգստության, ուտելու խանգարման, ցածր ինքնագնահատականի, խուճապի, ալկոհոլի/թմրանյութերի օգտագործման, ինքնասպանության փորձերի եւ այլ հետեւանքների: Ընտանեկան բռնությունը նաեւ էական ազդեցություն ունի զոհի սոցիալական միջավայրի վրա: Ընտանիքը, ընկերներն ու գործընկերները ռիսկի են դիմում, երբ փորձում են միջամտել կամ օգնել զոհին՝ բռնարար հարաբերություններից հեռանալու համար[2]:

Ընտանեկան բռնության ենթարկված երեխաները կարող են ունենալ զարգացման խնդիրներ, հոգեկան առողջության խնդիրներ, կրթական դժվարություններ, ագրեսիվ վարք եւ ցածր ինքնագնահատական: Ընտանեկան բռնության միջավայրում ապրող երեխաներն ավելի հավանական է, որ կկատարեն հանցագործություն կամ կկիրառեն բռնություն իրենց զուգընկերների նկատմամբ հետագա հարաբերություններում: Նրանք շատ հաճախ ընկալում են բռնությունը որպես ընդունելի վարքագիծ: «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլյան Կոնվենցիա), անհերքելիորեն ընդունում է ընտանեկան բռնության հետեւանքը երեխայի նկատմամբ ե՛ւ որպես բռնության ենթարկվածի, ե՛ւ որպես բռնության ականատեսի[3]:

---

2 Տե՛ս Council of Europe, “Preventing and Combating Domestic Violence against Women: A learning resource for training law enforcement and justice officers”, 2016, էջեր 15-16:

3 Տե՛ս https://rm.coe.int/168008482e:

Ընտանեկան բռնությունը լուրջ հետեւանքներ ունի ամբողջ հասարակության վրա: Այն դրսեւորվում է ոչ միայն բռնության դեմ պայքարի հարցում իրականացվող ծախսերով՝ ներառյալ ուղղակի բժշկական եւ հոգեկան առողջության պահպանման ծառայությունների ծախսերը, այլեւ նվազեցնում է բռնության ենթարկված անձանց ներգրավումը հասարակության մեջ՝ ներառյալ նաեւ աշխատունակության կորուստը:

Կանանց մեկուսացումը, նրանց զրկելը կրթություն ստանալուց կամ աշխատելու հնարավորությունից ոչ միայն աղքատացնում է այդ ընտանիքը, այլեւ նպաստում է Հայաստանում ավելի ցածր սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին[4]:

Երբ բռնարարները պատասխանատվության չեն ենթարկվում, այդ երեւույթը հասարակության մեջ ընկալվում է որպես ընդունելի եւ հանդուրժելի: Նման մոտեցումը կարող է հանգեցնել ավելի լուրջ բռնությունների եւ հետագայում զոհերը ձեռնպահ կմնան բռնության վերաբերյալ հաղորդելուց եւ օգնության դիմելուց:

Իրավիճակի վերլուծություն

Ընտանեկան բռնությունը շարունակում է մնալ շատ լուրջ սոցիալական խնդիր Հայաստանում: 2017 թվականին Հայաստանի ժողովրդագրական եւ առողջապահական հարցերի հետազոտության արդյունքները փաստում են, որ ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված 10 կնոջից 4-ը երբեւէ չեն հանրայնացրել բռնության փաստը[5]: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից 2016 թվականին իրականացված «Տղամար-

4 Տե՛ս Council of Europe, “Police Response to Violence against Women and Domestic Violence in Armenia”, 2018, էջեր 10-11:

5 Տե՛ս https://microdata.worldbank.org/index.php/catalog/2893:

դիկ եւ գենդերային հավասարությունը» սոցիոլոգիական հետազոտության մեջ վեր է հանվում, որ հայ հասարակությունը հակված է արդարացնելու կանանց հանդեպ բռնությունը: Այսպես, հարցվողների 27.7 %-ը կարծում էր, որ *«կանայք որոշ դեպքերում արժանի են ծեծի»*[6]*:*

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի համաձայն՝ 2018 թվականի ընթացքում գրանցվել է ընտանեկան բռնության 707 դեպք, որից 673-ը ֆիզիկական բռնության, 33-ը՝ հոգեբանական, 1-ը՝ տնտեսական: Նշված դեպքերից 441 դեպքում բռնություն է կիրառվել ամուսնու կողմից կնոջ նկատմամբ, 32 դեպքում՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ, 48 դեպքում՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ, 48 դեպքում՝ զավակի կողմից ծնողի նկատմամբ եւ 116 դեպքում՝ ընտանիքի այլ անդամների միջեւ:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում բռնության դեպքերով տրվել է 435 նախազգուշացում եւ 132 անհետաձգելի միջամտության որոշում:

2018 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 519 քրեական գործ, որոնցից ավարտվել է ընտանիքում բռնության վերաբերյալ 393 քրեական գործ: 297 քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 91-ը՝ արդարացման հիմքով, 206-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2018 թվականի ընթացքում ընտանիքում բռնության 406 դեպքի առթիվ հարուցվել է նույնքան քրեական գործ:

---

6 https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf:

Այնուամենայնիվ, գենդերային հիմքով բռնության դեպքերի իրական թիվը հայտնի չէ, քանի որ խնդիրը գաղտնի է եւ ԸԲ աջակցման կենտրոն ՀԿ-ներում ավելի մեծ թվով դեպքեր կան: Գենդերային բռնության հիմնախնդրի ե՛ւ կանանց, ե՛ւ նրանց ընտանիքների վրա դրա ազդեցության վերաբերյալ հրապարակայնորեն չկա պաշտոնական վիճակագրություն:

Վերոնշյալ տվյալներից պարզ է, որ ԸԲ դեպքերի գրեթե կեսը կարճվել է տեսուչի կողմից, որը զոհակենտրոն մոտեցման բացակայության, ինչպես նաեւ հանցավորության բացակայության ապացույց է, որը բռնարարներին թողնում է անպատիժ եւ հուսահատեցնում է կանանց՝ հետամուտ լինելու երկարաժամկետ դատական քննություններին:

III

ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Զեկույցի հիմնական նպատակն է առանձնացնել ընտանեկան բռնության ենթարկված անձանց արդարադատության մատչելիության ապահովման եւ սոցիալական պաշտպանության կազմակերպման շրջանակներում տարբեր գերատեսչությունների աշխատանքի վերաբերյալ առկա հիմնական բացերը Հայաստանում: Այս գործընթացը ներառում է հաստատված միջազգային ստանդարտների եւ պրակտիկայի հետ ուսումնասիրություն եւ համեմատություն, ինչպես նաեւ առաջարկություններ՝ անհրաժեշտ գործնական քայլեր ձեռնարկելու համար:

Սույն զեկույցը բաղկացած է 6 հիմնական հատվածներից, որոնք են՝ Օրենսդրություն, Իրավունքի կիրառում, Սոցիալական ծառայություններ, Առողջապահություն, Կրթություն եւ Խոցելի խմբեր:

Զեկույցի մշակման համար հիմք են ծառայել ազգային օրենսդրությունը եւ պրակտիկան, ՄԱԿ-ի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Եվրոպայի խորհրդի մի շարք փաստաթղթեր, ինչպես նաեւ այլ երկրների առաջադեմ փորձն ընտանեկան բռնության կանխարգելման եւ բացահայտման, ինչպես նաեւ բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում:

Զեկույցի պատրաստման համար իրականացվել են «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի անդամ հասարակական կազմակերպությունների հոգեբանների, սոցիալական աշխատողների, փաստաբանների եւ շահառուների հետ հարցազրույցներ: Հարցազրույցների մի մասը անանուն ձեւով մեջբերված են զեկույցում: Այս զեկույցի մշակման համար հիմք են ծառայել նաեւ ընտանեկան բռնության դեպքերով քրեական եւ քաղաքացիական գործերի ուսումնասիրությունը, դատաիրավական տարբեր գործընթացները եւ սոցիալական պաշտպանության կազմակերպման գործընթացը:

Հարկ է նշել, որ աշխարհում ընտանեկան բռնության ավելի քան 90%-ը իրականացվում է տղամարդու կողմից կնոջ նկատմամբ: Հետեւաբար մենք այն անվանում ենք գենդերային բռնություն, այդ իսկ պատճառով զեկույցում մենք զոհին կանդրադառնանք որպես կին, իսկ բռնարարին՝ որպես տղամարդ:

IV

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸԲ օրենքը, որն ընդունվել է 2018 թվականին, կատարյալ չէ: Այնուամենայնիվ, դա մի քայլ է առաջ: Մի շարք ուսումնասիրություններ, մասնավորապես Եվրոպայի խորհրդի երեք հոդվածներ, անդրադառնում են օրենքում եւ քրեական օրենսգրքում առկա բացթողումներին, ինչպես նաեւ Ստամբուլյան կոնվենցիայի[7] հետ կապված հայկական ԸԲ օրենքի բացթողումներին:

Թերեւս օրենսդրական ամենամեծ խնդիրն այն է, որ մինչ օրս ընտանեկան բռնությունը չի քրեականացվել: Օրենքը պետք է ուշադրություն դարձնի կանխարգելման, պաշտպանության եւ պատժիչ միջոցների վրա: Հայկական ԸԲ օրենքը չի պարունակում պատժիչ միջոցներ: ՀՀ քրեական օրենսգիրքը չի քրեականացնում ԸԲ-ն որպես հանցագործություն:

Ավելին, օրենքում հղումները «ընտանիքում համերաշխությունը վերականգնելու» եւ «հաշտեցման համար» պետք է հանվեն, քանի որ այն արդյունավետ չէ ԸԲ-ի դեպքում եւ խրախուսում է զոհին վերադառնալ բռնարարի մոտ: Ընտրությունը պետք է

7 Տե՛ս https://rm.coe.int/168008482e:

կատարի կինը, այլ ոչ թե թելադրվի պետության կողմից: Հարկ է նշել, որ միջազգային փորձից ելնելով՝ հաշտության կիրառումը, ինքնին, արդյունավետ է կողմերի իրավաբանական հարաբերությունների հավասարության դեպքում: Սա չի համապատասխանում ընտանեկան բռնության զոհի եւ բռնարարի միջեւ փոխհարաբերություններին, որը հիմնված է գենդերային անհավասարության վրա: Ընտանեկան բռնության դեպքում հաշտության կիրառման խնդրահարույց եւ ոչ արդյունավետ լինելու մասին դիրքորոշում է հայտնել նաեւ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին կոմիտեն իր N 33 ընդհանուր հանձնարարականում[8]:

Նաեւ այն սահմանման մեջ, թե ով է ԸԲ-ի զոհ, օրենքում հարկ է ներառել «զուգընկեր» կատեգորիան, ինչպես նաեւ հետապընդումը՝ որպես վերահսկողական վարքագծի ձեւ: Աշխարհում կնասպանությունների 38 տոկոսը կատարվում է ինտիմ զուգընկերոջ կողմից[9]: Զուգընկեր տերմինը վերաբերում է այն հարաբերություններին, որոնք ամուսնությունից դուրս են, բայց այդ հարաբերություններում նույնպես կարող են առկա լինել ընտանեկան բռնության երեւույթներ: Օրենքում հետապնդումը նույնպես պետք է նշվի որպես վերահսկող վարքագիծ: Սրանք ԸԲ-ի այն կողմերն են, որոնց անդրադարձ չի կատարվում ԸԲ օրենքում, իսկ Հայաստանում ԸԲ աջակցման կենտրոնները պարբերաբար հանդիպում են նման դեպքերի:

Ստորեւ ներկայացնում ենք օրենքի ամենակարեւոր ասպեկտները, որոնք պետք է վերանայվեն եւ որոնց հետ մենք հաճախ առնչվում ենք ԸԲ դեպքերի հետ գործ ունենալիս: Տեղեկատվությունը հավաքվել է (ինչպես նշված է ստորեւ) Եվրոպայի Խորհրդ-

---

8 Տե՛ս https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/:

9 Տե՛ս https;//tbinternet.ohcr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/IGlobal/CEDAW_C_GG 33 7767 E.pdf:

դից, Ընտանեկան բռնության վերաբերյալ բացերի վերլուծություններից եւ առաջարկություններից, Ընտանիքում բռնության ենթարկված զոհերի պաշտպանության եւ Ընտանիքում խաղաղության վերականգնման եւ դրան վերաբերող ոստիկանության հրամաններից՝ գրված Լոռի Մաննի կողմից 2019 թ-ին:

- Չնայած ընտանեկան բռնության մասին օրենքում ներառված է ֆիզիկական, սեռական, տնտեսական եւ հոգեբանական բռնությունը, բայց միայն ֆիզիկական եւ սեռական բռնությունն է քրեականացված: Հետեւաբար, ոչ մի քրեական պատժամիջոց չի կարող կիրառվել տնտեսական եւ հոգեբանական բռնության համար:

- 105-րդ հոդվածը մեղմացնում է քրեական պատասխանատվությունը՝ հիմք ընդունելով զոհի կողմից անբարոյական վարքագիծը եւ բռնարարի արժանապատվությանը կամ պատվին հասցված վիրավորանքը: Արդյունքում, որոշ դեպքերում կնոջ սեռական կյանքին վերաբերող պատմությունը կամ դավաճանության մեղադրանքը կարող են արդարացնել տղամարդուն, որի «անմեղսունակության մեջ լինելը» հանգեցրել է սպանության: «Անբարոյական» պահվածքի կարծրատիպային եւ գենդերային հասկացությունների հիմքում ընկած լինելուց բացի՝ այս դրույթն անորոշ է եւ բարձրացնում է իրավական որոշակիության հարցեր՝ կապված դրա կիրառման հետ:

- Վերացնել Քրեական օրենսգրքից 105-րդ հոդվածը, քանի որ դա արդարացնում է բռնությունը՝ հղում կատարելով ավանդական նորմերին, բռնարարի՝ այսպես կոչված «պատվին» կամ արժանապատվությանը եւ անբարոյական պահվածքին:

- Ստեղծել լրացուցիչ ծանրացուցիչ հանգամանքներ՝ հիմնվելով հետեւյալի վրա.

- գենդերային կողմնակալությամբ պայմանավորված հանցագործություններ,
- զենքի գործածմամբ կամ սպառնալիքով կատարված հանցագործություններ,
- երեխայի դեմ կամ նրա ներկայությամբ կատարված հանցագործություններ եւ
- նախկին կամ ներկայիս ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ կատարված հանցագործություններ ընտանիքի անդամի կողմից, զոհի հետ բնակվող անձի կողմից կամ իր լիազորությունները չարաշահող անձի կողմից:

- Ոստիկանության՝ բռնարարներին նախազգուշացում տալը՝ որպես առաջնահերթ որոշում, հանել կիրառումից:
- 7-րդ հոդվածի 1-ին կետը պետք է նախատեսի ԱՄՈ-ի տրամադրում՝ զոհին պաշտպանելու համար՝ առանց հղման, թե արդյոք բռնարարի կատարած բռնությունը հանցագործություն է:
- 9-րդ հոդվածում պետք է ավելացնել դրույթ, որը կերաշխավորի զոհի ծանուցում ստանալը բռնարարին ձերբակալությունից կամ բանտից ազատելիս:
- Անհետաձգելի միջամտության որոշումների եւ պաշտպանական որոշումների խախտումները պետք է հանգեցնեն քրեական, այլ ոչ թե վարչական պատժամիջոցների:
- Փոփոխել ծանուցումների եւ բողոքարկման գործընթացին վերաբերող ընթացակարգերը, որոնք վերաբերում են նա-

խազգուշացումների, անհետաձգելի միջամտության որոշումների եւ պաշտպանական որոշումների տրամադրմանը, որպեսզի ե՛ւ զոհերը, եւ՛ բռնարարները ստանան պատշաճ ծանուցում եւ ունենան բողոքարկելու նույն իրավունքները:

- Այս կարգի մեջ որեւէ հիշատակում չկա խախտումը կատարելու համար պատժամիջոց նշանակելու նպատակով տեղեկատվությունը դատարան փոխանցելու մասին: Քրեական արդարադատության շղթայի գործիչները դեռ չեն գնահատել միջգերատեսչական հաղորդակցության մակարդակը, որն անհրաժեշտ է համակարգի աշխատանքն ապահովելու համար:

- Հանել «ենթադրյալ» տերմինը «Ռիսկի/վտանգի գնահատման» հարցաշարից՝ ընտանիքում բռնության կրկնության կամ բռնության շարունակականության վտանգի գնահատման չափանիշների համար:

- Մասնագիտական ծառայություններ մատուցողների համար ընտանեկան բռնության դեպքերին վերաբերող չափորոշիչները պետք է պահանջեն զոհի համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երեխաների կյանքն ու անվտանգությունը վտանգի տակ է:

- Ընտանեկան բռնության մասին օրենքի 10-րդ հոդվածը պետք է փոփոխվի՝ հաշտեցման ոչ պարտադիր բնույթի վերաբերյալ խառնաշփոթից խուսափելու համար:

Ավելին, զարգացած շատ երկրներ ստեղծել են բարձր ռիսկի մասնագետների խումբ, որոնք կարող են արագ որոշել, թե արդյո՞ք բռնարարը նշանակալի վտանգ է ներկայացնում զոհի կամ նրանց համայնքի համար: Սա կանխարգելման շատ կարեւոր

մեխանիզմ է, որը հնարավորություն է տալիս ոստիկանությանը բանտարկել անձին մինչեւ դատավարությունը: Սա կարող է օգտագործվել հատկապես այն դեպքում, երբ խախտվում են ՊՄ-ները, ինչը համարվում է շատ վտանգավոր:

Զարգացած երկրներում հաստատված պրակտիկան նաեւ այն է, որ այցը երեխաներին դադարեցվի կամ վերահսկվի զոհի համար բարձր վտանգի դեպքում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ բռնարարը թմրանյութ եւ ալկոհոլ է օգտագործում:

V

ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔ

«Թեժ գիծ» ծառայություն

Հայաստանի Հանրապետությունում առկա չէ միասնական ընտանեկան բռնության ազգային «թեժ-գիծ» ծառայություն: Ընտանեկան բռնության ենթարկվող անձինք ունեն հնարավորություն՝ զանգահարելու ՀՀ ոստիկանության ընդհանուր 1-02 հեռախոսահամարին եւ օգնություն խնդրելու, նրանք կարող են զանգահարել ՄԻՊ գրասենյակ՝ իրավական հարցերի դեպքում կամ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության թեժ գիծ: Հիմնականում զոհերը զանգահարում են «թեժ-գիծ» ծառայություններ, որոնք վարում են այն ՀԿ-ները, որոնք զբաղվում են գենդերային բռնության հարցերով (ԳԲՀ): Հարկ է նշել, որ պետական եւ որոշ ՀԿ-ների «թեժ-գիծ» ծառայություններն աշխատում են միայն աշխատանքային ժամերին:

Ընդհանրապես պետական «թեժ-գիծ» ծառայություններ մատուցող անձինք բավարար մասնագիտական վերապատրաստումներ չեն անցել, որպեսզի կարողանան ընտանեկան բռնության ենթարկված անձի կարիքներին համապատասխան գնահատել վտանգի աստիճանը, իրավիճակի հրատապության հարցը կամ քննարկել անվտանգության ծրագրերը: Ավելին, շատ հաճախ

նրանք ընտանեկան բռնությունն ընկալում են որպես «ընտանեկան կոնֆլիկտ», ինչն էլ բերում է ծառայության ոչ պատշաճ մատուցմանը: Առկա չեն նաեւ հստակ մշակված մեթոդոլոգիա եւ ուղղորդման մեխանիզմներ, որոնցով «թեժ-գիծ» ծառայություն մատուցող համապատասխան անձինք պետք է հաղորդակցվեն բռնության ենթարկված անձանց հետ եւ ըստ իրավիճակի ուղղորդեն համապատասխան հաստատություններ:

Հարկ է նշել, որ «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Կոնվենցիա) հստակ սահմանում է, որ պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական եւ այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու առանց հանգստյան օրերի, շուրջօրյա ռեժիմով (24/7) գործող «թեժ գիծ» օգնության անվճար ծառայություն, որը գաղտնիության պահպանմամբ զանգահարողներին խորհրդատվություն կտրամադրի Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձեւերի վերաբերյալ[10] :

Առաջարկներ.

1. **ստեղծել անվճար, առանց հանգստյան օրերի, շուրջօրյա ռեժիմով գործող գենդերային բռնության հարցերով ազգային «թեժ գիծ» օգնության ծառայություն,**

2. **կազմակերպել համապարփակ վերապատրաստումներ (ԳԲՀ)-ով զբաղվող թեժ գծերին պատասխանող բոլոր աշխատակիցների համար:**

---

10 Տե՛ս http://www.who.int/reproductivehealth/publications/violence/9789241564625/en/:

Ոստիկանությունը որպես առաջնային արձագանքող

Ոստիկանության աշխատակիցներն ունեն ամենակարեւոր դերակատարությունն այն իմաստով, որ վերջիններս հանդես են գալիս որպես տեղի ունեցած ընտանեկան բռնության առաջնային արձագանքողներ: Իրենց գործողություններով ոստիկանները պետք է ապահովեն բռնության ենթարկվող անձի, ինչպես նաեւ վերջինիս երեխաների անվտանգությունը եւ արձանագրեն բռնության դեպքը, ինչն օգտագործվում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոց կիրառվող անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կայացման համար:

Ոստիկանության աշխատակիցները պետք է հստակ պատկերացում ունենան, որ հազվադեպ դեպքերում է, երբ բռնության ենթարկված անձն ահազանգում է ոստիկանություն բռնության առաջին դրսեւորման պարագայում: Նշվածը հիմնավորվում է նաեւ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի պրակտիկայում հանդիպած հարյուրավոր դեպքերով, երբ ոստիկանության կողմից իրականացված ռիսկի/վտանգի գնահատմամբ հաստատվել է, որ կինը բռնության է ենթարկվել երկար տարիներ եւ ահազանգել է ոստիկանություն միայն այն պարագայում, երբ իրական է դարձել իր կյանքին սպառնացող վտանգը:

Օրենքով ընտանեկան բռնության կանխարգելման եւ բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության նպատակով ոստիկանությունը պարտավոր է իրականացնել մի շարք գործառույթներ, մասնավորապես՝ արձագանքել ահազանգին, հանգամանքների քննության հիման վրա լրացնել զեկույց, կիրառել նախազգուշացման եւ անհետաձգելի միջամտության որոշումներ եւ զոհին առաջարկել պաշտպանություն

եւ ուղղորդում: Ոստիկանությունը կարող է նաեւ ձերբակալել բռնարարին: Չնայած դրան՝ փորձը ցույց է տալիս, որ երբեմն ոստիկանությունն առավելապես հակված է ստանձնել ընտանիքի հաշտեցման գործառույթը: Սա չի համապատասխանում ոստիկանության՝ օրենքով սահմանված գործառույթներին:

Առհասարակ, դեպքի վայր ժամանելուն պես ոստիկանությունը պետք է համապատասխան փաստեր հավաքի: Նաեւ շատ կարեւոր է, որ դեպքի վայր հասնելուն պես համապատասխան վերապատրաստում անցած ոստիկաններից մեկը, գաղտնիություն ապահովելով, հաղորդակցվի բռնության ենթարկված անձի հետ, մեկ այլ աշխատակից՝ բռնություն գործադրող անձի հետ եւ առանձին նաեւ երեխաների հետ: Սովորաբար, այս պրակտիկան այնքան էլ լավ չի իրականացվում եւ, ընդհանուր առմամբ, ոչ ոք չի խոսում երեխաների հետ, չի արձանագրում, թե արդյոք երեխաները բռնության ենթարկվել են, կամ ականատես են եղել բռնության, կամ վնասվել են: ԸԲ օրենքը չունի բռնության ականատես երեխայի վերաբերյալ պաշտպանության միջոցներ եւ չի պահանջում որեւէ հատուկ գործողություն այն դեպքերում, երբ երեխան ականատես է եղել բռնության կամ վտանգի տակ է:

Ոստիկանության աշխատակիցները պետք է արձանագրեն նաեւ բռնության ենթարկված անձին հասցված վնասվածքների ծանրությունը, բայց դրանք սովորաբար զեկույցում չեն նշվում, կամ պարզապես առկա է միայն վնասվածքի նկարագրությունը: Օրինակ՝ այն բոլոր վնասվածքները, որոնք անտեսանելի են, չեն արձանագրվում: Գլխի կամ կրծքի ծանր հարվածները, որոնք տեսանելի չեն, հազվադեպ են արձանագրվում: Սովորաբար, ոստիկանությունն ուղղակիորեն մեղմացնում է կատարված բռնության աստիճանն իր զեկույցում, եւ բռնություն գործադրող անձի նկատմամբ կիրառվում է միայն նախազգուշացում, նույնիսկ եթե բռնությունը շարունակական է եղել 10 տարիների

ընթացքում: ԸԲ Օրենքի համաձայն՝ նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ բռնության դեպքը ոստիկանությունը հայտնաբերել է առաջին անգամ: Սա ծայրաստիճան սխալ եւ վտանգավոր մոտեցում է, որն ընդունված չէ միջազգային ստանդարտների կողմից (տե՛ս Եվրոպայի խորհրդի ոստիկանության ուղեցույցը): Հաշվի առնելով, որ ԸԲ-ն, ընդհանուր առմամբ, համակարգված եւ շարունակական է, եւ որ մինչ 2019 թվականը ԸԲ արձանագրությունները ոստիկանության կողմից չեն հավաքվել՝ այս մոտեցումը չի ապահովում զոհի անվտանգությունը:

Ոստիկանները պետք է դիտարկեն ներկաների պահվածքը եւ հասկանան, թե ով է ագրեսիվ, ով է վախենում, ով է տրավմայի ենթարկված: Նրանք պետք է նկատեն ցանկացած կոտրված իր եւ պայքարի/կռվի նշաններ փնտրեն: Սովորաբար, այս էական տեսակետներից ոչ մեկը չի արձանագրվում ոստիկանության զեկույցում: Ոստիկանությունը պետք է նաեւ վկաներ փնտրի, օրինակ՝ հարեւաններ կամ հարազատներ եւ ուշադիր լինի՝ հասկանալու համար արդյո՞ք նրանք անկողմնակալ են, թե՞ ոչ: Կրկին, սովորաբար դա չի արվում ոստիկանության կողմից[11]:

Առաջարկներ.

1. **մշակել համապատասխան մեխանիզմներ (այդ թվում նաեւ իրավական)՝ բռնության առաջնային արձագանքի իրականացման ընթացքում բռնության ենթարկված անձանց, ինչպես նաեւ բռնությանն ականատես երեխաներին զոհակենտրոն մոտեցում ապահովելու նպատակով,**

11 Տե՛ս https://womensupportcenter.org/assets/PDF%20publications/EUR%20ENG%20FINAL.pdf:

2. **իրականացնել ոստիկանության բոլոր աշխատակիցների շարունակական եւ համալիր վերապատրաստումներ գենդերային բռնության եւ ընտանեկան բռնության վերաբերյալ:**

Աշխատանք բռնության ենթարկված անձի հետ

Մենք նկատել ենք ոստիկանության կարեկցանքի պակասը զոհերի նկատմամբ: Հաշվի առնելով հայ հասարակության հայրիշխանական լինելու հանգամանքը՝ նկատելի է, որ առավել կարեվորություն է տրվում տղամարդկանց իրավունքների ապահովմանը նույնիսկ այն պարագայում, երբ նրանք բռնարար են:

Ոստիկանության աշխատակիցների պատշաճ վերապատրաստվածության բացակայությունը հանգեցնում է բռնության ենթարկված անձի նկատմամբ սխալ/ոչ մասնագիտական վերաբերմունքի (հարցին ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում ստորեւ քննարկվող անհետաձգելի միջամտության որոշման բաժնում): Նման դասընթացների համար կան շատ ռեսուրսներ: Այս իմաստով վերապատրաստումների իրականացման հարցում օգտակար գործիքակազմ է մշակվել դեռեւս 2018 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից հրատարակված «Հայաստանում ոստիկանության արձագանքը կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության նկատմամբ» ուղեցույցում:

Ի թիվս այլ առանձնահատկությունների՝ ուղեցույցում անդրադարձ է կատարվում այն հարցին, որ բռնության ենթարկված անձի հետ հաղորդակցվելիս ոստիկանության աշխատակիցները պետք է ստեղծեն վստահության մթնոլորտ: Հարցազրույցի ժամանակ մարմնի լեզուն շատ կարեւոր է վստահություն հաստատելու համար, ինչպես նաեւ այն կարեւոր է, որ ոստիկանության աշխատակիցը չպետք է հանդես գա որպես դատավոր:

Ոստիկանության դերն է *«ապահովել բռնության ենթարկված անձի անվտանգությունը, պատասխանատվության ենթարկել բռնարարին եւ անհրաժեշտության դեպքում կիրառել պաշտպանական որոշումներ: Ոստիկանի սեփական պատկերացումները, արժեքներն ու կարծիքները չպետք է արտահայտվեն բռնության ենթարկված անձի հետ հաղորդակցման ընթացքում»*[12]*: ԿԱԿ-ի շահառուների հետ քննարկումներից տեղեկացանք, որ այդ մեթոդները հազվադեպ են կիրառվում: Ավելի հաճախ դրանք անտեսվում են:*

Ոստիկանությունը նաեւ պետք է պատրաստ լինի զբաղվել երեխաների խնդիրներով: Մենք հարցաքննված երեխաների նույնիսկ մեկ օրինակ չունենք, եւ Հայաստանում քիչ թվով ոստիկաններ կան, որոնք որակավորված են հարցաքննել երեխաներին: Երեխաներին պետք է նաեւ ասել, որ իրենք դժվար կացության մեջ չեն եւ ոչ մի վատ բան չեն արել: Նրանք հաճախ հավատում են, որ իրենք են բռնության պատճառ հանդիսանում, եւ պետք է նրանց վստահեցնել, որ դա այդպես չէ:

Առաջարկներ.

1. **իրականացնել գենդերային բռնության հիմնահարցերի, բռնության կանխարգելման, բռնության ենթարկված անձանց կարիքներին համապատասխան արձագանքման մեխանիզմների վերաբերյալ համապարփակ վերապատրաստումներ,**

2. **իրականացնել հատուկ վերապատրաստումներ ոստիկանության աշխատակիցների հետ՝ ընտանեկան բռնության դեպքերում երեխաների հետ ճիշտ հաղորդակցվելու համար,**

12 Ibid էջ 23:

3. **վերանայել զեկույցի ձեւը՝ այն դարձնելով առավել համապարփակ, որպեսզի դրանք կարողանան հիմք հանդիսանալ որպես դատական ապացույց:**

Բռնարարի պատասխանատվությունը

Քանի դեռ ոստիկանությունը պատշաճ գործողություններ չի ձեռնարկել բռնարարների նկատմամբ, տիրելու է անպատժելիության մթնոլորտ, որը թույլ կտա բռնարարներին շարունակել իրենց գործողությունները: Ավելին, պետության, ներառյալ ոստիկանության պարտականությունն է բռնարարներին պատասխանատվության ենթարկել: Դա չի կարող տեղի ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ ոստիկանությունն այս դեպքերը դիտում է որպես «ընտանեկան կոնֆլիկտ» եւ չի հասկանում ԸԲ-ի դինամիկան: Շատ հաճախ բռնարարներին պատասխանատվության ենթարկելու փոխարեն տեղի է ունենում հակառակը, եւ ոստիկանությունը բռնարարի իրավունքներն ավելի բարձր է դասում զոհի իրավունքից: Երբ պետք է բռնարարին տանից հանել, մենք լսում ենք, որ ոստիկանության աշխատակիցները ասում են այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ «Խեղճ մարդ, ո՞ւր է գնալու», «Մենք չենք կարող մարդուն հանել իր տանից» եւ նույնիսկ՝ «Ոչ ոք չի մտածում տղամարդու իրավունքների մասին»:

Բռնարարի պատասխանատվությունը հետագայում կքննարկվի դատական համակարգ բաժնում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նախադեպային իրավունքով հաստատված «Օփուզն ընդդեմ Թուրքիայի»[13] գործով

---

13 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Օփուզն ընդդեմ Թուրքիայի» գործով որոշումը, https://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-92945-&filename=001-92945.pdf:

ճանաչեց, որ պետությունը հաշվետու պետք է լինի այն բոլոր դեպքերում, երբ ձախողել է պաշտպանել կանանց իրավունքներն ընտանեկան բռնությունից: «Օփուզն ընդդեմ Թուրքիայի», հետագայում նաեւ «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի»[14] գործերով նախադեպային վճիռները հիմք ծառայեցին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչի կանանց նկատմամբ բռնությունը որպես համակարգային խնդիր, որն արտացոլում է ուժերի անհավասար բաշխումը: Իշխանության այս անհավասարությունը ներկայումս առկա է գենդերային ուժեղ կարծրատիպերով հայրիշխանական հասարակություններում, որոնք նվազեցնում են կանանց դերն ու արժեքը եւ նախապատվությունը տալիս տղամարդկանց, որոնց ընձեռվում է գերակա դիրք:

Առաջարկ.

1. **իրականացնել գենդերային բռնության հիմնահարցերի եւ ընտանեկան բռնության ենթարկված անձանց կարիքներին համապատասխան արձագանքման մեխանիզմների վերաբերյալ համապարփակ վերապատրաստումներ:**

Ոստիկանության արձագանքի հետ կապված այլ խնդիրներ

Կան մի շարք խախտումներ, որոնք իրականացնում է ոստիկանությունը: Այս խախտումները պարտադիր չէ, որ օրենքի խախտումներ լինեն, քանի որ օրենքը կամ ոստիկանության ներքին մեխանիզմները չեն վերաբերում այդ վարքագծերին: Այնուամե-

---

14 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի» գործով որոշումը, https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/Kontrova%20v.%20Slovakia_en.asp:

նայնիվ, հաշվի առնելով ԸԲ-ի լավագույն փորձը՝ ոստիկանության գործողությունները լիովին անպատշաճ են: Նույնիսկ երբ օրենքը պահանջում է գործողություն, ոստիկանությունը դա չի կիրառում: Օրինակ՝ եթե զոհը հղի է, եւ բռնարարը ծեծում է նրան, ապա բռնարարը պետք է կալանավորվի եւ պատասխանատվության ենթարկվի, քանի որ դա քրեական օրենսդրությամբ նախատեսված լուրջ հանցագործություն է: Փոխարենը ոստիկանությունը տալիս է ընդամենը 10 օր ԱՄՈ:

Բացի դրանից՝ հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ ոստիկանությունը մեղադրում է բռնության ենթարկված կնոջը կատարված բռնության համար, ինչի հետեւանքով նաեւ փոխվում է նրանց ներկայացրած հաղորդման ծանրության աստիճանը: Տրավմայի եւ դրա ազդեցության վերաբերյալ վերապատրաստումների բացակայության պատճառով ոստիկանությունը հաշվի չի առնում, որ զոհերը տրավմատիզացված են եւ դրսեւորում են տրավմատիկ վնասվածքի ախտանիշներ, ինչպիսիք են հիշելու, կենտրոնանալու, արտահայտվելու կամ որոշում կայացնելու դժվարությունները:

Մեկ այլ դեպքում, երբ կինը ենթարկվել էր ծանր բռնության, ընդհուպ մինչեւ բռնարարը հասցրել էր նրան ինքնասպանության փորձի, ոստիկանությունը բռնարարի նկատմամբ կայացրել էր ԱՄՈ 7 օր ժամանակահատվածով: Մեկ այլ դեպքում կինը ստիպված էր եղել փախչել բռնարարից՝ վերջինիս հետ թողնելով իրենց անչափահաս 5 երեխաներին: Երբ կինը եկել էր տեսակցելու իր երեխաներին, բռնարարը զանգահարել էր ոստիկանություն, եւ ոստիկանության աշխատակիցները որոշել էին 20 օր ժամանակահատվածով կնոջ նկատմամբ կիրառել ԱՄՈ:

Մենք նաեւ նկատել ենք, որ երբեմն ոստիկանությունը ի վիճակի չէ պարզել, թե ով է բռնարարը: ՀՀ Արարատի մարզի ոստի-

կանության հետ հանդիպման ժամանակ նշվեց, որ արձանագրված դեպքերից 40%-ի պարագայում բռնություն գործադրող անձինք կանայք են: Թեպետ Հայաստանում առկա են ընտանեկան բռնության մի շարք դեպքեր, երբ սկեսուրները բռնություն են գործադրում հարսների նկատմամբ, այնուամենայնիվ ոստիկանության վերոգրյալ տվյալների համաձայն՝ նշված 40% դեպքերում տղամարդիկ էին ենթարկվել բռնության կանանց կողմից: Նշված ցուցանիշը բավականին հակասական է եւ չի համապատասխանում աշխարհի բոլոր մյուս մասերից ստացված զեկույցներին: Սա հիմք է տալիս ենթադրելու՝ արդյո՞ք բոլոր դեպքերում ոստիկանության աշխատակիցները կարողանում են տարանջատել բռնության ենթարկվող անձին բռնարարից կամ թե արդյո՞ք նրանք հասկանում են ԸԲ- ի դինամիկան: Օրինակ՝ երբեմն, երբ կինն ինքնապաշտպանության գործադրմամբ վնասում է տղամարդուն, ոստիկանությունն արձանագրում է կնոջ կողմից ֆիզիկական բռնության գործադրման դեպք տղամարդու նկատմամբ:

Մեկ այլ դեպքում բռնարարն ու նրա ընտանիքը հայտնել են, որ զոհը հոգեկան անկայուն վիճակում է, եւ ոստիկանությունը կնոջը հարցաքննելու փոխարեն վստահել էր ընտանիքի անդամների խոսքին: Ոստիկանների հետ քննարկումից, ինչպես նաեւ բռնության արձանագրությունից պարզ է դարձել, որ կինն ամուսնու եւ սկեսրոջ կողմից պարբերաբար ենթարկվել է ընտանեկան բռնությանը բնորոշ վերահսկվող վարքագծի, սպառնալիքների եւ հարկադրանքի: Հասկանալի էր, որ բռնարարներն այս դեպքում ամուսինն ու սկեսուրն էին: Սակայն ոստիկանությունը ԱՄՈ տվեց զոհին՝ դրանով իսկ թույլ չտալով, որ նա գնա բռնարարի տուն՝ տեսնելու իր նորածին երեխային:

Ինչպես վերը նշվեց, մենք նկատել ենք, որ ոստիկանության աշխատակիցները դեպքը չեն որակում իբրեւ ԸԲ, քանի դեռ զոհի վրա չկան ֆիզիկական բռնության հետքեր: Արդյունքում, եթե զոհը չի

ենթարկվել ֆիզիկական ծեծի, սակայն փոխարենը շատ լուրջ էմոցիոնալ բռնություն է գործադրվել այն աստիճանի, որ նրան հասցրել է ինքնասպանության, ապա դա դեռ չի համարվում ԸԲ:

Թե՛ ոստիկանությունը, եւ թե՛ քննիչները շատ վատ պատկերացում ունեն զոհի՝ որպես ԸԲ վերապրածի իրավիճակի եւ մտավոր վիճակի մասին: Զոհերը հաճախ ապրել են բռնարարի հետ երկար տարիներ: Նրանք ձեռք են բերել հաղթահարման ռազմավարություններ՝ նրանց հնարավորություն տալու համար գոյատեւել հարաբերությունների մեջ նույնիսկ այն դեպքում, երբ նրանք ապրում են տրավմատիկ իրավիճակներում: Եթե հարցազրույց վարողը պատշաճ կերպով չվերապատրաստվի, ապա կարող է սխալ գործել կամ չհասկանալ իրավիճակը եւ զոհի հանդեպ կարեկցանք չդրսեւորի: Քանի որ ԸԲ զոհերը հակված են նվազեցնել/մեղմացնել բռնությունը, բռնարարին արդարացնել, ուրիշներին մեղադրել բռնարարի փոխարեն, կարող են ստել կատարվածի մասին, կամ լինել ագրեսիվ, կամ ընդհանրապես խուսափել խոսել այդ թեմայի շուրջ եւ նույնիսկ վերցնել մեղքն իրենց վրա: Քննիչները պետք է կարողանան հասկանալ զոհի նման պահվածքը: Երբեմն զոհը կարող է դրսեւորել տարբեր վարքագծեր՝ ծիծաղել, երբ տեղին չէ, կամ լինել ընկճված եւ չարձագանքել հարցերին: Այս վարքագիծը քննողները կրկին կարող են սխալ մեկնաբանել եւ հանգեցնել սխալ գնահատականի, որն էլ ավելի կվնասի զոհին:

Ոստիկանության ԸԲ դեպքերի վարման հետ կապված վերը նշված բոլոր հիմնախնդիրները բխում են այն փաստից, որ ոստիկանությունը ընտանեկան բռնության վերաբերյալ պատշաճ վերապատրաստում չի ստանում:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի կողմից ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացված դասընթացի արդյունքները փաստում էին, որ վերջիններս չեն տիրապետում խնդրին, եւ որ

նրանց ուսումնառության նյութերը, մեթոդաբանությունը թերի են եւ չեն համապատասխանում վերապատրաստման չափորոշիչներին: Ելնելով ոստիկանության աշխատակիցների տված հարցերից կամ այն հարցերից, որոնց նրանք այդպես էլ չկարողացան պատասխանել՝ պարզ էր, որ նախկինում այդ աշխատակիցները պատշաճ վերապատրաստում չեն անցել: Մենք բազմիցս խնդրել ենք տեսնել ոստիկանության վերապատրաստման ձեռնարկը, բայց դա մեզ չի տրամադրվել: Մենք նաեւ չգիտենք, թե ԸԲ վերապատրաստման քանի՞ պարտադիր դասաժամ պետք է անցնի ոստիկանության աշխատակիցը Հայաստանում: Միջազգային չափանիշների համաձայն՝ առնվազն 40 ժամ է նախատեսված տարեկան վերապատրաստումների համար:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի կողմից ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ընտանեկան բռնության վերաբերյալ անցկացվող դասընթացների (տեսական/պրակտիկ մաս) մասին հարցմանն ի պատասխան տեղեկանում ենք, որ հիմնական առարկաները մասնագետներն անցնում են 2-4 ժամ տեւողությամբ: Միայն 2020 թվականին ներդրված «Ընտանիքում բռնության կանխարգելման իրավական հիմքերը» մագիստրոսական կրթական ծրագրի դեպքում է հատկացված 30 ժամ տեւողությամբ դասախոսություն, 6 ժամ տեւողությամբ սեմինար եւ 54 ժամ տեւողությամբ ինքնուրույն աշխատանք: Հարկ է նշել, որ ընտանեկան բռնության դեպքերով աշխատող ոչ բոլոր ոստիկաններն են անցնում նշված մագիստրոսական ծրագիրը: Հետեւաբար ընտանեկան բռնության դեպքերով աշխատող ոստիկանների գերակշիռ մեծամասնությունը ձեռք է բերում գիտելիքներ 2-4 ժամ տեւողությամբ դասընթացների ընթացքում: Անհերքելի է, որ նշված ժամաքանակի ընթացքում ոստիկաններն չեն կարող ձեռք բերել խորքային եւ պրակտիկ գիտելիքներ ընտանեկան բռնության վերաբերյալ: Համեմատության համար հարկ է նշել, որ միջազգային չափանիշների համապատասխան՝ այդ դասընթացները պետք է լինեն նվազագույնը 40 ժամ տեւո-

ղությամբ այն էլ գենդերային զգայունություն ունեցող մասնագետների դեպքում[15]:

Առաջարկներ.

1. **ոստիկանության բոլոր աշխատակիցները, որոնք ընդունվում են ոստիկանության ծառայության, պետք է առնվազն 40 ժամ վերապատրաստման դասընթաց անցնեն ընտանեկան բռնության վերաբերյալ՝ հիմնվելով միջազգայնորեն հաստատված ուսումնական ծրագրի վրա,**

1. **ընտանեկան բռնության դեպքերի հետ անմիջականորեն աշխատող ոստիկանները պետք է անցնեն լրացուցիչ խորացված վերապատրաստում:**

Երբ ոստիկանը բռնարար է

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն իր գործունեության ընթացքում հանդիպել է որոշակի դեպքերի, երբ բռնություն գործադրող անձը եղել է ոստիկանության աշխատակից: Այդ դեպքերում մենք նկատել ենք, որ նույն համակարգում գործունեություն ծավալող անձինք ոչ միայն կողմնակալ մոտեցում են ցուցաբերել բռնության ենթարկված անձի նկատմամբ, այլեւ սպառնացել են վերջինիս, ինչպես նաեւ կազմակերպության աշխատակիցներին: Դեպքերից մեկի ժամանակ, երբ բռնության ենթարկված անձը կազմակերպության սոցիալական աշխատողի եւ իրավաբանի հետ ժամանել է ոստիկանության բաժանմունք, նրան դիմել են *«Հ ոստիկանի կին»* արտահայտությամբ եւ այդ նույն

15 Տե՛ս https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4231530/:

ժամանակահատվածում բռնություն գործադրող ոստիկանության այդ աշխատակիցն իր գործընկերների հետ սուրճ խմելիս եւ կատակներ անելիս է եղել:

Նման իրավիճակում բռնության ենթարկված անձը վստահություն չի կարող ունենալ իր նկատմամբ կատարվող բռնության դեպքի օբյեկտիվ քննության հանդեպ:

Հայտնի է, որ աշխարհի տարբեր մասերում եղել են բռնարարներ, որոնք զբաղեցրել են այնպիսի պաշտոններ, ինչպիսիք են դատավոր, ոստիկան, քննչական մարմնի աշխատակից եւ պաշտոնատար այլ անձինք: Սակայն Հայաստանում առկա չեն հստակ մեխանիզմներ եւ ընթացակարգեր՝ հեռացնելու այդպիսի անհատներին ԸԲ դեպքերը քննելիս կամ դատելիս, ինչպես արվում է մյուս երկրներում:

Առաջարկներ.

2. **մշակել մեխանիզմներ՝ իրավապահ համակարգում գենդերային բռնություն գործադրող աշխատակիցների բացահայտման եւ համակարգից նրանց հեռացման ուղղությամբ,**

3. **տալ պատժամիջոցներ ցանկացած ոստիկանի, որը աջակցում է մեկ այլ ոստիկանի՝ գործելու ԸԲ զոհի դեմ:**

Անհետաձգելի միջամտության որոշում եւ նախազգուշացում

Բռնության մասին հաղորդում ներկայացնելը կարող է ավելի զայրացնել բռնարարին. այդ իմաստով շատ կարեւոր է, որ ոստիկանության աշխատակիցները հնարավոր բոլոր քայլերը ձեռ-

նարկեն՝ պաշտպանելու բռնության ենթարկված անձին եւ նրա երեխաներին: Պրակտիկայում դա կարծես թե մնում է անկատար: ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2019 թվականին ընտանեկան բռնության վերաբերյալ ստացված ահազանգերի 75%-ով ոստիկանությունը կայացրել է նախազգուշացման որոշում: Նախազգուշացումն արդյունավետ պաշտպանության միջոց չէ, ինչը փաստում են նաեւ հարցի վերաբերյալ այլ երկրների փորձն ու մի շարք միջազգային կազմակերպությունների հրապարակումները:

Միջազգային փորձագետների՝ ոստիկանության աշխատակիցների հետ վերապատրաստումների ընթացքում բազմիցս նշվել է, որ նախազգուշացումների կիրառումը պետք է դադարեցվի հատկապես կրկնվող բռնությունների դեպքերում: Փոխարենը ոստիկանության աշխատակիցները պետք է վստահություն ունենան բռնության վերաբերյալ հաղորդում ներկայացրած անձի նկատմամբ եւ ապահովեն վերջինիս անվտանգությունը:

ԸԲ դեպքերին արձագանքելու գործընթացն անհրաժեշտ է արագացնել: Ներկայումս այցի մասին զեկույցը լրացնելուց հետո կարող է մի քանի օր տեւել, մինչ գործը կորակավորվի որպես ընտանեկան բռնության դեպք, եւ այդ վճիռ կայացնողները ո՛չ տեսել են հանցագործության դեպքի վայրը, եւ ո՛չ էլ զոհին: Այդ ընթացքում զոհը վտանգի մեջ է: Անհրաժեշտ է անհապաղ արձագանքել, եթե զոհը պաշտպանության կարիք ունի եւ տեղում տալ ԱՄՈ:

ԱՄՈ-ի կիրառումը շատ հաճախ արվում է կամայական եւ սուբյեկտիվորեն: ԱՄՈ-ն պահանջում է, որ բռնարարը հեռացվի տանից եւ չմոտենա կամ շփվի զոհի, երեխաների եւ ընտանիքի մյուս անդամների հետ՝ մինչեւ 20 օր: Ոստիկանները վերապահումով են մոտենում բռնարարին, եւ ԱՄՈ-ն տրվում է ընդամենը 1-ից 5 օրով, ինչը զոհին շատ քիչ ժամանակ է տալիս՝ կողմնորոշվելու հետագա անելիքների մասին՝ պլանավորել իր անվտանգությու-

նը եւ դիմել աջակցության կենտրոնի: Հաշվի առնելով պրակտիկայում անմիջական միջամտության վերաբերյալ առկա խնդիրը՝ 2019 թվականին օրենքում նախատեսվող փոփոխությունների իրականացման ընթացքում առաջարկվել էր անհետաձգելի միջամտության որոշման համար սահմանել 20 օր՝ առանց նշված ժամանակահատվածի կրճատման հնարավորության:

Անհետաձգելի միջամտության տրամադրման գործընթացն առավել բարդանում է, երբ անհետաձգելի միջամտության որոշումը չի տրվում տեղում, եւ ոստիկանության աշխատակիցները մեկ անգամ եւս բռնության ենթարկված անձին անհարկի կանչում են ոստիկանության համապատասխան բաժանմունք: Սա անհարկի եւ բյուրոկրատական պրակտիկա է, որը հաշվի չի առնում զոհի անվտանգությունն ու բարեկեցությունը: Շատ հաճախ կանայք ուղղակի չեն կարողանում ներկայանալ ոստիկանության բաժանմունք, քանի որ չեն կարող իրենց անչափահաս երեխաներին մենակ թողնել տանը: Եղել են դեպքեր, երբ զոհին հրավիրել են գիշերվա կեսին ոստիկանության բաժին, ինչի անհրաժեշտությունը չկա:

Նախկինում ոստիկանության կողմից կայացված անհետաձգելի միջամտության որոշման պատճենը տրամադրվում էր միայն բռնարարին: Արդյունքում բռնության ենթարկված անձը մնում էր առանց իր պաշտպանվածությունը փաստող որեւէ փաստաթղթի: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի միջամտության շնորհիվ այժմ բռնության ենթարկված անձը ստանում է անհետաձգելի միջամտության որոշման իր պատճենը:

Ակնհայտ է, որ ոստիկանության աշխատակիցները պետք է վերապատրաստման դասընթացներ անցնեն, թե ինչպես քննել եւ արձանագրել ԸԲ դեպքերը: Ոստիկանական հարցաթերթերը նույնպես պետք է փոփոխվեն՝ զեկույցում անհրաժեշտ տեղեկատվություն ներառելու համար: Վերոնշյալի հետեւանքով

ԿԱԿ-ի շահառուներից շատերը հայտնում են, որ չեն ցանկանում գործ ունենալ ոստիկանության հետ, քանի որ ոստիկանությունից պաշտպանություն չեն ստանում: Մի կին պատմում է՝ «Երբ ես լսեցի օրենքի մասին, ես զանգահարեցի ոստիկանություն բռնության դեպքից հետո: Նրանք եկան եւ նախազգուշացման թուղթ տվեցին իմ ամուսնուն: Նրանց գնալուց հետո նա դաժանաբար ծեծի ենթարկեց ինձ: Ես մտածեցի, որ ես կմահանամ, եւ նա նախազգուշացրեց ինձ, որ այլեւս ոստիկանություն չզանգահարեմ, հակառակ դեպքում նա ինձ կսպանի»: Ոստիկանության աշխատակիցները պնդում են, որ նախազգուշացումների շնորհիվ դադարում է բռնությունը, քանի որ նրանք չեն ստանում հետագա բռնության դեպքերի մասին հաղորդագրություններ: Սա ամբողջովին անհիմն է եւ չի ընդունվում միջազգային լավագույն փորձի կողմից:

Առաջարկներ.

1. **ԸԲ օրենքում կատարել փոփոխություններ եւ բացառել նախազգուշացումը՝ որպես պաշտպանության միջոց,**

2. **անհետաձգելի միջամտության որոշման համար ժամեկտ սահմանել 20 օր, երբ ռիսկի/վտանգի գնահատումը ցույց է տալիս, որ բռնությունը տեղի է ունեցել մի քանի անգամ,**

3. **չպարտադրել զոհին ներկայանալ ոստիկանության բաժին հավելյալ թղթաբանության համար առավել եւս այն դեպքում, երբ երեխաները պետք է մնան առանց հսկողության: Ընտանեկան բռնության դեպքերում նվազագույնի հասցնել բռնության ենթարկված անձանց համար առկա թղթաբանությունը,**

4. **պարտադիր տրամադրել աջակցության կենտրոնների «թեժ-գիծ» ծառայության տվյալները, որտեղ բռնության ենթարկված անձը կարող է ստանալ մասնագիտացված աջակցություն:**

Վերահսկողություն

Օրենքի համաձայն՝ ոստիկանությունը հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշման կիրառման դեպքում (ՊՆ-ների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս ստորեւ բաժինը): ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ օրենքով նախատեսված անհետաձգելի միջամտության եւ պաշտպանական որոշումների պահանջները բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով:

Մեզ հայտնի տեղեկատվությամբ դեռեւս որեւէ բռնարար չի ենթարկվել քրեական օրենսգրքով նախատեսված այս պատասխանատվությանը: Ավելին, ոստիկանության աշխատակիցը պետք է տեղում ձերբակալի բռնարարին, եթե տեղի է ունեցել լուրջ բռնություն եւ անմիջապես կիրառի ՊՄ: Կրկին, նման դեպք չի արձանագրվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունեցել սպանություն:

Առաջարկներ.

1. **խստագույն պատիժ կիրառել ԱՄՈ-ների խախտումների դեպքում,**

2. **դատարանի որոշմամբ 24 ժամվա ընթացքում կիրառել ՊՄ-ներ (ներառյալ հանգստյան օրերն ու արձակուրդը),**

3. **փոփոխել ԸԲ օրենքը, որպեսզի բռնի եւ վտանգավոր հանցագործություն կատարած անձանց կալանավորումն ու ձերբակալությունն ավելի հաճախ կատարվի զոհի պաշտպանությունը ապահովելու համար, ինչպես նաեւ՝ որպես հասարակությանը ուղղված ուղերձ, որ նման պահվածքը հանդուրժելի չէ:**

Ռիսկի/վտանգի գնահատում

Ընտանեկան բռնության ենթարկված անձի նկատմամբ առկա վտանգներն ու սպառնալիքները գնահատելու նպատակով ոստիկանությունը կատարում է ռիսկի/վտանգի գնահատում: Սա շատ կարեւոր գործիք է՝ կանխարգելելու բռնության հնարավոր հետագա դրսեւորումներն ինչպես բռնության ենթակված անձի, այնպես էլ նրա երեխաների համար: Ներկայումս ՀՀ ոստիկանության կողմից կիրառվող ռիսկի/վտանգի գնահատման հարցաշարն ունի մի շարք խնդրային կողմեր: Հարցաշարում ներառված է 21 հարց, որոնցից 7-ն առհասարակ անհրաժեշտ չեն հստակեցնելու բռնության ենթարկված անձի համար վտանգի առկայությունը: Փոխարենը մի շարք կարեւոր հարցեր, ինչպիսիք են բռնության ենթարկված անձին հասցված վնասվածքները, դրանց ծանրության աստիճանը, բռնության հաճախականությունը, առհասարակ ներառված չեն հարցաշարում: Խնդրահարույց են նաեւ որոշ հարցերի ձեւակերպումները: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ջանքերով որոշ հարցեր այնուամենայնիվ դուրս են եկել սկզբնական հարցաշարից, որոնք չէին համապատասխանում ոլորտում առկա միջազգային լավագույն չա-

փանիշներին, այլ կարծես նախատեսված էին զոհին սպառնացող վտանգը նվազեցնելու համար, որպեսզի ոստիկանությունը ստիպված չլինի ԱՄՈ-ներ տալ եւ բռնարարին տնից հանել: Տե՛ս Հավելված Ա-ն՝ ՀՀ ոստիկանության եւ միջազգային կազմակերպությունների լավագույն փորձի կիրառման համեմատությունը:

Խնդրահարույց է նաեւ ոստիկանության՝ ռիսկի/վտանգի գնահատման անցկացնելու գործընթացը: Ոստիկանության աշխատակիցն առհասարակ չի բացատրում բռնության ենթարկված անձին, թե ինչու են նրան տալիս այդ հարցերը: Պրակտիկայում ոստիկանը պարզապես արագ ընթերցում է հարցը, մինչդեռ շատ հաճախ բռնության ենթարկված անձը ի վիճակի չի լինում ըմբռնել հարցերի բովանդակությունը: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ ոստիկանությունը գնահատել է, որ վտանգավորության աստիճանը ցածր է: Մինչդեռ նույն հարցաշարում ընդգրկված հարցերը բռնության ենթարկված անձին ուղղել է կազմակերպության ներկայացուցիչը, եւ արդյունքում արձանագրվել է վտանգավորության բարձր աստիճան: Շատ հաճախ նույնիսկ այն պարագայում, երբ ռիսկի/վտանգի գնահատման արդյունքում ոստիկանությունն արձանագրում է վտանգավորության բարձր աստիճան, միեւնույն է բռնության ենթարկված անձի նկատմամբ կիրառվում է նախազգուշացում, ինչն առհասարակ չի պաշտպանում բռնության ենթարկված անձին: Հետագա բռնությունը կանխելու այս ամենակարեւոր քայլը պատշաճ չի կատարվում:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի փորձը ցույց է տալիս, որ ռիսկի/վտանգի գնահատման ընթացքում շատ ճշգրիտ է զոհի սեփական դիտարկումը: Նման իրավիճակում այնպիսի արտահայտություններ, ինչպիսին է *«նա ինձ կսպանի»*, չպետք է անտեսվի: Ցավոք, նման մոտեցում առկա չէ ոստիկանության՝ ռիսկի/վտանգի գնահատման գործընթացում: Սա եւս մեկ անգամ փաստում է համակարգի ոչ զոհակենտրոն լինելու մասին:

Ռիսկի/վտանգի գնահատման գործընթացում խնդրահարույց են նաեւ կազմված հարցաշարում օգտագործվող բառերը: Հարցերը ձեւակերպված են այնպես, որ զոհակենտրոն չեն: Օրինակ, երբ ոստիկանը փորձում է իմանալ՝ արդյոք բռնարարը ծեծել է զոհին հղիության ընթացքում, համապատասխան հարցը ձեւակերպվում է հետեւյալ կերպ. *«<u>Ենթադրաբար</u> բռնություն գործադրած անձը Ձեր հղիության ընթացքում (եթե նա տեղյակ էր հղիության մասին) գործադրե՞լ է բռնություն:»: Մենք առաջարկում ենք, որ ռիսկի/վտանգի գնահատման հարցաշարը վերանայվի՝ ինչպես բովանդակությունը, այնպես էլ ձեւակերպումները, եւ հարցաշարից պետք է հանել բռնարարի համար գործածվող «ենթադրաբար» բառը. տե՛ս Հավելված 1:*

Առաջարկներ.

1. **ռիսկի/վտանգի գնահատման հարցաշարը փոփոխել, հարցաշարից հանել «ենթադրաբար» բառն ու այն համապատասխանեցնել միջազգային չափանիշներին,**

2. **վերապատրաստել ոստիկանության աշխատողներին՝ ռիսկի/վտանգի գնահատման հարցաշարը վարելու համար:**

Բռնություն գործադրող անձին ոստկանության հաշվառումից հանելը

ԸԲ օրենքում նշվում է, թե երբ է բռնություն գործադրող անձի անունը հանվում ոստիկանության հաշվառումից: Այնուամենայնիվ, սա ամենեւին էլ չի համապատասխանում հետագա բռնության կանխարգելման չափանիշներին: Օրինակ՝ բռնարարին կարող են հաշվառումից հանել, եթե վերջինիս մոտ ախտորոշվել է որեւէ հոգեկան հիվանդություն կամ այն դեպքերում, երբ

անձը բնակվում է Հայաստանից դուրս (չնայած որ նա կարող է ցանկացած պահի վերադառնալ), երբ հաշվառման ժամկետն ավարտվել է (պարզ չէ, թե երբ), երբ բռնարարը կատարում է պարտադիր զինվորական ծառայություն (2 տարի) եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում, որոնք անհասկանալի են:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի դեպքերից մեկի ժամանակ, երբ ոստիկանությունը նախազգուշացում էր կիրառել բռնարարի նկատմամբ, վերջինս գնացել էր սոցիալական ծառայությունների բաժին եւ ասել, որ խնդիրները լուծվել են, որից հետո ոստիկանը դադարել է այցելել: Սա ցույց է տալիս, որ սոցիալական ծառայությունների եւ ոստիկանության միջեւ ընթացակարգերի եւ համակարգվածության խնդիր կա:

Այս բացառությունները եւ գործելակերպը չեն պաշտպանում զոհերին: Քանի որ բռնարարները սովորաբար չեն փոխում իրենց պահվածքը եւ հաճախ կրկնում են բռնությունը, այդ իսկ պատճառով այս գործելակերպը շատ վտանգավոր է: Ոչ մի այլ դեպքում, բացառությամբ նրանց մահվան, բռնարարները չպետք է հանվեն հաշվառումից: Ավելին, մենք հասկանում ենք, որ ոստիկանության արձանագրությունները ԸԲ դեպքերի վերաբերյալ ազգային ռեգիստրի մաս չեն կազմում: Այսպիսով՝ բռնարարը կարող է տեղափոխվել այլ տարածաշրջան, որտեղ որեւէ հաշվառում չունի:

Առաջարկներ.

1. **վերանայել բռնություն գործադրող անձին ոստիկանության հաշվառումից հանելու չափանիշները,**

2. **ստեղծել գենդերային բռնության դեպքերով հաշվառման կանգնած անձանց համար ազգային միասնական բազա:**

Քննչական գործողություններ

Ընտանեկան բռնության դեպքի արձանագրման դեպքում ոստիկանությունը քրեական գործը փոխանցում է նախաքննություն իրականացնող մարմնին, որն էլ կատարում է քննություն եւ գործն ուղարկում դատախազին: Մինչ այս քայլը կատարելը, սակայն, կա մեկ այլ նախաքննական զեկույց, որը մեր գնահատմամբ բոլորովին անտեղի է, քանի որ այս գործընթացում բռնության ենթարկված անձը ստիպված է լինում նորից պատմել իր նկատմամբ տեղի ունեցած բռնության մասին, ինչը կարող է հանգեցնել կրկնակի զոհականացման: Առհասարակ քննչական մարմնի գործողությունները չունեն զոհակենտրոն մոտեցում եւ չեն ներշնչում վստահություն: Քննիչների հետ հաղորդակցման ընթացքում բռնությունից տուժող անձինք ենթարկվում են կրկնակի զոհականացման քննիչների կողմնակալ լինելու պատճառով: Քննիչները փորձում են մեղմել կատարված բռնության բնույթը: Եթե համապատասխան գործողությունների կատարման ընթացքում բռնության ենթարկված անձը հանդես է գալիս առանց փաստաբանի, ապա զոհը շահարկվում է, եւ կատարված արարքի որակումը մեղմվում է: Երբեմն բռնության ենթարկված կինը որոշում է հետ վերցնել իր բողոքը: Քննչական մարմինը վարույթը կարճում է, ինչը հաճախ արվում է այն պատրվակով, որ բավարար ապացույցներ չկան: Ինչ վերաբերում է ոստիկանությանը, ապա այս մարմինը չունի պատշաճ պատրաստվածություն եւ չի հասկանում տրավմայի դինամիկան եւ թե ինչպես է բռնությունն ազդում զոհի վրա:

Հաջորդ խնդրահարույց հարցը, ինչը չի թույլատրվում ԸԲ չափանիշներով, վերաբերում է առհասարակ գենդերային բռնության դեպքերով (ընտանեկան բռնություն, սեռական բռնություն) բռնություն գործադրող անձի եւ բռնության ենթարկվող անձի

առերեսմանը: Բռնարարի հետ նույն սենյակում գտնվելը կարող է շատ վախեցնող եւ տրավմատիկ լինել զոհի համար, եւ նրա անվտանգությունը երաշխավորված չէ: Դեպքերից մեկի ժամանակ, երբ զոհն առերեսումից հետո լքել էր ոստիկանության բաժինը, նրան առեւանգել էր բռնարարն իր ընտանիքի անդամների հետ: Ոստիկանության աշխատակիցները պետք է ապահովեն զոհի անվտանգությունը ոստիկանության բաժինը լքելիս: Բացի այդ՝ հատկապես բարձր ռիսկայնության եւ ապաստարանում գտնվող զոհերի համար հարցաքննությունը պետք է իրականացվի աջակցման կենտրոնի գրասենյակներում կամ մեկ այլ անվտանգ միջավայրում:

Հարցի վերաբերյալ կարգավորումներ է նախատեսում նաեւ Կոնվենցիան, որի 18-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ պետություններն իրենց գործողությունները պետք է իրականացնեն՝ հիմնվելով կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության գենդերային ընկալման վրա եւ ուշադրության կենտրոնում պահեն զոհի՝ մարդու իրավունքներն ու անվտանգությունը, եւ նրանց գործողությունները պետք է ուղղված լինեն զոհի՝ կրկնակի զոհականացումից խուսափելուն:

Չափազանց կարեւոր է անդրադառնալ ոստիկանության աշխատակիցների եւ քննիչների կողմից բռնության ենթարկված անձի գաղտնիության պահպանման սկզբունքի խախտմանը: Հաճախ քննիչները բռնարարին տեղեկացնում են, թե երբ է բռնության ենթարկված անձը գալու ոստիկանության բաժանմունք կամ հայտնում են նրա գտնվելու վայրի մասին որեւէ տեղեկություն: Նշվածը ոչ միայն վտանգում է բռնության ենթարկված անձի անվտանգությունը, այլեւ վտանգ է ներկայացնում աջակցության կենտրոնի աշխատակիցների անվտանգության ապահովման տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց, ընտանեկան բռնության վերաբերյալ գործերի զգալի մասը կարճվում են ապացույցների անբավարարության հիմքով կամ բռնարարի արարքը որակվում է առավել մեղմ հանցակազմով: Նման դեպքերում գործը չի հասնում դատարան կամ բռնության ենթարկված անձն այլեւս չի ցանկանում պայքարել դրա համար, քանի որ ակնհայտ է, որ բռնարարը չի ենթարկվելու պատասխանատվության կամ տուգանքի: Նման մոտեցումը բռնարարի մոտ առաջացնում է անպատժելիության զգացում, եւ նա շարունակում է բռնություն գործադրել անձի նկատմամբ: Բռնության ենթարկված անձն առհասարակ մնում է առանց պաշտպանության:

Առաջարկներ.

1. **փոփոխություն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ սահմանելով, որ գենդերային/ընտանեկան բռնության դեպքերում զոհերը չեն կարող առերեսվել մեղադրյալի հետ: Առերեսումն իրականացնել տարբեր սենյակներում՝ առանց միմյանց տեսնելու,**

2. **փոփոխություն կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ հատուկ կարգավորումներ նախատեսելով ընտանեկան բռնության գործերով կարճման հիմքերի վերաբերյալ,**

3. **իրականացնել վերապատրաստումներ քննիչներին ավելի զգայուն եւ զոհակենտրոն դարձնելու նպատակով:**

Դատաբժշկական փորձաքննություն

Քննության շրջանակներում դատաբժշկական փորձաքննությունների անցկացման կարգն ու պայմանները զոհի համար արդարադատության հասնելու կարեւոր նախապայման են: Բոլոր այն դեպքերում, երբ ընտանեկան բռնության ենթարկված անձը հաղորդում է ներկայացնում ոստիկանություն, նա ուղղորդվում է դատաբժշկական փորձաքննության: Այս գործընթացը զոհի կողմից նկարագրվում է որպես տրավմատիկ եւ նվաստացուցիչ երեւույթ: Մինչ օրս դատաբժիշկները միայն տղամարդիկ են եւ Առողջապահության նախարարությունը ջանքեր չի գործադրում համակարգը կին դատաբժիշկներով համալրելու հարցում[16]: Ոչ մի ուշադրություն չի հատկացվում զոհի հարմարավետությանը եւ նույնիսկ անվտանգությանը: Սովորաբար նման քննության ընթացքում կին բուժքրոջ, սոցիալական աշխատողի կամ պարզապես աջակցող ընկերոջ ներկայությունը պարտադիր է:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի դեպքերից մեկի ընթացքում դատաբժիշկը շտապելու պատճառով առաջարկել էր փորձաքննությունն անցկացնել կենտրոնի պահակի սենյակում: Մեկ այլ խտրական գործընթաց է կուսության ստուգումը, որն իրականացվում է սեռական բռնության գործերով եւ հակասում է մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին: Զարգացած շատ երկրներում ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված անձինք չեն անցնում վտանգող կամ նվաստացնող գինեկոլոգիական հետազոտություններ: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի պրակտիկայում հանդիպել են նաեւ դեպքեր, երբ բռնարարները փորձել են մանիպուլացնել եւ կաշառել դատաբժիշկներին: Այստեղից հարց է ծագում՝ արդյո՞ք համակարգը կաշառված է, կոռումպացված է, թե՞ պարզապես ոչ պրոֆեսիոնալ:

---

16 Հարցազրույց «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցչի հետ:

Առաջարկներ.

1. **դատաբժշկական փորձաքննությունների կազմակերպումը ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված անձանց պարագայում պետք է լինի առավել զոհակենտրոն,**

2. **համալրել ոլորտը կին դատաբժիշկներով եւ/կամ տղամարդ դատաբժշկի քննության ընթացքում ապահովել որեւէ կնոջ ներկայություն,**

3. **վերապատրաստել դատաբժիշկներին՝ ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված անձանց զոհակենտրոն մոտեցում ցուցաբերելու համար,**

4. **համալիր վերապատրաստումներ իրականացնել ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերով մասնագիտացված դատաբժիշկների համար:**

VI

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դատախազներ

Հայաստանում դատախազը դատարանում պետք է ներկայացնի մեղադրանքն ու այդկերպ պաշտպանի գործով զոհի իրավունքներն ու շահերը: Գործնականում, սակայն, ականատես ենք լինում հակառակ իրավիճակի: Քանի որ դատախազները բավարար գիտելիքներ չունեն ընտանեկան բռնության առանձնահատկությունների վերաբերյալ, հայտնի չէ՝ արդյո՞ք նրանք անցել են վերապատրաստում տվյալ ոլորտում, քանի որ նրանք չեն կարողանում պատշաճ կերպով իրականացնել այդ գործընթացը: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի գործունեության ընթացքում երբեւէ չի հանդիպել որեւէ դեպք, երբ դատախազները ընտանեկան բռնության գործերը որակեն որպես ընտանեկան բռնության դրսեւորում: Այսպիսով՝ գործի քննության ընթացքում դատախազների կատարած հայտարարությունները, հարցադրումները, միջնորդությունները չեն համապատասխանում ընտանեկան բռնության դեպքերով գործադրված բռնության դինամիկայի, վերահսկողական վարքագծի բացահայտմանը: Համանման է իրավիճակը նաեւ դատավորների պարագայում:

Շատ կարեւոր է, որ դատախազները համագործակցեն եւ համակարգեն իրենց գործողությունները զոհի փաստաբանի հետ, բայց պրակտիկայում սա նույնպես գրեթե չի դրսեւորվում, իսկ եթե այնուամենայնիվ համագործակցում են, ապա դա կատարվում է մակերեսային: Առավել տարածված գործողությունը, որ դատախազներն անում են, այն է, որ խնդրում են փաստաբանին լրագրողների հրավիրել դատական նիստին՝ այդկերպ փորձելով ճնշում գործադրել դատավորի վրա: Սա միակ գործողությունն է, որ նրանց կողմից կատարվում է:

Առաջարկ.

1. **իրականացնել շարունակական, համալիր մասնագիտացված վերապատրաստումներ, որոնք կապահովեն դատախազների գենդերային զգայունության բարձրացմանն ու ընտանեկան եւ գենդերային բռնության առանձնահատկությունների վերաբերյալ մասնագիտական ունակությունների կատարելագործմանը:**

Ընտանեկան բռնության դեպքերով դատական քննությունը

Գլխավոր եւ առաջնային խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրությունը չունի ընտանեկան բռնության դեպքերով առանձին (հատուկ) իրավակարգավորումներ, ինչը նշանակում է, որ ՀՀ դատարաններում ընտանիքում բռնության դեպքերի քննությունն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Այսինքն՝ օրենքը չի նախատեսում ընտանեկան բռնության գործերի քննության սեղմ (հատուկ) ժամկետներ եւ դատավարությունները կարող են ձգվել տարիներ շարունակ, մինչ զոհի անվտանգությունը կարող է վտանգված լինել: Հարցազրույցի կարգը չի ապահովում զո-

հերի, վկաների, այդ թվում նաեւ անչափահաս անձանց պաշտպանությունը եւ անվտանգությունը: Ավելին, դատավարության ծախսերը փոխհատուցելու մեխանիզմներ չկան, որոնք ամբողջությամբ դառնում են զոհի պատասխանատվությունը, ինչը զոհի համար խոչընդոտ է հանդիսանում՝ դիմելու արդարադատությանը: Խնդրահարույց է նաեւ այն, որ գործի դատական քննության ժամանակ բռնության ենթարկված անձանց աջակցելու նպատակով դատավարությանը չեն մասնակցում սոցիալական աշխատողը, հոգեբանը, որոնք աշխատել են զոհի հետ:

Գենդերային բռնության եւ ընտանեկան բռնության դեպքերի հետ կապված դատական գործերի քննությունը չի իրականացվում մասնագիտացված դատավորների կողմից, ինչը նմանատիպ գործերի արդյունավետ քննության համար պարտադիր պահանջ է: Այսպիսով՝ քաղաքացիական եւ քրեական դատավարությունների ընթացքում չի ապահովվում գենդերային զգայունության, զոհակենտրոն մոտեցման եւ կրկնակի զոհականացման արգելքի սկզբունքների պահպանումը, եւ բռնության ենթարկված անձինք դատավարության ժամանակ կարող են կրել ծանր հոգեբանական հուզական վնասներ՝ ընդհուպ հրաժարվել ներկայացրած բողոքից կամ հայցից:

Առաջարկներ.

1. **կատարել օրենսդրական փոփոխություններ եւ ամրագրել գենդերային եւ ընտանեկան բռնության դեպքերով առանձին (հատուկ) իրավակարգավորումներ,**

2. **ապահովել, որ ընտանեկան բռնության գործերով քննությունն իրականացվի մասնագիտացված դատավորի կողմից:**

Պաշտպանական որոշում

Համաձայն ՀՀ ԸԲ օրենքի՝ դատարանը տրամադրում է պաշտպանական որոշում (ՊՈ): ՊՈ-ն կայացվում է մինչեւ 6 ամիս ժամկետով եւ կարող է դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչեւ 3 ամիս ժամկետով: Պաշտպանական որոշմամբ բռնություն գործադրող անձին կարող են հարկադրել անհապաղ հեռանալ զոհի բնակության վայրից եւ արգելել այցելել զոհի աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու վայրեր մինչեւ որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Պաշտպանական որոշմամբ սահմանվում է նաեւ հեռավորություն, որը չպետք է խախտի բռնարարը՝ չմոտենալով զոհին (անհրաժեշտության դեպքում նաեւ նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին եւ այլն:

Միջազգային փորձը թույլ է տալիս, որ զոհը ուղղակիորեն դիմի դատարան՝ պաշտպանական որոշում (ՊՈ) ստանալու համար: Սովորաբար դա նույնքան պարզ է, որքան դիմումի ձեւ լրացնելը: Այն չի պահանջում նախկինում ԸԲ հաղորդման առկայություն կամ անհետաձգելի միջամտության որոշում: Այնուամենայնիվ, Հայաստանում սա զոհի համար մատչելի գործընթաց չէ:

Ներկայումս Հայաստանի առկա օրենսդրական կարգավորման համաձայն՝ դատարանը կարող է կայացնել պաշտպանական որոշում այն պարագայում, երբ արդեն իսկ առկա է անհետաձգելի միջամտության որոշում: Դատարանը թույլ չի տալիս մասնագետներին՝ սոցիալական աշխատողներին կամ հոգեբաններին, տրամադրել ՊՈ-ի համար անհրաժեշտ որեւէ ապացույց

եւ հաշվի չի առնում այդպիսի զեկույցները: Գործընթացը, որը պետք է հնարավորինս արագ կատարվի, սովորաբար տեւում է 30 օր, ինչը վտանգ է հանդիսանում զոհի համար:

Բացի այդ՝ դա պետության, ոչ թե զոհի պարտականությունն է պատասխանատվության ենթարկել բռնարարին՝ պաշտպանական որոշման եւ անգամ անհետաձգելի միջամտության որոշման խախտման դեպքերում:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի շահառուների 25-30%-ը որոշում է կայացրել հեռանալ երկրից՝ բռնարարից փախչելու համար: Մենք առաջարկում ենք, որ ցմահ պաշտպանական որոշում տրվի զոհին այն դեպքում, երբ զոհը վախենում է իր կյանքի համար կամ իր կյանքին վտանգ է սպառնում:

Առաջարկներ.

1. **օրենքում կատարել փոփոխություններ՝ թույլատրելով զոհերի կամ վտանգի տակ գտնվող անձանց անվտանգության ապահովման նպատակով պաշտպանական որոշում կայացնել նաեւ այն պարագայում, երբ առկա չէ անհետաձգելի միջամտության որոշում,**

2. **պարզեցնել եւ արագացնել դիմում լրացնելու եւ պաշտպանական որոշումներ ստանալու գործընթացը 24 ժամվա ընթացքում՝ ներառյալ հանգստյան օրերն ու արձակուրդը,**

3. **ազատել բռնության ենթարկված անձին դատարան դիմելիս պետական տուրքի վճարման պարտավորությունից:**

VII

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում սոցիալական ծառայությունները նորմալ չեն գործում եւ համակարգված չեն: Հայաստանի համալսարաններում սոցիալական աշխատողի կրթությունն ու պատրաստումը շատ է տարբերվում այլ զարգացած երկրներից: Հայաստանում սոցիալական աշխատողները կա՛մ շատ քիչ պատրաստվածություն ունեն ընտանեկան բռնության թեմայի շուրջ, կա՛մ էլ ընդհանրապես չունեն: Համալսարանները չունեն ընտանեկան բռնության ուսումնական ծրագրեր: Ինչպես նաեւ սոցիալական աշխատանքի բաժնի ուսանողները չեն անցնում գործնական պատրաստվածություն կամ ներառվում գործնական աշխատանքի մեջ, որպեսզի զարգացնեն խորհրդատվական հմտությունները: Ավելին, պետական սոցիալական ծառայությունների շատ տեսակներ նույն գործառույթներն են իրականացնում եւ ընդհանուր առմամբ անարդյունավետ են:

Ընտանեկան բռնության զոհը բռնության դեմ բողոքելու համար կարող է գրել կամ այցելել որեւէ սոցիալական ծառայություն, բայց սա շատ հազվադեպ է պատահում: Եթե դա տեղի է ունենում, սոցիալական աշխատողը չի իմանում՝ ինչպես խորհրդատվություն անցկացնել զոհի հետ, ինչպես ռիսկի գնահատում

իրականացնել կամ ինչպես օգնել զոհին ռազմավարություն եւ անվտանգության պլան մշակելու հարցում: Բացի այդ՝ այս սոցիալական ծառայությունները տարբեր պետական մարմինների իրավասության տակ են. Երեւանում դրանք քաղաքապետարանի, իսկ մարզերում մարզպետարանների իրավասության ներքո են գործում, իսկ որոշներն էլ (ցերեկային կենտրոնները)՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության: Եվ դրանց միջեւ չկա համակարգված կապ: Այնուամենայնիվ, 2020 թ. նախարարությունը սկսել է այդ ծառայությունների վերակազմավորման եւ համախմբման գործընթաց:

2019 թ. նախարարությունը հայտարարեց, որ ընտանեկան բռնության բոլոր դեպքերը պիտի ուղղորդվեն ցերեկային կենտրոններ: Այս կենտրոնները աշխատում են երեխաների հետ, եւ չնայած դրանք ունեն սոցիալական աշխատողներ, հոգեբաններ եւ իրավախորհրդատուներ, ընտանեկան բռնության ոլորտում իրենց պատրաստվածությունը բավարար չէ: 2019 թ. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ն իրականացրեց գնահատում, որով հաստատվեց, որ այս կենտրոնները չեն ուզում աշխատել այս ոլորտում, համապատասխան պատրաստվածություն չունեն, չունեն մեթոդոլոգիա եւ ավելի մեծ վնաս են հասցնում զոհերին, քան օգնում են[17]:

Ցերեկային կենտրոնների հետ կապ հաստատելու փոխարեն շատ հաճախ զոհը զանգահարում է ոստիկանություն: Ոստիկանությունը պետք է անմիջապես ուղղորդի զոհին ընտանեկան բռնության աջակցության կենտրոն: Մինչեւ այս տարի, սակայն, նման պրակտիկա գոյություն չի ունեցել: Ոստիկանությունը նամակ է ուղարկում ցերեկային կենտրոններին փոստով, որը կարող է հասնել 8-10 օրվա ընթացքում՝ տեղեկացնելով նրանց նոր

17 «Ընտանեկան բռնության դեպքերի աջակցման ցերեկային կենտրոնների կարիքների գնահատում»-ը կարող է տրամադրվել՝ ըստ պահանջի:

դեպքի մասին: Այն տեղեկությունը, որը ցերեկային կենտրոնը ստանում է, բռնարարի մասին է եւ չի պարունակում ոչինչ զոհի մասին, նույնիսկ՝ հեռախոսահամար: Հաճախ այդ նամակներն ուղղակի գրանցվում եւ արխիվացվում են, քանի որ օրենքի համաձայն պետք է արձագանքել 5 աշխատանքային օրվա ընթացքում, եւ մինչ նամակը հասնում է փոստով, ժամկետն արդեն լրացած է լինում, եւ աշխատակազմը ոչինչ այլեւս չի անում:

Որոշ ցերեկային կենտրոններ այնուհետեւ նամակ են ուղարկում զոհի տան հասցեով, որտեղ նաեւ բռնարարն է դեռեւս ապրում՝ հարց ուղղելով՝ արդյո՞ք զոհը ուզում է այցելել կենտրոն եւ ծառայություններից օգտվել: Շատ քչերն են գնում այդ կենտրոնը, եւ որովհետեւ կենտրոնը անկարող է առաջարկել որեւէ էական աջակցություն նրանց, վերջիններս էլ դադարեցնում են իրենց այցերը: Մենք նաեւ նկատել ենք, որ կենտրոնի աշխատակազմը հաճախ ունենում է ընտանեկան բռնության մասին կանխակալ պատկերացումներ, ինչպես օրինակ՝ կինն է հրահրել բռնարարին կամ զոհը լավ մայր կամ կին չէ: Նման պատկերացումները ցույց են տալիս, որ կենտրոնի աշխատակազմը անտեղյակ է ընտանեկան բռնության դեպքերի դինամիկայից, եւ դրանք զոհակենտրոն չեն:

Երկու այլ կենտրոններ (սոցիալական աջակցության տարածքային գործակալություններն ու բաժինները) երբեք չեն աշխատում զոհի հետ կամ խորհրդատվություն մատուցում նրանց: Նրանք հիմնականում արխիվացնում են նամակները կամ էլ միգուցե տնայցեր են կատարում, որոնք վտանգավոր են եւ անօգուտ: Այս կենտրոնները հիմնականում աղքատ ընտանիքներին օգնություն են ցուցաբերում: Գնահատում, առաջնային հարցազրույց, փաստաթղթերի հավաքագրում եւ դեպքի ընդհանուր կառավարում չի իրականացվում, չնայած եւ պարտավորված են անել: Այս ամենը սոցիալական աշխատողների ստացած կրթության

եւ սակավ պատրաստվածությունից է գալիս: Սոցիալական աշխատողները հիմնականում գրասենյակային աշխատողներ են, որոնք թղթաբանությամբ են զբաղվում, նրանք շահառուներին խորհրդատվություն ցուցաբերելու հետ կապված կա՛մ շատ քիչ գործ են ունենում, կա՛մ էլ ընդհանրապես դա չեն անում:

Այնուամենայնիվ, մենք չենք կարող ամբողջ մեղքը բարդել միայն պետական սոցիալական աշխատողների վրա: Ընտանեկան բռնության դեպք գրանցելուց հետո սոցիալական աշխատողը չունի համապատասխան ցանց, որտեղ ուղղորդի շահառուին աջակցություն ստանալու համար, քանի որ տեղում բացակայում են ընտանեկան բռնության զոհերին իրական աջակցություն ցուցաբերելու ծառայություններ եւ պատրաստվածություն: Փոխարենը պետական սոցիալական աշխատողները առաջարկում են որպես օգնություն միայն սննդային փաթեթներ: Այս ոլորտում աշխատող մարդիկ չեն ուզում անել սրանից ավելին, քանի որ նրանք պատասխանատու եւ համապատասխան քայլեր ձեռնարկելու պատշաճ պատրաստվածություն չունեն:

Այս ամենին ի հավելումն՝ մենք նկատել ենք, որ կանայք, որոնք ապաստարան են գալիս, եւ պետք է պետությունից նպաստ ստանան, զրկվում են այդ նպաստից կա՛մ այն պատճառով, որ նպաստը ձեւակերպված է բռնարարի անունով եւ նա այդ գումարը իրեն է պահում, կա՛մ իր իսկ անվտանգությունից ելնելով ապաստարանում մնալու պատճառով, և զոհը չի կարողանում գնալ եւ ստանալ այդ նպաստը: Սոցիալական ծառայություն մատուցողները չեն գնահատում իրավիճակը եւ ճկուն չեն իրենց մոտեցման մեջ: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն առաջարկել է այս պրակտիկան վերանայել, քանի որ զոհը այդ գումարի կարիքն ունի նոր կյանք սկսելու եւ նոր ապրելու հարմարություններ ստեղծելու համար:

2019 թ. վերջին 8 հասարակական կազմակերպություններ վերապատրաստվել են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ համապատասխան նախարարության հետ կնքված համաձայնագրի: Հավատարմագրումից հետո այդ կենտրոնները մասնակի սուբսիդավորվել են պետության կողմից: Վերջիններս վերահիսկվելու են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի կողմից, եւ մինչեւ 2020 թվականը միասին կատարելու են դեպքերի քննարկումներ: Ընտանեկան բռնության ոլորտում աշխատողները պարտադիր չէ ունենան սոցիալական ծառայողի մասնագիտացում, նրանք կարիք ունեն անցնելու խորացված վերապատրաստումներ եւ համապատասխան փորձառություն ձեռք բերեն ընտանեկան բռնության ոլորտում: Այս իմաստով «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի վերապատրաստումները հիմնված են հետազոտությունների եւ ընտանեկան բռնության ոլորտում առկա լավագույն փորձի վրա: Մարզերում եւս 4 կենտրոնների վերապատրաստում նախատեսվում է իրականացնել 2020 թ., որոնք կգործարկվեն 2021 թ.: Մենք հույս ունենք, որ այս կենտրոնները, որոնք կըլինեն զոհակենտրոն եւ կառաջարկեն դեպքերի լավ կառավարում, կփոխարինեն պետական սոցիալական ծառայություններին, որոնք մինչ օրս ի զորու չեն եղել դա անել:

Առաջարկներ.

1. **Ընտանեկան բռնության զոհերին ուղղորդել աջակցության կենտրոններ, որոնք վերահսկվում են ՀԿ-ների կողմից եւ վավերացված են նախարարության կողմից:**

2. **Տվյալների հավաքագրումը եւ դեպքերի գրանցումը համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին եւ պահպանել այդ գործընթացի ստանդարտները ընտանեկան բռնության բոլոր աջակցման կենտրոնների համար:**

3. **Կենտրոնների գնահատումն իրականացնել ընտանեկան բռնության ոլորտում աշխատող պետական եւ ՀԿ մասնագետների թիմի կողմից:**

4. **Մշակել նոր մեխանիզմներ այն զոհերի համար, որոնք պետական նպաստներ են ստանում, որպեսզի գումարը չմնա բռնարարին, երբ զոհը լքում է նրան:**

Ֆինանսական աջակցություն ընտանեկան բռնության զոհերին

Ընտանեկան բռնության օրենքը պահանջում է, որ զոհին ֆինանսական աջակցություն տրամադրվի վնասները/վնասվածքները փոխհատուցելու համար մինչեւ 150 հազար դրամ: Նախարարությունն է պատասխանատվություն կրում այս գործընթացի համար: Այդ գումարը կարող է օգտագործվել հետեւյալ նպատակներով՝

- նվազագույն կարիքները հոգալու համար.
- բուժման եւ առողջության վերականգնման ծախսերը ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցելու համար.
- ժամանակավոր կացարան ապահովելու նպատակով բնակելի տարածքի վարձակալության գումարի փոխհատուցման համար.
- աշխատանքի տեղավորման նպատակով վերապատրաստման դասընթացների վարձավճարի փոխհատուցման համար՝ բացառությամբ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով գործազուրկների եւ աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար սահմանված զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում նախատեսված դասընթացների:

Դիմելու համար նախատեսված ուղեցույցը եւ վերջնաժամկետները ներկայացվել են: Սակայն մինչ այսօր դիմումներ չեն ներկայացվել, եւ մենք չենք կարող գնահատել՝ արդյո՞ք օգտվողի համար գործընթացը բարենպաստ է եւ հատկացումը արագ է տրվում: Այս օրենքի քննադատությունն այն է, որ այն հիմնականում ուղղված է սոցիալ-տնտեսական ավելի ծանր վիճակում գտնվող զոհերին: Խնդիրն այն է, որ եթե նույնիսկ զոհը ապահովված ընտանիքից է, ամենայն հավանականությամբ նա կկորցնի իր բոլոր արտոնությունները, երբ որոշի հեռանալ ամուսնուց: Հայաստանում շատ են քաղաքացիական ամուսնությունները, եւ այս դեպքում չկա օրինական ամուսնալուծություն, հետեւաբար՝ չկա իրավունք որեւէ սեփականության/գույքի նկատմամբ: Հաճախ բռնարարները ալիմենտ չեն վճարում, որը նույնպես ծանրացնում է իրավիճակը: Զոհի ծնողական ընտանիքը նույնպես հրաժարվում է աջակցել զոհին, որովհետեւ բաժանությունը/ամուսնալուծությունը ամոթալի է համարվում: Նախարարության կողմից մշակված վնասների համար վճարման իրավասության պարզ բանաձեւը լավ մտածված չէ եւ կարիք ունի վերանայման: Զոհակենտրոն մոտեցման մեջ գնահատումը պետք է կատարվի յուրաքանչյուր դեպքի համար:

Երեխաների պաշտպանության ծառայություններ եւ ընտանեկան բռնություն

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ աշխարհով մեկ 275 միլիոն երեխա տանը բռնության է ենթարկվում: Այս ցուցանիշը կարող է մոտավոր գնահատական լինել, քանի որ հասանելի տվյալները սահմանափակ են: Հայաստանում «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի համաձայն՝ 2019 թվականին 225 երեխաներ ստացել են հոգեբանական աջակցություն կազմակերպության կողմից: «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի տվյալների

համաձայն՝ իրենց շահառուների ամբողջ քանակից սեռական բռնության ենթարկված անչափահասների 80%-ը ենթարկվել է սեռական բռնության ընտանիքի անդամի կողմից[18]: Տարեկան աճում է ընտանիքներում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի քանակը, մինչդեռ Հայաստանը դեռեւս չունի երեխաների պաշտպանության ծառայություն եւ ունի երեխաների հետ աշխատող շատ քիչ փորձագետներ: Մենք նաեւ պետք է նշենք, որ երեխան նույնպես որպես զոհ է դիտարկվում, նույնիսկ եթե նա միայն ականատես է լինում բռնությանը, որը նույնքան տրավմատիկ եւ վնասակար կարող է լինել երեխայի համար: Նման դեպքերում երեխաները դիտարկվում են որպես անուղղակի զոհեր:

Հետազոտությունները, որոնք անցկացվել են այն երեխաների հետ, որոնք ընտանեկան բռնության ականատես են եղել, ցույց են տալիս, որ նրանք ունեն վարքային եւ հուզական խնդիրներ: Հետազոտությունը եզրակացնում է, որ ընտանեկան բռնության ականատես երեխան ունի նույն հոգեբանական խնդիրները, որոնք ծնողների կողմից ուղղակիորեն բռնության ենթարկված երեխան է ունենում[19]: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ այն երեխաները, որոնք ականատես են լինում ընտանեկան բռնության, ամենայն հավանականությամբ եւս բռնության զոհեր են: Համաձայն նույն աղբյուրի՝ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի 40%-ի դեպքում երեխաները հաղորդել են նաեւ իրենց ծնողների միջեւ առկա ընտանեկան բռնության մասին[20]:

---

18 Հարցազրույց «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» եւ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

19 Նույն տեղում:

20 Տե՛ս World Report on Violence and Health, ed. By Krug, Etienne G., et al., WHO, 2002, https://www.who.int/violence_injury_prevention/violence/world_report/en/introduction.pdf:

2006 թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ը հրապարակեց զեկույց, որում ներկայացվում է ընտանեկան բռնության ազդեցությունն այն երեխաների վրա, որոնք ականատես են եղել այդ բռնությանը: Համաձայն այդ զեկույցի՝ եթե երեխան տեսնում, լսում կամ անգամ տեղյակ է ընտանեկան բռնության մասին, այն ազդում է երեխայի ֆիզիկական, հուզական եւ սոցիալական զարգացման վրա ինչպես մանկության, այնպես էլ կյանքի հետագա փուլերում: Այն երեխաները, որոնք տուժել են ընտանեկան բռնությունից, ավելի մեծ ռիսկի առաջ են կանգնած դեռահաս տարիքում հղիանալու, ալկոհոլ եւ թմրամիջոցներ օգտագործելու, դպրոցը լքելու տեսանկյունից[21]: Երեխաների հետ աշխատանքը երկար գործընթաց է, որը միտված է հաղթահարելու ընտանեկան բռնության պատճառով ծագած հետեւանքները: Քանի որ ընտանեկան բռնությունը ուսուցանվող վարքագիծ է, տղաները կարող են սովորել եւ օգտագործել վերահսկող վարքը իրենց քույրերի եւ նույնիսկ մայրերի նկատմամբ վաղ տարիքից: Այս ավտորիտար, վերահսկող վարքը նույնպես սպասելի է հայկական ընտանիքների տղա երեխաներից: Տղաները ընտանիքի իգական սեռի անդամների նկատմամբ կարող են ունենալ սեփականության զգացում եւ իրավունք: Բացի այդ՝ մենք գիտենք, որ ընտանեկան բռնությունը ուսուցանվող վարքագիծ է՝ նկատի ունենալով, որ տղաների մեծամասնությունը, երբ մեծանում է, բռնարար է դառնում, իսկ աղջիկները բռնարար հարաբերությունների մեջ են մտնում չափահաս տարիքում: Սա հսկայական ազդեցություն է ունենում ընտանեկան բռնության շարունակականության վրա եւ խոչընդոտում Հայաստանում ընտանեկան բռնության կանխարգելման գործընթացին:

Հայաստանում շատ են այն երեխաները, որոնք ապրում են վտանգավոր կամ խնդրային ընտանիքներում, որտեղ կա

---

21 Տե՛ս Behind closed doors. The impact of domestic violence on children. UNICEF, 2006, https://www.unicef.org/protection/files/BehindClosedDoors.pdf:

թմրանյութերից կախվածություն, բռնություն, անտեսում եւ անմիջական վտանգի առկայություն երեխայի կյանքի նկատմամբ: Ընտանիքների հետ աշխատանքի 10 տարիների ընթացքում մենք երբեք չենք հանդիպել այնպիսի իրավիճակի, չնայած բազմիցս առաջարկել ենք, որ երեխան գոնե ժամանակավոր այդ ընտանիքից դուրս հանվի: Սա անելու համար պետք է դիմել դատարան, որին հաջորդում է երկար եւ դժվարին գործընթաց, որը ներառում է մի շարք խոչընդոտներ: Ո՛չ ոստիկանությունը, ո՛չ էլ սոցիալական ծառայությունները չունեն այդ իրավասությունը երեխային տարհանելու խնդրային եւ վտանգավոր միջավայրից:

Ընտանեկան բռնության օրենքը պահանջում է շտապ միջամտել, «երբ առկա է խելամիտ հիմք բռնության կրկնության կամ շարունակման անմիջական վտանգի համար» ընտանիքում: Գործնականում սակայն իրավապահ մարմինները չունեն այդ գիտակցությունը կամ համապատասխան պատրաստվածությունը նման գնահատում անելու համար, եւ երեխայի լավագույն շահը ամբողջովին անտեսվում է: Միացյալ Թագավորությունում ընդհակառակը. մասնագետները դիտարկում են երեխաներին նույնպես, եւ եթե կա անհրաժեշտություն, երեխաներով զբաղվող սոցիալական ծառայությունները ունեն երեխաներին ծնողներից հեռացնելու այդ իրավասությունը՝ հիմնվելով փաստերի վրա, կամ եթե մայրը չի կարողանում հոգ տանել նրանց մասին, խնամքի հատուկ ծառայությունների մեջ ներառել նրանց:

Զոհին պետք է ասել, որ երեխայի անվտանգությունն է առաջնային, այդ պատճառով երեխաներին կարող են վերցնել առանց դատական միջամտության: Մինչ այդ, եթե կա անհրաժեշտություն, ծնողավարական հմտություններ եւ խորհրդատվություն է տրամադրվում մորը: Երեխաների մասով սոցիալական ծառայությունները հոգեկան առողջության մասնագետների հետ հետո գնահատում են՝ արդյոք մայրը բավական լավ է զգում իրեն երեխաներին կրկին խնամակալության վերցնելու համար:

Սովորաբար նախընտրելի է, որ երեխաները մնան ընտանիքի այլ անդամների, օրինակ՝ տատիկ-պապիկների հետ, քան երեխաների ապաստարանում կամ մանկատանը: Հարազատները նախապես գնահատվում են, եւ երեխաներով զբաղվող սոցիալական ծառայությունները շարունակում են աշխատել ընտանիքների հետ՝ համոզվելու համար, որ երեխաների մասին պատշաճ հոգ է տարվում:

Երեխաներին մոր խնամքից հեռացնելու անհրաժեշտություն առաջանում է, երբ մայրը ցանկանում է վերադառնալ բռնարարի մոտ, կամ էլ երբ առկա է թմրանյութից կախվածություն ընտանիքում: Մենք ականատես ենք եղել իրավիճակների, երբ երեխաները լաց էին լինում եւ խնդրում իրենց մորը չվերադառնալ բռնարար զուգընկերոջ մոտ, եւ չնայած ծայրահեղ տրավմատիզացված էին, նրանք վերադառնում էին իրենց մոր հետ բռնարարի մոտ:

Հաճախ բռնարարները, երբ կինը ամուսնալուծվում է, օգտագործում են երեխաներին որպես զենք իրավիճակը մանիպուլացնելու համար. կա՞մ պատժում են զոհին, որպեսզի նա այլեւս երբեք չկարողանա տեսնել երեխաներին, կա՞մ օգտագործում են երեխաներին՝ կնոջը իրենց մոտ վերադարձնելու համար: Բոլոր դեպքերում էլ Հայաստանում ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց ծառայություն մատուցող կազմակերպությունները ահազանգում են ծնողից օտարման համախտանիշի մասին[22], որը նկատվում է այն երեխաների շրջանում, որոնք ապրում են

22 Ծնողից օտարման համախտանիշը եզրույթ է, որը ներկայացվել է 1985 թ.-ին հոգեբույժ Ռ. Գարդների կողմից: Եզրույթը նկարագրում է երեխաների մոտ տարբերակիչ վարքի ձեւեր, որոնք ներառում են ծայրահեղ, բայց չհիմնավորված վախ, անհարգալից վարք կամ թշնամանք մի ծնողի նկատմամբ: Գարդները հավատացած էր, որ երեխաների շրջանում այս համախտանիշի դրսեւորումը, որը նա նկատել էր երեխաների խնամքի հարցերով դատական գործընթացներում, կարող է օգտագործվել ծնողի կողմից երեխայի նկատմամբ հոգեբանական մանիպուլյացիները եւ անհարկի ազդեցությունը ախտորոշելու համար:

բռնարարի հետ, եւ զրկված են մորը այցելելու իրավունքից (կամ հակառակը)[23]. այս պատճառով շատ կարեւոր է ստեղծել չեզոք հսկվող վայրեր երեխայի տեսակցությունների համար, որոնք կերաշխավորեն ընտանեկան բռնության զոհերի եւ երեխաների անվտանգությունը:

Այսպես կոչված երեխայի պաշտպանության ծառայությունը Հայաստանում հոգաբարձության եւ խնամակալության հանձնաժողովն է (այսուհետ կարճ՝ հանձնաժողով): Այս մարմինը բավական խրթին է իր կառուցվածքով, կազմված է կամավորներից եւ անհատներից, որոնք չունեն համապատասխան պատրաստվածություն եւ մասնագիտական գիտելիքներ: Օրենքը հանձնաժողովը դիտարկում է որպես հեղինակավոր մարմին, որը ապահովում է երեխաների բարեկեցությունը եւ անվտանգությունը: Սակայն հանձնաժողովի կանոնադրությունը չի վերաբերում ընտանեկան բռնության զոհ դարձած երեխաների իրավունքներին ու կարիքներին՝ որպես առաձին խումբ:

> Մայրը մասնակցում էր հարցաքննությանը՝ որպես իրավական ներկայացուցիչ եւ ճնշում գործադրում երեխայի վրա, որպեսզի նա չհրապարակի բռնարարի անունը: Կազմակերպությունը փորձեց ներառել հանձնաժողովին այս գործընթացի մեջ, բայց այն ոչինչ չձեռնարկեց: Սա ընդամենը մեկն է բազում օրինակներից, որոնք ցույց են տալիս, թե որքան անպաշտպան են ընտանեկան եւ սեռական բռնության զոհ դարձած երեխաները Հայաստանում: Ավելին, չնայած նույնիսկ պետությունը տեղեկացված է նման դեպքերի մասին, իրականում փաստացի ոչ մի միջոցառում չի ձեռնարկում օգնելու այս երեխաներին:

23 Հարցազրույց «Կանանց ռեսուրսային կենտրոն» եւ «Կանանց աջակցման կեն տրոն» ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ

Հանձնաժողովը նաեւ արդյունավետ կերպով չի համագործակցում ոչ պետական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ, չունի գիտելիք ընտանեկան բռնության մասին եւ չի առաջնորդվում զոհակենտրոն մոտեցմամբ[24]:

Կինը եւ իր երեխաները տարիներ շարունակ բռնության էին ենթարկվում ամուսնու կողմից: Հերթական դեպքից հետո կինը ծանր մարմնական վնասվածքներով հայտնվեց հիվանդանոցում, կինն աղերսում էր փրկել իր 4 երեխաներին: Երբ կապվեցինք Խնամակալության մարմնի հետ, վերջիններս չէին արձագանքում մեր պահանջներին՝ պաշտպանել երեխաներին, իսկ մարզպետարանի՝ երեխաների պաշտպանության բաժնի ներկայացուցիչը հենց բռնարարի հետ որոշեց, որ երեխաներից 2 կգնան մոր մոտ, իսկ մնացածը՝ հոր մոտ մինչեւ դատարանի որոշումը: Փաստացի երեխաները գնացին այն հոր մոտ, որը տարիներ շարունակ բռնության էր ենթարկում նաեւ երեխաներին:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ

Երեխաների խնամակալությունը

Ինչպես նշվեց նախորդ օրինակում, ընտանեկան բռնության

24 Հարցազրույց «Կանանց ռեսուրսային կենտրոն» եւ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

զոհերի համար մեկ այլ մարտահրավեր է երեխաների խնամակալության համար ծնողների միջեւ տարվող պայքարը: Հաճախ բռնարար ծնողը օգտագործում է երեխաներին որպես զենք՝ ստիպելով զոհին/մորը վերադառնալ իր մոտ կամ էլ պատժում է նրան՝ երեխաներին նրանից հեռու պահելով:

> Բռնարարը թույլ չի տալիս երեխային գնալ մոր մոտ: Այսպիսով՝ բռնարարը շարունակում է դրսեւորել իր մանիպուլատիվ եւ բռնարար վարքը զոհի նկատմամբ: Իրականում բռնարարը նույնիսկ չի կատարում իր դերը որպես խնամակալ՝ թողնելով խնամքը իր մորը կամ մեկ այլ մոտ հարազատի: Բռնարարը ներառված չէ երեխայի դաստիարակության մեջ, իսկ երեխաների խնամակալության իր պահանջը նախկին զուգընկերոջից վրեժ լուծելու եւ նրան հուզական ցավ պատճառելու նպատակ է հետապնդում:
>
> Ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի հետ աշխատող

2017 թ. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն իր արտահերթ հրապարակային զեկույցում[25] նշեց, որ հանձնաժողովը թերանում է իր գործառույթների պատշաճ իրականացման մեջ, մասնագետներն ունեն մասնագիտական հմտություններ եւ մոտիվացայի պակաս, չունեն աշխատանքի մեթոդաբանություն: Նույն զեկույցը հղում էր անում նաեւ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի այլընտրանքային զեկույցին, որը պատրաստվել է տեղական եւ միջազգային 45 կազմակերպությունների կողմից՝ նշելով, որ այս կառույցնե-

25 Տե՛ս «Խնամակալության եւ հոգաբարձության մարմինների ու խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույց, https://www.ombuds.am/images/files/615b7bff7bdaac165eeb767625c6adf1.pdf:

րի գործունեության հիմնական խնդիրներից է, որ երեխաների իրավունքների պաշտպանությունը նրանց համար առաջնահերթություն չէ, եւ աշխատակազմը հիմնականում տեղեկացված չէ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կատարվող բարեփոխումներից[26]:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի այս տարիների փորձը հաշվի առնելով՝ ահա այս կառույցների հետ գործ ունենալիս ծագած խնդիրների ցանկը.

- Բռնարար հոր հետ երեխաների տեսակցությունները պետք է դադարեցվեն, երբ կինը եւ իր երեխաները ընտանեկան բռնության ապաստարանում են գտնվում: Զոհերի եւ ապաստարանի աշխատողների անվտանգությունը չի կարող ապահովվել, եթե հանձնաժողովը պահանջում է այցելություն երեխաներին: Ինչպես նաեւ Հայաստանում պետք է լինեն հսկվող, չեզոք վայրեր երեխաների տեսակցության համար բոլոր մարզերում:

- Հանձնաժողովը, գիտելիքներ չունենալով ընտանեկան բռնության յուրահատկության մասին, վտանգում է զոհերի ապահովությունն ու անվտանգությունը: Օրինակ՝ այս մարմինները կարող են գումարել նիստ երեխայի տեսակցության հարցով, որտեղ պետք է ներկայանան երկու ծնողները, որը ծայրահեղ ռիսկային ու տրավմատիկ է: Ինչպես նաեւ կարող են պահանջել կնոջ բնակության հասցեն, որը հեշտությամբ կարող է հայտնի դառնալ բռնարարին՝ զոհի եւ նրա երեխաների անվտանգությունը ռիսկի տակ դնելով: Սա հատկապես վտանգավոր է, երբ կինը ապաստարանում է, որի գտնվելու վայրը գաղտնի է:

26 Նույն տեղում:

- Հանձնաժողովի անդամները մեծ մասամբ չունեն մասնագիտական հմտություններ, պատրաստվածություն եւ փորձ ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատելու համար: Սովորաբար նրանք չեն գիտակցում ընտանեկան բռնության դեպքերի լրջությունն ու վտանգավորության աստիճանը, կնոջ եւ նրա երեխաների տրավմատիկ վիճակն ու այլ ճգնաժամային հարցեր: Նրանց տրամադրած եզրակացությունները շատ հաճախ չեն արտացոլում ընտանիքում առկա իրական վիճակը: Օրինակ՝ նրանք, անտեղյակ լինելով, որոշում են խնամակալությունը հանձնել բռնարար հորը, ուղղակի որովհետեւ նրա բնակարանը ավելի լավ է կահավորված:

- Այդ մարմինները չեն աշխատում շուրջօրյա, այնինչ հաճախ դեպքը տեղի է ունենում գիշերվա կեսին կամ էլ շաբաթ-կիրակի օրերին: Իսկ ոստիկանությունը չունի բռնարարից երեխաներին վերցնելու ոչ մի լիազորություն առանց այդ մարմնի ներկայացուցիչների ներկայության:

- Ընտանեկան բռնության զոհերին ծառայություններ մատուցելու այս 10 տարիների ընթացքում մենք չենք ունեցել մի դեպք, որ այս մարմինները հեռացրել են երեխաներին բռնարար կամ վտանգավոր ընտանիքից: Հայաստանում դա հնարավոր է անել միայն դատական կարգով, որը կարող է տարիներ տեւել, իսկ երեխաները շարունակում են մնալ անվտանգության լուրջ ռիսկի տակ եւ սկսում են օտարվել ծնողից:

- Այդ դեպքերում, երբ մայրը որոշում է վերադառնալ բռնարարի մոտ, չնայած երեխան հրաժարվում է գնալ, չկա կառույց, որը կդիտարկի իրավիճակը եւ կպաշտ-

> պանի երեխային ընտանեկան բռնությունից: Երեխաների պաշտպանության համակարգը ակտիվացնելու մեր ջանքերը չեն հաջողվել, որովհետեւ այս կառույցներն ուղղակի անտեսում են երեխայի լավագույն շահը:
>
> *«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ*

Հաշվի առնելով այն, որ Հայաստանը մեծ բաց ունի երեխայի պաշտպանության ծառայություններում, մենք առաջարկում ենք երեխաների պաշտպանության շվեդական համակարգի[27] կարճ նկարագրությունը ցույց տալու համար, թե մեծ հաշվով ինչ է պետք անել եւ ինչպիսի ծառայություններ պետք է առաջարկել երեխաներին: Այս նշումները արվել են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցչի կողմից:

2005 թ. ընտանեկան բռնության խնդիրներով տասնամյա պայքարից հետո Շվեդիան գիտակցեց երեխաների պաշտպանության մասնագիտացված համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով ընտանեկան բռնության էական ազդեցությունը երեխաների վրա՝ սկսած տրավմայի մեծ հավանականությունից մինչեւ սովորած վարքի միջոցով բռնության վերարտադրություն հասարակությունում, երբ այս երեխաները դառնում են չափահաս, Շվեդիան եւ շատ այլ երկրներ կարեւորում են ընտանեկան բռնության ականատես կամ ուղղակիորեն բռնության ենթարկված երեխաների հետ աշխատանքը: <u>Երեխային երբեք չի թույլատրվում շարունակել ապրել կամ վերադառնալ այն ընտանիք, որտեղ առկա է բռնություն:</u>

Երբ ոստիկանությունը կամ աջակցման կենտրոնը նկատում է, որ առկա է բռնություն, նրանք անմիջապես ահազանգում են

---

27 Այս մոդելը 2019 թվականին ներկայացրել է շվեդ սոցիալական աշխատողը Հայաստան կատարած TAIEX այցի շրջանակներում:

երեխաների հարցերով զբաղվող ծառայություններին, որոնք իրականացնում են համապատասխան գործողություններ: Յուրաքանչյուր անձ, որը առնչություն ունի երեխայի հետ, այդ թվում՝ հարեւան, ուսուցիչ, բժիշկ, ոստիկան, պարտավոր է հաղորդում ներկայացնել այն դեպքերում, երբ տեսնում կամ կասկածում են ինչ-որ բան: Առողջապահության, նախակրթարանների, դպրոցների եւ բարձրագույն կրթության ոլորտի մասնագետները ընտանեկան բռնության մասնագետների հետ միասին մշակում են երեխայի կարիքներին համապատասխան աջակցություն: Այս մոտեցումը երեխայակենտրոն եւ զոհակենտրոն է:

Երեխայի համար նշանակվում է սոցիալական աշխատող, որը համակարգում է գործընթացն ընտանեկան բռնության ոլորտի սոցիալական աշխատողի հետ: Երեխաների պաշտպանության համակարգը գնահատում է, թե որքանով անվտանգ է եւ բարենպաստ, որ երեխան ապրի իր ծնողների հետ: Սոցիալական ծառայությունները ուսումնասիրում են երեխայի վիճակը եւ հայտնում դատարանին, որն էլ կայացնում է վերջնական որոշում: Երեխաների խնամքի հարցերով որոշումները կայացվում են՝ հաշվի առնելով, թե ով ավելի լավ կարող է խնամել երեխային, այդ թվում՝ ապահովելով երեխայի հուզական բարեկեցությունը եւ այն հարցը, թե ով կարող է դրական օրինակ լինել: Իսկ Հայաստանում ընդհակառակը խնամակալությունը տրվում է ծնողին, որը ավելի շատ ֆինանսական միջոցներ ունի, նույնիսկ եթե նա բռնարար է կամ ունի ալկոհոլային կախվածություն:

Զարգացած երկրներում ընդունված է, որ երեխաները հարցաքննվում են ընդամենը մեկ անգամ, եւ պետք է պատմեն իրենց պատմությունը միայն մեկ անգամ: Նրանք այլեւս չեն տրավմատիզացվում շատ հարցազրույցներով: Հարցազրույցը վարում է ոստիկանը, որը կրում է քաղաքացիական հագուստ երեխայի համար հարմարավետ տարածքում: Հարցազրույցը վարող ոս-

տիկանը, որը մասնագիտանում է բոլոր տարիքի երեխաների հետ աշխատանքի մեջ, ինտենսիվ վերապատրաստում է անցել եւ շարունակում է անցնել 2 տարին մեկ: Սովորաբար հարցազրուցավարը կին է:

Սոցիալական աշխատողը, հոգեբանը եւ նույնիսկ ոստիկանները կարող են հետեւել հարցազրույցին գաղտնի սենյակից, այդ ժամանակ հոգեբանից ու սոցիալական աշխատողից ճշտում են՝ արդյո՞ք նրանք ունեն հարցեր ավելացնելու համար: Հարցազրույցը ձայնագրվում է եւ օգտագործվում է դատարանում՝ որպես ապացույց: Երեխան չի գնում դատարան, ինչը ճիշտ հակառակն է Հայաստանում, որտեղ օրինակ 5 տարեկան երեխաները պետք է ներկայանան երկու ծնողների դիմաց եւ պետք է նշեն, թե որ ծնողի հետ են ուզում ապրել: Սա երեխայի իրավունքների խախտում է եւ ցավալի ու վնասակար ընթացակարգ:

Շվեդիայում դեպքը վարում են մասնագետները, որոնք լավագույն լուծումն են գտնում տվյալ երեխայի համար: Երեխայի պաշտպանության կենտրոնը շարունակում է աշխատել ընտանեկան բռնության աջակցման կենտրոնի սոցիալական աշխատողի ու հոգեբանի հետ, որպեսզի մշակվի միջամտության ռազմավարություն: Երեխայի դեպք վարողը հետեւում է բոլոր խորհրդատվական հանդիպումներին սոցիալական ծառայությունների, բժիշկների, ոստիկանության, հոգեբանների ու ուսուցիչների հետ: Սա բազմոլորտ արձագանքի մաս է, որը բացակայում է Հայաստանում:

Երեխայի հետ աշխատանքը, որը անդրադառնում է եւ մեղմացնում հետտրավմատիկ սթրեսային խանգարման հետեւանքով առաջացած մեղքի զգացումը, վախը, մղձավանջները, գիշերամիզությունը եւ այլն, կարող է շատ երկար տեւել: Արական սեռի երեխաները հատուկ կարիքներ ունեն: Հայաստանում տղաները

կարող են սովորել եւ ընդօրինակել վերահսկող վարք վաղ տարիքից, քանի որ հայկական ընտանիքներում տղաներից ակնկալում են վերահսկել իրենց քույրերի եւ երբեմն նույնիսկ մայրերի գործողություններն ու գտնվելու վայրը: Տղաները մեծանում են ընտանիքի կին անդամների նկատմամբ իրավունքի եւ լիազորության զգացումով: Հաճախ մենք տեսնում ենք պատանիների, որոնք նույնպես ֆիզիկական բռնություն են կիրառում իրենց մոր վրա կամ էլ մնում են իրենց բռնարար հոր հետ: Ընտանեկան բռնության զոհ դարձած երեխաների հետ աշխատելիս կարեւոր է հաշվի առնել այս գենդերային առանձնահատկությունները:

Երեխաների խնամակալությունը եւ դատական քննություն

2018 թ. քաղաքացիական օրենսգիրքը մասնավորապես 22-րդ բաժնում սահմանում է ընտանեկան վեճերի համար վարույթի առանձնահատկությունները: Հատկապես 203-րդ հոդվածը սահմանում է դատարանների պարտավորվածությունը՝ գործել երեխայի լավագույն շահը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով: Ընտանեկան բռնությամբ զբաղվող կազմակերպությունների փորձը ցույց է տալիս, որ նախքան դատարանի կողմից երեխաների գտնվելու վայրը որոշելը, այն երեխաները, որոնք շարունակում են ապրել բռնարարի հետ, զրկված են մորը տեսնելու իրավունքից, իսկ վերջինս զրկված է տեսակցության իրավունքից նույնիսկ այն դեպքերում, երբ երեխան մանկահասակ է, օրինակ՝ կրծքով կերակրման ժամանակահատվածում: Իրավական պարտավորությունները շարունակում են մնալ խնդրահարույց դատական համակարգում: Դատական լսումները հետաձգվում են անհարկի կամ բավարար չափով կարեւորություն չի տրվում երեխայի լավագույն շահին: Դատավորները սուբյեկտիվ մոտեցում են ցուցաբերում եւ գենդերային խտրականությամբ են առաջնորդվում իրենց դատողություններում:

2018 թ. հետո մի քանի միջնորդություններ են ներկայացվել դատարան այն պահանջով, որ երեխայի ժամանակավոր խնամակալությունը տրվի մորը (բռնարար հորից հեռու), մինչեւ դատարանը վերջնական որոշում կկայացնի: Որոշ դեպքերում դատավորները հաստատում էին միջնորդությունը, այլ դեպքերում էլ մերժում էին՝ բացատրելով, որ չկան հիմնավոր պատճառներ դրա համար: Դատարանի նման տարբեր որոշումները խոսում են դատավորների սուբյեկտիվության եւ դատավարական նորմերի բացակայության մասին:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի փաստաբան

Ստամբուլյան կոնվենցիայի 31-րդ հոդվածը սահմանում է, որ կողմերը պետք է կիրառեն բոլոր օրենսդրական եւ այլ անհրաժեշտ միջոցառումները՝ երաշխավորելով, որ տեսակցության կամ խնամակալության իրավունքը վտանգի տակ չդնի զոհի կամ նրա երեխաների իրավունքներն ու անվտանգությունը[28]: Ընտանեկան բռնության դեպքերում երեխաների հետ կապված հարցերը հաճախ միակ կապող օղակն են հանդիսանում զոհի եւ բռնարարի համար: Շատ զոհերի եւ նրանց երեխաների համար բռնարարի հետ շփում ունենալու կարգադրություններին համապատասխանելը կարող է մեծ ռիսկի տակ դնել նրանց անվտանգությունը[29]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես անդրադառնում է այս խնդրին «Օ.Ս.Ի-ն (Օ.Շ.Ի.) եւ ուրիշներն ընդդեմ Ռումինիայի» դեպքի հետ կապված: Իր որոշման մեջ

28 Տե՛ս Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, https://rm.coe.int/168046246d:

29 Տե՛ս Explanatory Report to the Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, paragraph 175-176, https://rm.coe.int/16800d383a:

դատարանը պնդում է, որ ծնողին երեխայի խնամակալությունը հանձնելիս պետք է նախապես հաշվի առնել երեխայի համար ընտանեկան բռնության ենթարկվելու բարձր ռիսկը[30]:

Հայաստանում այն վեճերը, որոնք ներառում են երեխաներին, ինչպես օրինակ՝ ալիմենտի իրավունքը, տեսակցության իրավունքի տրամադրումը, երեխայի խնամակալության հարցը, դիտարկվում են՝ հիմնված ընդհանուր կանոնակարգերի վրա՝ առանց հաշվի առնելու ընտանեկան բռնության առկայությունը: Սա հիմնված է այն սկզբունքի վրա, որ բռնարարն ու բռնության զոհը ունեն հավասար իրավունքներ եւ երաշխիքներ: Հետեւաբար, ընտանեկան բռնության փաստը ինքնին որեւէ սահմանափակում կամ պատժամիջոց չի նախատեսում բռնարարի նկատմամբ: Ավելին, գործնականում ընտանեկան բռնության որոշ դեպքերում բռնարարները արժանանում են ավելի բարենպաստ դատողությունների, քան բռնության զոհերը: Այսպիսով՝ դատարանները հաճախ ավելի մեծ կշիռ են տալիս բռնարարի ունեցվածքին եւ անձնական շահերին, քան բռնության զոհին: Հետեւաբար դատարանները վճիռ են կայացնում անհամաչափ ցածր ալիմենտ վճարելու մասին եւ սահմանում են տեսակցության այնպիսի ժամանակացույցներ, որոնք ամբողջովին անտեսում են բռնության կրկնության կամ շարունակման բարձր ռիսկը եւ այդպիսով սպառնալիք են առաջացնում՝ երեխային վտանգելու հոգեբանորեն եւ ֆիզիկապես: Գործնականում դատավորները երեխայի համար բնակության վայր սահմանում են բռնարարի մոտ, որովհետեւ նրանք պատճառաբանում են, որ բռնության զոհը ներկայումս չունի շքեղ բնակության վայր կամ բարձր վարձատրվող աշխատանք եւ այլն[31]:

Առաջարկներ

1. Երեխայի պաշտպանության իրական ծառայությունն-

ներ պետք է հիմնվեն, որոնք կվարեն մասնագետներ, որոնք վճարվելու են այդ աշխատանքի համար եւ վերապատրաստված կլինեն ընտանեկան բռնության ոլորտում: Մեխանիզմներ եւ ընթացակարգեր պիտի մշակվեն:

2. Ընտանեկան բռնության օրենքը պետք է բարեփոխվի այնպես, որ երեխայի պաշտպանության ծառայությունների համար անմիջապես հնարավոր լինի խնդրային ու վտանգավոր ընտանիքից երեխային ժամանակավորապես հեռացնել մինչեւ դատարանի որոշման ստանալը:

3. Երեխաները չպետք է կրկնակի վկայություններ տան կամ կանգնեն դատարանում երկու ծնողների առաջ, այլ նրանք պետք է մեկ անգամ վկայություն տան հատուկ սենյակում հմուտ հարցազրուցավարի հետ:

4. Երեխաների խնամակալությունը պետք է տրվի այն ծնողին, որը բռնարար չէ, եւ խնամակալության որոշումները պետք է կայացվեն արագացված եղանակով մի քանի ամսում եւ չթույլատրվեն, որ դրանք ձգձգվեն դատարաններում տարիներ շարունակ:

5. ՀՀ քրեական օրենսգիրքը երեխաների ներկայությամբ կատարված ընտանեկան բռնությունը որպես ծանրացուցիչ հանգամանք պետք է սահմանի:

6. Օրենքի բարեփոխումներ պետք է իրականացնել, որպեսզի թույլատրվի եւ ապահովվի աջակցող կենտրոնների ներգրավվածությունը դատավարական գործընթացում ընտանեկան բռնության զոհերի շահերը

պաշտպանելու նկատառումով: Աջակցող կենտրոնները կլինեն երեխայի լավագույն շահի երաշխավորները:

7. **Ստեղծել երեխաների տեսակցության հսկվող չեզոք վայրեր, որոնք կվարեն մասնագետները:**

8. **Ընտանեկան բռնության մեջ մասնագիտացված դատավորներ կրթել, որոնք կլինեն զոհակենտրոն ու կպաշտպանեն երեխայի շահերը:**

Երեխաներին վերաբերող գործերով կայացված դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը (ԴԱՀԿ)

Ընտանեկան բռնության դեպքերով կայացված դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը մեկ այլ խնդիր է: Դատարանների՝ դատական ակտերի հրապարակումից հետո բռնարարներից շատերը խոչընդոտներ են ստեղծում մայրերի համար դատարանի որոշմամբ սահմանված կարգով իրենց ծնողական պարտականությունները, տեսակցությունները կամ խնամակալությունը ստանձնելու հարցում: Դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը չունի պատշաճ կարգավորում: Մասնավորապես, հարկադիր կատարման ծառայության աշխատակիցները պատրաստվածություն եւ անհրաժեշտ հմտություններ չունեն ընտանեկան բռնության ոլորտում: Հիմնվելով հաստատված կարծրատիպերի եւ նեղ անձնական ընկալումների վրա՝ հարկադիր կատարման ծառայության աշխատակիցները հաճախ ակնհայտ կողմնակալ մոտեցում են ցուցաբերում՝ հօգուտ ընտանեկան բռնության տղամարդ բռնարարի դատական ակտերի կատարման ընթացքում: Արդյունքում, դատական ակտերի կատարումը հօգուտ բռնության զոհի արհեստականորեն հետաձգվում է, եւ որոշ դեպքերում դատական ակ-

տը կարող է ընդհանրապես չիրականացվել:

2016 թ. մի խումբ մայրեր «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի անդամների աջակցությամբ բողոքի ցույց անցկացրին հարկադիր կատարման ծառայության շենքի դիմաց: Ընտանեկան բռնության զոհերն ու մայրերը ունեին դատական որոշումներ, որոնցով նրանց թույլատրվել էր երեխաների խնամակալությունը, բայց դրանց հարկադիր կատարումը խոչընդոտել էին հայրերը[32]: Այս հանրային գործողությունից հետո մայրերից մի քանիսին հաջողվեց վերականգնել իրենց իրավունքները հարկադիր կատարման ծառայության միջոցով, որը վերջապես գործարկվեց:

Դատական որոշումների կատարման խախտումները հազվադեպ են պատժվում, եւ դա կախված է հանրային ճնշումից, կապերից եւ որոշումները գործարկելու զոհի պնդումներից:

Առաջարկներ

1 **Ընտանեկան բռնության օրենքում ավելացնել դրույթ՝ համաձայն որի դատարանի որոշումը չկատարելու համար բռնարարի նկատմամբ կկիրառվի ավելի խիստ պատիժ:**

2 **Ընտանեկան բռնության օրենքը բարեփոխել այնպես, որ պահանջվի 7 օրվա ընթացքում դատարանի որոշման կատարումը, իսկ հակառակ դեպքում կլինեն տուգանքի նշանակում եւ կալանավորում:**

---

32 Տե՛ս Բողոքի ակցիա ԴԱՀԿ-ի դիմաց երեխաներին մայրերին վերադարձնելու պահանջով, 01.11.2016, https://www.tert.am/am/news/2016/11/01/DAHK/2179274:

VIII

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնության դեպքերով իրավապահ մարմիններին հաղորդման ներկայացումը

Բժիշկները կարեւոր դերակատարում ունեն ընտանեկան բռնության դեպքերի արձագանքման եւ կանխարգելման հարցում: Չնայած բժիշկները տեղեկացված են ընտանեկան բռնության դեպքերը իրավապահ մարմիններին զեկուցելու իրենց պարտավորության մասին[33], կանանց իրավապաշտպան կազմակերպությունները հակառակի մասին են վկայում: Առողջապահության նախարարության պահանջը միատեսակ չի իրականացվում, եւ շատ են խախտումները:

> Իջեւանում բժիշկների հետ դասընթացի ժամանակ ամբողջ լսարանն ուներ իհարկե նույն կարծիքը, բայց մեկն ասաց. *«Դե պարզ ա, որ ասենք, ոտը ջարդած լինի, կապ չունի ինչ ա, պետք ա ասենք ոստիկանությանը: Բայց*

33 Տե՛ս 18.10.2019 թվականի ՀՀ առողջապահության նախարարի «Հիվանդանոցային բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանում պացիենտի վարման գործելակարգը հաստատելու մասին» №44-Ն հրամանը https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135660:

եղել են դեպքեր, որ մարդը ծեծել ա, ու ինքը ասենք եկել ա մեր մոտ, ես տեսել եմ էտ կապտած մասը, ասել եմ՝ մարդդ ա նախշե՞լ, ասել ա՝ հա, ես դե ի՞նչ կարամ անեմ, իրանց գործն ա, հո ընտանիք չե՞մ քանդելու, ոստիկանություն ասեմ, ի՞նչ, էտ կինը ուզի, կասի էլի, էս փոքր քաղաք ա, ես հետո էտ մարդկանց հետ ո՞նց շարունակեմ շփվել»:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ

Համաձայն «ՀՀ-ում բռնության ենթարկված կանանց հետ առընչություն ունեցող առողջապահական ծառայություն մատուցողների գիտելիքի, դիրքորոշումների եւ պրակտիկաների» քանակական հետազոտության արդյունքների՝ բժշկական աջակցության եւ միջամտության ամենամեծ խոչընդոտող գործոնը տեղեկատվության պակասն է եւ հմտությունների բացակայությունը, թե ինչպես վարվել բռնության զոհ հանդիսացող կանանց հետ: Համաձայն այդ հետազոտության՝ ընդհանուր թերապեւտների, գինեկոլոգների եւ բժիշկների մեծ մասը այն համոզմունքն ուներ, որ առողջապահական ծառայություն մատուցողների հիմնական դերը կանանց հետ խոսելն ու խորհուրդներ տալն է: Այնուամենայնիվ հարցման մասնակիցների մոտավորապես կեսն էր հարմար զգում ուղիղ հարցեր տալ պացիենտներին բռնության մասին, եթե նրանք որեւէ կասկածներ էին ունենում: Հատկանշական է, որ հարցված բժիշկներից ոչ մեկը չէր տեսնում առողջապահական ոլորտի մասնագետների դերն ընտանեկան բռնության դեպքերով հաղորդում տալու հարցում[34]:

34 Տե՛ս Zaruhi Arakelyan, “Knowledge, Attitude and Practice of Healthcare Providers Who May Come in Contact With Women Who Have Experienced Intimate Partner Violence: a Qualitative Research,” School of Public Health at American University of Armenia, 2016, http://sph.aua.am/files/2016/06/Zaruhi-Arakelyan-Masters-Thesis.pdf:

Ընտանեկան բռնության զոհերը հիմնականում խուսափում են իրավապահ մարմիններին դիմելուց եւ նախընտրում են միայն բժշկական օգնության դիմել՝ հավատացած լինելով, որ այդ մասին իրավապահ մարմիններին չի հաղորդվի, ուստի առողջապահության բնագավառի աշխատակիցները հնարավորություն ունեն ընտանեկան բռնության մասին տեղեկություն ստանալ ավելի վաղ փուլում եւ անհամեմատ ավելի շատ դեպքերում, քան իրավապահները: Սակայն հաշվի առնելով, որ Հայաստանում ավանդական/պահպանողական արժեքները գերիշխող են, արտաքին միջամտությունն ընտանեկան հարաբերություններին պետության կողմից կարող է հակառակ ազդեցությունն ունենալ եւ բացասական հետեւանքների հանգեցնել: Մենք պետք է նաեւ նշենք, որ ընտանեկան բռնության դեպքերում բուժաշխատողների՝ պարտադիր հաղորդում ներկայացնելը հաճախ չի օգնում զոհերին, այլ իրականում սպառնալիք է դառնում նրանց անվտանգության համար[35]: Ուստի միջամտության շրջանակը սահմանելիս անհրաժեշտ է ամենայն զգուշությամբ հաշվարկել նման միջամտության անհրաժեշտությունն ու հնարավոր հետեվանքները, ինչպես նաեւ մշակել ստանդարտ ընթացակարգեր դեպքի մասին ոստիկանություն կամ ընտանեկան բռնության աջակցման կենտրոն հաղորդելու վերաբերյալ[36]:

Բժիշկների՝ ընտանեկան բռնության դեպքերով հաղորդում ներկայացնելու խնդրին անդրադառնում է նաեւ ստամբուլյան կոնվենցիան, որի 28-րդ հոդվածի համաձայն. «Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահո-

35 Տե՛ս Mandatory Reporting of Domestic Violence to Law Enforcement by Health Care Providers: A Guide for Advocates Working to Respond to or Amend Reporting Laws Related to Domestic Violence, https://www.futureswithoutviolence.org/userfiles/Mandatory_Reporting_of_DV_to_Law%20Enforcement_by_HCP.pdf էջ 2:

36 Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, https://rm.coe.int/168046246d:

վելու համար, որպեսզի ներքին օրենսդրությամբ որոշ մասնագետների համար նախատեսված խորհրդատվության կանոնները խոչընդոտ չհանդիսանան, համապատասխան պայմանների առկայությամբ, նրանց կողմից իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին հաղորդում ներկայացնելու հնարավորության համար, եթե նրանք ողջամիտ հիմքեր ունեն կարծելու, որ տեղի է ունեցել սույն կոնվենցիայի իմաստով բռնության որեւէ լուրջ դրսեւորում, եւ ակնկալվում են նման բռնության հետագա լուրջ դրսեւորումներ»[37]:

Կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ այն մասնագետները (օրինակ՝ բժիշկներն ու հոգեբույժները), որոնք ունեն մասնագիտական գաղտնիքի պահպանման պարտավորություն, ունենան հնարավորություններ՝ հաղորդելու իրավասու կազմակերպություններին կամ իրավապահ մարմիններին, եթե իրենք ունեն հիմնավոր փաստեր՝ հավատալու, որ այս Կոնվենցիայի շրջանակներում քննարկվող բռնության տեսակներից որեւէ մեկը տեղի է ունեցել անձի նկատմամբ, եւ հետագայում եւս կլինեն բռնության լուրջ դրսեւորումներ:

Այսպիսով՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցը նշում է երկու պայման, որոնց դեպքում բժիշկը պետք է հայտնի իրավասու կազմակերպություններին կամ իրավապահ մարմիններին, դրանք են՝

- երբ զոհը արդեն ենթարկվել է դաժան բռնության,
- բռնությունը ամենայն հավանականությամբ կկրկնվի:

---

37 Տե՛ս Explanatory Report to the Council of Europe Convention on Preventing and Combating Violence Against Women and Domestic Violence, Paragraph 146-148, https://rm.coe.int/16800d383a:

Բացատրական զեկույցը նաեւ ընդգծում է, որ պետությունները կարող են ընտրել հաղորդում ներկայացնելու եւ գաղտնապահությունը խախտելու պայմանները, որոնք կարող են ներառել, մասնավորապես, *«զոհի նախնական համաձայնությունը՝ բացառությամբ որոշ առանձնահատուկ դեպքերի, ինչպիսին են՝ զոհի անչափահաս լինելը կամ մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության պատճառով իրեն պաշտպանելու անընդունակությունը»:*

Այսպիսով՝ ստամբուլյան կոնվենցիան թույլ է տալիս մասնագետներին խախտել գաղտնապահության կանոնները եւ հաղորդել ընտանեկան բռնության դեպքերի մասին վերոնշյալ իրավիճակներից ելնելով:

ԱՄՆ-ում բոլոր նահանգներում՝ բացառությամբ 3 նահանգի, բժիշկները պարտավորված են հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններին ընտանեկան բռնության դեպքերի մասին: Յուրաքանչյուր նահանգ իր կարգավորումներն է սահմանում ընտանեկան բռնության դեպքերը հաղորդելու վերաբերյալ եւ պարտադիր հաղորդման համար բացառություններ է նախատեսում: Այսպես, ԱՄՆ Փենսիլվանիա նահանգում բժիշկները չպետք է հաղորդում ներկայացնեն իրավապահներին[38], եթե.

- Զոհը չափահաս է եւ ստացել է մարմնական վնասվածքներ ընտանեկան բռնության պատճառով,
- Զոհը տեղեկացված չէ բժշկի՝ հաղորդում ներկայացնելու պարտավորության մասին,
- Զոհը համաձայն չէ, որ բժիշկը հաղորդում ներկայացնի իրավապահ մարմիններին,

38 Տե՛ս https://family.findlaw.com/domestic-violence/mandatory-reporting-of-domestic-violence.html:

- Զոհը նախընտրում է գնալ ընտանեկան բռնության աջակցման ծառայություն եւ հաղորդում չներկայացնել ոստիկանություն:

Այսպիսով՝ ԱՄՆ տարբեր նահանգների բժիշկների՝ ընտանեկան բռնության դեպքերով պարտադիր հաղորդում ներկայացնելու իրավական կարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ զոհի անվտանգությունն ու պաշտպանությունը առաջնահերթություն է, եւ ոստիկանության հաղորդելը ստանդարտ ընթացակարգ չէ:

Սեռական բռնության դեպքերի հետ աշխատող կազմակերպությունները վկայում են, որ բժիշկները հիմնականում հաղորդում են կատարված հանցագործությունը: Այնուամենայնիվ, սա չի վերաբերում ընտանեկան բռնության դեպքերին:

Բացի այդ՝ իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու պատճառով բռնության զոհը չպետք է ենթարկվի զուգընկերոջ կողմից բռնության նոր դրսեւորումների, ինչպես նաեւ հաղորդում ներկայացնելը չպետք է հետ կանգնեցնի զոհերին բժշկական օգնության դիմելուց: «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի շահառուներից մեկը բռնաբարությունից անմիջապես հետո դիմել էր բժշկական աջակցության, սակայն բժիշկը նրան տեղեկացրել էր, որ զննումից հետո կդիմի իրավապահ մարմիններին, ինչի պատճառով կինը հրաժարվել էր բժշկական ծառայություններից[39]:

Սակայն մինչ օրս ընտանեկան բռնության օրենքով չկան նախատեսված դրույթներ, որոնք վերաբերում են ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ոստիկանությանը, քննչական կոմիտեին կամ դատախազությանը հաղորդման պայմաններին: ՀՀ-ում

39 Հարցազրույց «Կանանց ռեսուրսային կենտրոն» եւ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

բժշկական գաղտնիքը երաշխավորող ոչ մի օրենք չի պարզաբանում դրա հրապարակման իրավաչափ պայմանները: Այս իրավիճակը վերլուծության եւ ուշադրության կարիք ունի, որով անդրադարձ կկատարվի գաղտնապահության իրավունքին եւ զոհի անվտանգությանը միաժամանակ: Ընտանեկան բռնության դեպքերում բժշկական գաղտնիքի հրապարակումը միտված է հանցագործությունների կանխարգելմանը կամ բացահայտմանը: Նման հրապարակումը պետք է նաեւ նախատեսված լինի օրենքով՝ ապահովելով դրա չափանիշները եւ սահմանափակումները[40]:

Այս խնդրին է վերաբերում մեկ այլ պետական որոշում, մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 18.10.2019 թվականի № 44-Ն հրամանի 2-րդ գլխի 12-րդ կետը՝ *«Անգիտակից վիճակում գտնվող, հրազենային վիրավորումներով, դանակահարությունների կասկածներով, վնասվածքներով, կոտրվածքներով, այրվածքներով, ցրտահարություններով, բռնության հետքերով, թունավորումներով (ալկոհոլային, կենդանիների խայթոցից, դեղորայքային եւ քիմիական նյութերով), ճանապարհատրանսպորտային պատահարի հետեւանքով տուժած պացիենտների բժշկական կենտրոն դիմելու (բերելու), ինչպես նաեւ բժշկական հաստատություն դիակի տեղափոխման դեպքերի վերաբերյալ Ընդունարանի հերթապահ բուժանձնակազմի կողմից սահմանված կարգով տեղեկացվում է ՀՀ ոստիկանության տարածքային բաժին»*[41]:

Վերոնշյալ դրույթներից չի հետեւում, որ պետությունը պետք է անտեսի ընտանեկան բռնության զոհերին պաշտպանելու իր պարտավորությունը, սակայն կարիք կա մշակելու ոլորտը կարգավորող իրավական մեխանիզմներ: Սակայն ոլորտը կարգա-

---

40 Տե՛ս Գոհար Հակոբյան, «Բժշկական գաղտնիքը եւ ընտանեկան բռնությունը», Պետություն եւ իրավունք, N 2-3 (76-77), Երեւան, 2017, էջ 32-41:

41 Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=135660:

վորող իրավական մեխանիզմներ մշակելուց առաջ կարեւոր է հասկանալ, թե այդ մեխանիզմներն ինչ ազդեցություն կունենան ընտանեկան բռնության զոհի անվտանգության եւ առողջության պահպանման իրավունքների վրա: Պետք է հաշվի առնել, որ բժիշկների հաղորդում ներկայացնելը կարող է լուրջ ռիսկ հանդիսանալ բոլոր այն անձանց համար, որոնք շարունակում են ապրել բռնարարի հետ՝ պատճառ դառնալով բռնության նոր եւ ավելի ուժգին դրսեւորումների: Պետք է նշել, որ ներքին օրենսդրությունը ավելի մեղմ մոտեցում է ցուցաբերում ընտանեկան բռնության նկատմամբ (ընտանեկան բռնության հիմնական դեպքերը քաղաքացիական հետապնդման դեպքեր են, եւ հիմնականում որպես պատիժ վարչական պատժամիջոցներ են սահմանվում): Այսպիսով՝ բժիշկների՝ ընտանեկան բռնության դեպքերով իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելը չի ենթադրում բռնարարի համար խիստ պատիժ, եւ հաճախ ոստիկանությունը պատասխանատվության չի ենթարկում բռնարարին, եւ զոհի անվտանգությունը երաշխավորված չէ:

Մեկուսի եւ գաղտնի պայմաններում բժշկական խորհրդատվություն

Պացիենտներին մեկուսի եւ գաղտնի պայմաններում բժշկական խորհրդատվության տրամադրումը բժիշկների կողմից կարեւոր նախապայման է եւ երաշխիք, որն ամրագրված է «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում, որը սակայն շատ հաճախ խախտվում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց դեպքում[42]: Ընտանեկան բռնության ենթարկված շատ կանանց բժշկական խորհրդատվության ժամանակ ուղեկցում են իրենց ամուսինները կամ սկեսուրները, որոնք

42 Հարցազրույց «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցչի հետ:

մասնակցում են նաեւ բժշկական խորհրդատվությանը, որը լուրջ խոչընդոտ է պացիենտից իր առողջական վիճակի մասին հավաստի փաստեր ստանալու համար: Հաշվեհարդարի վախը թույլ չի տալիս զոհին բժշկին պատմել իր անձնական խնդիրների կամ ընտանեկան բռնության մասին բռնարարի ներկայությամբ, ոչ էլ բժիշկը հնարավորություն ունի զոհին աջակցման կենտրոն ուղղորդել: Այդ պատճառով էլ կորչում է ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի հնարավորությունը:

Առաջարկներ.

1. **վերապատրաստել բժիշկներին եւ բուժքույրերին ընտանեկան բռնության առանձնահատկությունների թեմայով եւ տեղեկացնել նրանց, թե ինչպես խորհրդատվություն անցկացնել բռնության զոհերի հետ,**

2. **բժիշկների համար մշակել ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերով իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու պայմանները եւ մեխանիզմները, որը միաժամանակ թույլ կտա հստակ գնահատել բոլոր հնարավոր ռիսկերը,**

3. **ներքին կարգով հրահանգել, որ բժշկի եւ պացիենտի խորհրդատվությունը տեղի ունենա գաղտնի եւ մեկուսի պայմաններում, որը կբացառի ընտանեկան բռնության զոհին ուղեկցող բռնարարի եւ այլ անձանց ներկայությունը,**

4. **առողջապահության աշխատակիցների համար մշակել ներքին կարգեր, որոնց հիման վրա նրանք կուղղորդեն ընտանեկան եւ սեռական բռնության զոհերին աջակցման կենտրոններ:**

Բժշկական ծառայությունների մատչելիություն

Ընտանեկան եւ սեռական բռնության զոհ դարձած կանայք ունենում են առողջական լուրջ խնդիրներ, որոնք առաջանում են այդ բռնության պատճառով: Այդ խնդիրները կարելի է դասակարգել 3 հիմնական խմբի՝

- ընդհանուր բնույթի խնդիրներ,
- սեռական եւ վերարտադրողական առողջության խնդիրներ,
- հոգեկան առողջության խնդիրներ:

Ընտանեկան եւ սեռական բռնության հետեւանքները կարող են լինել անմիջապես բռնության ակտից հետո, սակայն կարող են նաեւ արտահայտվել ավելի ուշ: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ որքան ավելի ծանր է բռնությունը, այնքան ավելի ծանր են դրա հետեւանքները կնոջ ֆիզիկական եւ հոգեկան առողջության վրա[43]: Ընդ որում բռնության դադարեցումից բավական ժամանակ անց դեռ կարող են դրսեւորվել բռնության հետեւանքները: Այն կանայք, որոնք վերապրել են ֆիզիկական եւ սեռական բռնություն իրենց զուգընկերների կողմից, ավելի հավանական է, որ կունենան առողջության վատթարացում, խրոնիկ ցավեր, գլխապտույտներ ու գլխացավեր, ստամոքսային ցավեր, սուր իշեմիկ ցավեր, քան այն կանայք, որոնք բռնության չեն ենթարկվել[44]:

---

43 Տե՛ս Understanding and addressing violence against women, WHO, 2012, https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77431/WHO_RHR_12.43_eng.pdf;jsessionid=906FA05F5221C272C82C5322834A2840?sequence=1:

44 Տե՛ս Campbell J et al. Intimate partner violence and physical health consequences. Archives of Internal Medicine, 2002, 162(10): 1157–63:

Համաձայն «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի փորձի՝ ընտանեկան բռնության զոհ դարձած շատ կանայք ունենում են ուժեղ գլխացավեր, որոնք պայմանավորված են բռնարարների՝ տարիներ շարունակ կանանց գլխին ուժգին հարվածներ հասցնելու փաստով[45]: Գլխի շրջանում հարվածները սովորաբար չեն ունենում տեսանելի հետեւանքներ, ինչն էլ դարձնում է ֆիզիկական բռնության այս ձեւն առավել հաճախ կիրառվող բռնության ձեւերից: Ուղեղի վնասվածքները հաճախ են հանդիպում ընտանեկան բռնության զոհերի շրջանում:

Ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված շատ կանայք ունեն սեռավարակներ, ցավ սեռական հարաբերությունների ժամանակ, խրոնիկ ցավեր կանացի օրգանների շրջանում, անկանոն դաշտան եւ այլ դրսեւորումներ: Հաճախ բռնարարը սպառնում է կամ միտումնավոր վարակում է իր զուգընկերոջը ՄԻԱՎ-ով: ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող կանանց 98%-ը ՄԻԱՎ վարակվել է իրենց հիմնական զուգընկերոջից, կնոջ ՄԻԱՎ կարգավիճակի բացահայտումից հետո կանայք են, որ խտրականության են ենթարկվում ընտանիքում ամենից շատ[46]:

Ինչպես նշվում է «Հայաստանում ընտանեկան բռնության ազդեցությունը կնոջ սեռական եւ վերարտադրողական առողջության վրա» հետազոտության մեջ[47], ընտանեկան բռնության զոհ դարձած կանայք ունեն սեռական եւ վերարտադրողական առողջությանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ, որոնք հատկապես սրվում են տարիներ տեւող բռնության պատճառով: Կանանց

---

45 Հարցազրույց «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցչի հետ:

46 Տե՛ս Ալինա Պողոսյան, «ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց հիմնախնդիրները Հայաստանում եւ քաղաքականության արձագանքը» հետազոտություն, https://bit.ly/37JZYEI:

47 Տե՛ս «Հայաստանում ընտանեկան բռնության ազդեցությունը կնոջ սեռական եւ վերարտադրողական առողջության վրա» հետազոտություն, https://www.womensupportcenter.org/ARM_SRHR_FINAL_04122017-compressed.pdf:

նկատմամբ բռնությունն առավել սրվում է հղիության շրջանում, որը լուրջ սպառնալիք է մոր եւ պտղի առողջության համար: Հետազոտությանը մասնակցած շատ կանայք նշել են, որ ունեցել են բավական տրավմատիկ ծննդաբերություն, բռնության պատճառով վիժում, հղության ընթացքում միտումնավոր թերի սնունդ են ստացել, եւ նրանց չի թույլատրվել բժշկական խորհրդատվություն ստանալ: Հղիության հարկադիր ընդհատման եւ հարկադիր հղիության խնդիրն էլ է շատ տարածված կանանց այս խմբի շրջանում:

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ ֆիզիկական եւ սեռական բռնությունը կապված է կանանց շրջանում հոգեկան առողջության անբարենպաստ հետեւանքների ավելի մեծ ռիսկի հետ[48]: Ֆիզիկական եւ սեռական վնասվածքներին զուգահեռ բռնությունը հոգեբանական խնդիրների պատճառ է հանդիսանում: Առավել տարածված դրսեւորումներից են դեպրեսիան, ինքնասպանություն գործելու փորձերը, հետտրավմատիկ սթրեսային խանգարումը, տագնապայնությունը, ուտելու եւ/կամ քնելու խանգարումները եւ այլ դրսեվորումներ: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի փորձը ցույց է տալիս, որ այն կանայք, որոնք տարիներ շարունակ ենթարկվել են ընտանեկան բռնության, ունեն երկարատեւ հոգեբանական աջակցության կարիք: Պետք է նշել նաեւ, որ որոշ դեպքերում բռնարարները միտումնավոր ստիպում են կանանց ընդունել հոգեմետ դեղեր եւ հետագայում այս փաստը օգտագործում են երեխաների խնամքի ստանձնման դատավարական գործընթացներում՝ մեղադրելով զոհին ոչ ադեկվատ մայր լինելու մեջ[49]:

---

48 Տե՛ս Understanding and addressing violence against women, WHO, 2012, https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77431/WHO_RHR_12.43_eng.pdf;jsessionid=906FA05F5221C272C82C5322834A2840?sequence=1:

49 Հարցազրույց «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցչի հետ:

Ընդհանուր առմամբ Հայաստանում մարդիկ չեն հետեւում կանխարգելող բժշկական ուղեցույցին կանոնավոր բուժզննում անցնելու կամ անհրաժեշտ դեղորայք ընդունելու հարցում: Ընտանեկան բռնության ենթարկվող կանայք ավելի հավանական է, որ չեն դիմի կանխարգելիչ առողջապահական ծառայություններին, եւ նրանց հաճախ նույնիսկ չի էլ թույլատրվում գնալ բժշկի, որը էլ ավելի է վատթարացնում նրանց առողջությունը:

Համաձայն ՀՀ կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եւ սպասարկման մասին» № 318-Ն եւ № 1515-Ն որոշումների Հավելված 1-ի՝[50] առանձնացված են առանձին/հատուկ խմբեր, որոնք կարող են օգտվել անվճար բժշկական ծառայություններից: Սակայն հիշյալ խմբերի ցանկում բացակայում են ընտանեկան եւ սեռական բռնություն վերապրած անձինք:

> Ես կուզեմ մեջբերել Թագուհի Մանսուրյանի դեպքը, ով կացնահարվեց նախկին ամուսնու կողմից 2016 թ.: Մինչ օրս կինը վիրահատություններ է տանում առողջությունը վերականգնելու համար: Բժշկական մեծ ծախսերը մասամբ հոգում են Թագուհին եւ նրան աջակցող հասարակական կազմակերպությունը: Սակայն սա պետք է լինի նաեւ կառավարության պատասխանատվությունը:
>
> *«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ*

50 Տե՛ս «Պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եւ սպասարկման մասին» N 318-Ն եւ N 1515-Ն որոշումներ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=12227 https://www.arlis.am/documentview.aspx?docid=88089&fbclid=IwAR3B304-DDOSJHCBcYptp869q-YfwyfPyOIZ5DOopZEfdDnNbXmWGzsmu7U:

Առաջնային բժշկական խնամք բռնության ենթարկված անձանց համար

Բռնությունից խուսափելու եւ անվտանգության նկատառումներից ելնելով՝ ընտանեկան բռնության զոհերը կարող են հրատապ լքել իրենց տունը՝ բնակություն հաստատելով ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված ապաստարանում կամ իրենց ազգականների մոտ: Անվտանգ վայր տեղափոխվելուց հետո, որը հաճախ այլ մարզ է լինում, անձը կարող է ունենալ առողջության առաջնային պահպանման ծառայությունների անհրաժեշտություն:

ՀՀ կառավարության № 420-Ն որոշումը[51] վերաբերում է առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության եւ նրա մոտ բնակչության գրանցման կարգին: Այդ որոշման համաձայն՝ առողջության առաջնային պահպանման հաստատությունը փոխելիս եւ նոր բժշկի մոտ գրանցվելիս լրացվում է տեղափոխման ձեւաթուղթ, ինչպես նաեւ տեղափոխվում է պացիենտի բժշկական քարտը: Այս տեղափոխման ձեւաթուղթը ցույց կտա այն նոր հասցեն, թե որտեղ է տեղափոխվել պացիենտը: Այս տեղեկության հրապարակումը գաղտնապահության խախտում է եւ կարող է սպառնալիք հանդիսանալ ընտանեկան բռնության զոհի անվտանգության համար: Ինչպես նաեւ, ապաստարան եկող շահառուները, որոնք հեռու մարզերից են, առանց փաստաթղթերի նման տեղափոխման չեն կարող օգտվել առողջապահական ծառայություններից: Ապաստարանում գտնվող զոհերի հասցեն չի թույլատրվում հրապարակել, որպեսզի նրանց գտնվելու վայրը գաղտնի մնա՝

51 Տե՛ս «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության եւ նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» N 420-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64108:

անվտանգության նկատառումներից ելնելով: Առողջապահության նախարարությունը պիտի հատուկ կարգավորումներ մշակի ընտանեկան բռնության զոհերի բժշկական փաստաթղթերի տեղափոխման համար՝ երաշխավորելով նրանց անվտանգությունն ու գաղտնիությունը:

Առաջարկներ.

1. **Առողջապահական ոլորտի աշխատակիցներին վերապատրաստել ընտանեկան բռնության խնդիրների շուրջ,**

2. **Առողջապահության նախարարությունը պետք է մշակի ներքին կարգ, որով ընտանեկան բռնության զոհի համար թույլ կտա բժշկական փաստաթղթերի տեղափոխումը՝ առանց նոր հասցեն հրապարակելու՝ զոհի կամ ընտանեկան բռնության աջակցման կենտրոնի հարցմանը համաձայն,**

3. **ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի համար, որոնք լքել են իրենց բնակության վայրը անվտանգության նկատառումներով, անվճար առողջապահական ծառայությունների մատուցման երաշխիքի ապահովում պետության կողմից՝ համապատասխան իրավական ակտերի փոփոխության միջոցով:**

IX

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն եւ Մեծ Բրիտանիան, կան օրենսդրական կարգավորումներ, որոնցով դպրոցներն ունեն անմիջական պարտավորություն՝ հաղորդում ներկայացնելու երեխաների հարցերով զբաղվող համայնքային ծառայություններին բոլոր այն դեպքերում, երբ առկա է ընտանեկան բռնություն երեխայի կյանքում[52]: Հայաստանում դպրոցները չունեն նման պարտավորություններ, եւ Հայաստանում փաստացի չկա երեխայի պաշտպանության մարմին հատուկ իրավասություններով եւ պարտականություններով, որը կապահովի երեխայի անվտանգությունը: Երբ երեխան բացակայում է դպրոցից, որովհետեւ մայրը կամ երեխան բռնության է ենթարկվել, կամ ներկայանում է դասերին կապտուկներով, չկա որեւէ ընթացակարգ, որով դպրոցը հաղորդում կներկայացնի կատարված հանցագործության մասին ընտանեկան բռնության աջակցման կենտրոններին: Ավելին, շատ ուսուցիչներ եւ բժիշկներ նման դեպքերը որակում են որպես ընտանիքի մասնավոր կյանք[53]: Գյուղական համայնքներում այս խնդիրն առավել հրատապ

52 Տե՛ս Sterne A., Poole L. (2010). *Domestic Violence and Children, A Handbook for Schools and Early Years Setting.* London: Routledge:

53 Հարցազրույց «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցչի հետ:

է, քանի որ առկա գենդերային կարծրատիպերն ավելի արմատացած են այս համայնքներում: Գյուղում հաճախ առկա միակ դպրոցը պաշտպանում է բռնարարին՝ կնոջ նկատմամբ բռնությունը որակելով որպես ընդունելի նորմ[54]:

Երեխայի տեղափոխումը մեկ այլ դպրոց

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի № 1640-Ն եւ № 1365-Ն հրամանները սահմանում են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման եւ ազատման կարգը: Ծնողը տեղափոխման թերթիկը նախ ներկայացնում է երեխայի նոր դպրոց, որտեղ համապատասխան նշում է կատարվում, թե որ դպրոցն է ընդունում երեխային: Այնուհետ այն ներկայացվում է երեխայի նախկին դպրոց, որտեղ տեղեկանում են երեխայի նոր դպրոցի մասին եւ միայն դրանից հետո ծնողին տրամադրում երեխայի դպրոցական փաստաթղթերը, ընթացիկ գնահատականների եւ բացակայությունների մասին տեղեկանքը: Այսպիսով՝ նախկին դպրոցը տեղեկանում է երեխայի նոր դպրոցի գտնվելու վայրի մասին: Հաճախ բռնարարները գնում են երեխայի նախկին դպրոց նրան տեսնելու պատրվակով եւ բացահայտում են երեխայի նոր դպրոցի գտնվելու վայրը: Սա կարող է անվտանգության լուրջ սպառնալիք լինել: Եթե զոհը ապաստարանում է կամ մոր համար շատ վտանգավոր է գնալ նախկին դպրոց տեղափոխման փաստաթղթերը ձեռք բերելու համար, երեխան կարող է դուրս մնալ կրթական համակարգից: Մինչ օրս Կրթության նախարարությունը չի առաջարկել որեւէ բարեփոխում ընտանեկան բռնության զոհ դարձած երեխաների կրթության կարգավորումների հետ կապված: Ինչպես նաեւ

54 Հարցազրույց «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցչի հետ:

դպրոցի կազմակերպչական աշխատակազմը պետք է վերապատրաստվի եւ իրազեկ լինի ընտանեկան բռնության զոհերի համար մշակված անվտանգության պլանների եւ պաշտպանական միջոցների մասին, որպեսզի երեխան պաշտպանված լինի բռնարարից:

> Այն մայրերը, որոնք դեռեւս չեն ստացել երեխայի խնամքը ստանձնելու իրավունքը դատարանի կողմից, տեսակցության միակ հնարավոր վայրը դիտարկում են դպրոցը: Ունեցել ենք դեպքեր, երբ դպրոցի տնօրենը կանչել է մորը եւ ասել է՝ մինչեւ վճիռ չունենաս, չես կարող գալ երեխայիդ տեսնել դպրոցում: Բայց փոխարենը, երբ երեխան մոր հետ է ապրում, եւ բռնարարն է ցանկանում տեսնել երեխային դպրոցում, դպրոցն ամեն կերպ աջակցում է վերջինիս: Այստեղ տեսնում ենք երկակի ստանդարտ:
>
> Երեւանում եւ մարզերում տնօրենների մեծ մասը հայտնում է բռնարարներին, թե որ դպրոց են տեղափոխվել երեխաները: Մենք բացատրում ենք, որ կա անվտանգության խնդիր, բայց շատ դեպքերում նույն տնօրենները արագ հայտնում են բռնարարներին կնոջ վայրի մասին:
>
> «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչ

Ընտանեկան բռնության կանխարգելումը կրթական համակարգում

Ընտանեկան բռնության օրենքի 16-րդ հոդվածը հրահանգում է կրթության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմնին. 1) կանոնավոր դասընթացներ անցկացնել ուսուցիչների

եւ մանկավարժների համար՝ ընտանիքում բռնության կանխարգելման գործում իրենց դերի վերաբերյալ եւ ընտանիքում բռնության դեպքերի մասին համապատասխան մարմիններին հաղորդում ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ, 2) ընտանիքում բռնության կանխարգելման նպատակով վերանայել կրթական ծրագրերը եւ բացառել ընտանիքում բռնության խրախուսման դրսեւորումները դասագրքերում եւ կրթական նյութերում, ինչպես նաեւ կրթական ծրագրերում ընդգրկել նյութեր ընտանիքում բռնության բնույթի, ընտանիքի եւ հանրության վրա դրա ազդեցության մասին:

Սակայն իրականության մեջ այս դրույթները գործնականում չեն կիրառվում, ոչ էլ կան մեխանիզմներ այս հրահանգների իրականացման համար:

Առաջարկներ

1. **Վերապատրաստել ՀՀ դպրոցների ողջ անձնակազմին ընտանեկան բռնության, երեխայի լավագույն շահի վերաբերյալ,**

2. **Կրթության նախարարության ներօրենսդրական կարգավորումների միջոցով ամրագրել ուսուցիչների պարտավորություններն ընտանեկան բռնության դեպքերով ընտանեկան բռնության աջակցման կենտրոններին հաղորդում ներկայացնելու վերաբերյալ եւ տուգանել դպրոցներին նման տեղեկատվություն քողարկելու դեպքում,**

3. **Վերանայել ՀՀ կրթության եւ գիտության նախարարի N 1640-Ն եւ N 1365-Ն հրամանները, որոնք վերաբերում են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստա-**

տության սովորողի ընդունելության, տեղափոխման եւ ազատման կարգը հաստատելուն եւ համապատասխան փոփոխությունների միջոցով ամրագրել ընտանեկան բռնության դեպքերով տեղափոխման թերթիկը ձեռք բերելու հատուկ կարգ, որը հիմնված կլինի զոհի եւ նրա երեխաների գաղտնիությունն ու անվտանգությունը երաշխավորող լավագույն փորձերի վրա:

4. Ներառել ուսումնական նյութեր դպրոցի ուսումնական ծրագրում՝ գենդերային կարծրատիպերի դեմ պայքարի եւ առողջ, եւ բռնարար հարաբերությունների մասին կրթելու նպատակով, ինչպես նաեւ ընտանիքի եւ հասարակության վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին:

X

ԽՈՅԵԼԻ ԽՄԲԵՐ

Հաշմանդամություն ունեցող կանայք եւ աղջիկներ

Հաշմանդամություն ունեցող կանայք եւ աղջիկները կրկնակի խոցելի են նախ իրենց սեռի, ապա նաեւ հաշմանդամության պատճառով: Հաշմանդամություն ունեցող կանայք ավելի շատ են ենթարկվում ֆիզիկական, սեռական եւ հոգեբանական բռնության: Նրանք բախվում են խտրականության բազմաթիվ տեսակների՝ ներառյալ սեռով եւ հաշմանդամությամբ պայմանավորված խտրականությունը, ինչը նրանց դարձնում է ավելի մեկուսացված եւ խոցելի բռնության նկատմամբ:

2019 թ. ««Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց կենտրոն» ՀԿ-ի կատարած ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հաշմանդամություն ունեցող կանայք տանը կամ ընտանիքում առավել հաճախ ենթարկվում են սոցիալ-հոգեբանական բռնության, որը դրսեւորվում է վիրավորանքների, մեկուսացման, արհամարհանքի ձեւով, ինչպես նաեւ ապահզորացնող գերհոգատարության եւ գերխնամքի ձեւով: Մտավոր զարգացման խնդիրներ, ինչպես օրինակ՝ մանկական ուղեղային կաթված ունեցող կանայք ավելի խոցելի են բռնության նկատ-

մամբ: Մտավոր խնդիրներ ունեցող կանայք առավել խոցելի են սեռական բռնության նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող աղջիկները ավելի շատ են դուրս մնում հանրակրթական համակարգից, վերջիններս անմրցունակ են աշխատաշուկայում, դառնում են տնտեսապես կախված իրենց ընտանիքի անդամներից: Այս պատճառներով նրանք ընտանիքում առավել հաճախ են ենթարկվում հոգեբանական բռնության, հատկապես՝ արհամարհական վարքի, մեղադրանքների եւ վիրավորանքների: Բացի այդ՝ ընտանիքի անդամները ավելի հաճախ են միջամտում նրանց անձնական կյանքում որոշումների կայացմանը:

Զոհերի համար ապաստարանները եւ աջակցման կենտրոնները չեն կարող տրամադրել որակյալ ծառայություն եւ օգնություն տեսողության, լսողության եւ ֆիզիկական խնդիրներ ունեցող կանանց մատչելի շենքային պայմանների, համապատասխան մասնագետների պակասի կամ բացակայության, անհրաժեշտ նյութերի եւ կահավորանքի, աջակցող տեխնոլոգիաների եւ սարքերի բացակայության պատճառով: Բռնության զոհերի համար նախատեսված թեժ գծերը մատչելի չեն լսողության խնդիրներ ունեցող կանանց համար: Զոհերի վերաբերյալ վիճակագրությունը չի ներառում հաշմանդամության տեսակը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ եւ գենդերային բռնություն

Համաձայն ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների՝ 2020 թվականի հունվարի 31-ի դրությամբ ՀՀ-ում կա ՄԻԱՎ վարակի գրանցված 3825 դեպք, որից կանանց շրջանում 1172-ը (30%):

2018 թ. «ՄԻԱՎ-ի հակազդման ազգային կոնսորցիումի» կողմից, որի անդամ է «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սո-

ցիալական ՀԿ-ն, իրականացվել է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց, ԼԳԲՏ անձանց եւ ԹՆՕ-ների (թմրանյութերի ներարկային օգտագործող) նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրականության դրսեւորումների ուսումնասիրություն», որի շնորհիվ բացահայտվեցին նաեւ, որ ՄԻԱՎ-ով ապրող կանանց եւ ԹՆՕ կանանց նկատմամբ խտրականության դրսեւորման դեպքերն ամենահաճախ հանդիպում են առողջապահական հաստատություններում եւ ընտանիքի անդամների/զուգընկերների կողմից:

Բռնությունը կանանց՝ ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգի հիմնական գործոններից է: Կանանց նկատմամբ բռնության եւ դրանից բխող առողջական խնդիրների գլոբալ եւ տարածաշրջանային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն լուրջ խնդիր է հասարակական առողջապահական ոլորտում:

Համաշխարհային վիճակագրության համաձայն՝ 2016 թվականին երիտասարդների շրջանում (12-24 տարիքային խմբի շրջանակներում) ՄԻԱՎ-ի նոր դեպքերի 58%-ը կազմել են դեռահաս աղջիկներ: Յուրաքանչյուր ժամ ամբողջ աշխարհում 50 երիտասարդ կին վարակվում է ՄԻԱՎ-ով: ՁԻԱՀ-ը 15-ից 44 տարեկան կանանց շրջանում մահացության առաջատար պատճառներից է: Բռնության ենթարկված կանանց շրջանում ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը 50%-ով ավելի բարձր է: Ֆիզիկական եւ հուզական բռնության ենթարկվելու եւ կանանց մոտ ՄԻԱՎ-վարակի առկայության միջեւ սերտ կապ է գրանցվել:

Կարեւոր է արձանագրել, որ

- Բռնության զոհ կանայք ՄԻԱՎ-ով վարակվելու ավելի բարձր վտանգի խմբում են գտնվում:

- Կանայք, որոնք ապրում են ՄԻԱՎ-ով կամ օգտագործում են թմրանյութեր, ավելի հաճախ են բռնության զոհ դառնում:

Ավելին, բռնությունը նվազեցնում է ՄԻԱՎ-ի եւ ՁԻԱՀ-ի հակազդման միջոցառումների արդյունավետությունը, քանի որ սահմանափակում է անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը:

Կարեւոր է նաեւ արձանագրել, որ բռնության զոհ դարձած կանանց համար հասանելի ծառայությունները, այդ թվում նաեւ ճգնաժամային կենտրոնները, չունեն բավարար տեղեկություն եւ զգայունություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: Երբեմն ՄԻԱՎ-ով ապրող կամ թմրանյութերի ներարկային օգտագործող կանայք մերժվում են կամ համապատասխան ծառայություններ չեն ստանում: ՄԻԱՎ-ով ապրող կամ թմրանյութերի ներարկային օգտագործող կանանց նկատմամբ խտրականության բարձր մակարդակը կրկնակի խոցելի է նրանց դարձնում:

ԼԳԲՏ եւ գենդերային բռնություն

Հայաստանում լեսբի, գեյ, բիսեքսուալ եւ տրանսգենդեր (ԼԳԲՏ) անհատները նույնպես կարող են ընտանեկան բռնության ենթարկվել: Սակայն, այն հասարակություններում, որտեղ նրանց նկատմամբ խտրականություն է դրսեւորվում, այդ դեպքերը հազվադեպ են բացահայտվում: Այս անհատները հաճախ ենթարկվում են ոտնձգությունների, խտրականության, ֆիզիկական եւ հոգեբանական բռնությունների: ՀՀ քրեական օրենսգիրքը չի ճանաչում հոմոֆոբիան, բիֆոբիան եւ տրանսֆոբիան՝ որպես քրեական պատիժը ծանրացնող հանգամանքներ:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակությունում առկա խտրական վերաբերմունքը ստիպում է նրանց թաքցնել իրենց սեռական կողմնորոշումը եւ գենդերային ինքնությունն (ՍԿԳԻ) անգամ ընտանիքի անդամներից: Նրանք վախենում են, որ ընտա-

նիքի անդամների առջեւ իրենց ՍԿԳԻ բացահայտումը կարող է հանգեցնել հոգեբանական եւ ֆիզիկական ճնշումների:

Բռնությունը մեծամասամբ կիրառվել է ծնողների կողմից զավակի նկատմամբ վերջինիս ՍԿԳԻ մասին իմանալուց կամ կասկածելուց հետո կամ նրան ԼԳԲՏ անձանց հետ ասոցացնելուց հետո: Ֆիզիկական բռնությունը իր մեջ ներառել է ծեծը եւ պատիժ: Ֆիզիկական բռնությունը զուգորդվել է վիրավորանքներով, հայհոյանքներով եւ սպառնալիքներով: Ծնողները զավակների նկատմամբ կիրառել են նաեւ տնտեսական բռնություն՝ սահմանափակելով նրանց անհրաժեշտ ֆինանսական միջոցները, արգելել են դպրոց հաճախել, առգրավել են նրանց գենդերային ինքնությանը համապատասխանող հագուստը: Զոհերի մեծամասնությունը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին:

ՍԿԳԻ-ի հիմքի վրա ԼԳԲՏ անձանց նկատմամբ ընտանեկան բռնությունը մեծապես քողարկված է: Դեպքերի իրական թիվը արձանագրված չէ: Ավելին՝ հասարակության մեջ լայն տարածում ստացած խտրականության շնորհիվ ոստիկանությունը այս խմբի զոհերին ամոթանք է տալիս, ստորացնում եւ չի պաշտպանում: Այսպիսով՝ նրանք հազվադեպ են դիմում պետական մարմիններին իրենց պաշտպանելու նպատակով: Սա անպատժելիության մթնոլորտ է առաջացնում, որը մեծացնում է բռնության կրկնության ռիսկը:

XI

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում մինչեւ վերջերս զուգընկերոջ կողմից բռնության զոհը չէր կարող ստանալ որեւէ աջակցություն կամ բռնարարից պաշտպանություն: Հիմա, բացի հասարակական կազմակերպություններից, պետությունը նույնպես սկսում է թիրախավորել ընտանեկան բռնությունը: Շատ աշխատանք է դեռ պետք իրականացնել՝ հիմնելով թեժ գծեր, ավելի շատ ապաստարաններ եւ աջակցման կենտրոններ, ինչպես նաեւ՝ երեխաների հետ աշխատանքի ծառայություններ: Պետք է նաեւ բռնությունը վերապրածներին լսենք ու հավատանք: Կանանց նկատմամբ ճնշումների, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության մասին ավելի գիտակից լինենք: Քաղաքականություններն ու օրենքները պետք է փոփոխվեն՝ թիրախավորելով ընտանեկան բռնության խնդիրները: Ոստիկանության, քննիչների, հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների, դատավորների, առողջապահական ծառայություն մատուցողների, սոցիալական աշխատողների եւ այլոց կողմից օգտագործվող ընթացակարգերն ու մեխանիզմները պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին: Այս համակարգում ներառված բոլոր մարդկանց համար ավելի շատ դասընթացներ եւ վերապատրաստումներ պետք է կազմակերպվեն: Ե՛վ քաղաքացիական, ե՛ւ

քրեական պրակտիկաները, ընթացակարգերը, մեխանիզմները ե՛ւ օրենքները պետք է փոփոխվեն՝ այս փաստաթղթում թվարկված եւ շատ ավելի խնդիրներ լուծելու համար:

Ընտանեկան բռնության խնդրի լուծման բարդության պատճառով մենք պետք է հասկանանք, որ համայնքում հարաբերությունները ելակետային են ընտանեկան բռնությանը արձագանքելու եւ այն կանխարգելելու գործում: Սա նշանակում է, որ բոլոր մարդիկ եւ յուրաքանչյուր մարմին պետք է աշխատեն միասին, քանի որ նրանք բոլորն էլ այս համակարգի մի օղակն են կազմում: Զուգընկերոջ գործադրած բռնության կանխարգելումը նաեւ պահանջում է հասարակության կրթություն եւ իրազեկության բարձրացում, մասնավորապես երիտասարդների շրջանում հանուն ապագայի: Այս առումով պետական ծրագրերը շատ կարեւոր դերակատարություն ունեն:

Այս հոդվածում ներկայացրած փաստերից ակնհայտ է, որ ներկայիս համակարգը չի աշխատում: Յուրաքանչյուր հաստատության կամ գործակալության նպատակներում, գործընթացներում եւ ընթացակարգերում կան շատ բացթողումներ, եւ դրանցից ոչ մեկը համակարգված ձեւով չի աշխատում: Ոստիկանությունը պետք է համագործակցի համայնքային եւ մշակութային փոփոխություններ կատարելու գործում: Մենք հաճախ ենք առաջարկել ոստիկանությանը դուրս բերել բոլոր բացթողումները եւ շտկել դրանք: Նրանք երբեք դա չեն արել: Միայն հասարակական կազմակերպություններն են, որ բարձրաձայնում են այն խնդիրների մասին, որոնք վերաբերում են իրավապահ մարմինների, սոցիալական ծառայությունների, երեխայի պաշտպանության եւ օրենսդիր մարմինների ոչ կոմպետենտությանը: Մինչեւ տվյալ մարմինները չլինեն ինքնաքննադատ եւ չունենան քաղաքական կամք իրենց ծառայությունները բարելավելու համար, առաջխաղացում չի գրանցվի ընտանեկան բռնության դեմ

պայքարի հարցում: Որպեսզի ոստիկանությունը կամ այլ մարմիններ բացահայտեն բացթողումները, պետք է ավելի լավ հասկանան, թե ինչ է ընտանեկան եւ սեռական բռնությունը:

Ոստիկանները, դատարանները եւ քաղաքականություն մշակողները պետք է հասկանան, որ իրենք գործ ունեն հանցագործության հետ՝ միաժամանակ գիտակցելով տրավմայի ազդեցությունը: Քանի դեռ նրանք հետեւում են իրենց նախապաշարմունքներին եւ կասկածի տակ են դնում զոհի ցուցմունքների հավաստիությունը, կամ եթե տվյալները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնության դեպքերի 40%-ում կանայք են տղամարդկանց բռնության ենթարկում, ընտանեկան բռնության դեմ պայքարի եւ զոհերի պաշտպանության հարցում առաջխաղացում չի դիտվելու:

Բազմաթիվ հետազոտություններ, ուղեցույցներ, վերլուծություններ, դասընթացների ձեռնարկներ եւ մոդուլներ են մշակվել եւ իրականացվել Հայաստանում, հիմնականում ԵԽ-ի, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» եւ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ների կողմից, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին: Սակայն, թվում է՝ պետական մարմինները նույնիսկ չեն էլ կարդում կամ ներառում դրանք պարտադիր վերապատրաստման մեջ կամ հաշվի առնում օրենսդրությունը փոփոխելու ժամանակ: Սա պետք է փոխվի, եւ այդ մարմինները պետք է միասին աշխատեն փոփոխություն անելու համար:

Եվս մեկ անգամ մեջբերում ենք ԵԽ-ի բացահայտումներից «Առանցքային մարմինների միջեւ անհրաժեշտ կլինեն կանոնավոր հանդիպումներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում շարունակվի ընտանեկան բռնության նկատմամբ արձագանքման ձեւի մշակումը եւ ծագած խնդիրների լուծումը: Այդ մարմիննե-

որի միջեւ առկա մարտահրավերների բաց քննարկումը եւ հետադարձ կապի տրամադրումը կբարելավի ընտանեկան բռնությանը արձագանքող ոստիկանության կատարողականությունը: Պարզ է դառնում, որ ներկայումս նման հանդիպումներ տարբեր մարմինների միջեւ տեղի չեն ունենում: Այս գործընթացը պահանջում է առանձին, բայց նաեւ համատեղ, յուրաքանչյուր մարմնի տվյալների արդյունավետ հավաքագրում եւ վերլուծություն: Հավաքված տվյալների վերլուծությունը կօգնի հետագայում արդյունավետ դարձնել ընտանեկան բռնության նկատմամբ արձագանքը»[55]:

Ընտանեկան բռնության օրենքի համաձայն՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատվություն է կրում ընտանեկան բռնության բազմամասնագիտական խորհրդի հանդիպումները նախագահելու համար: Կարեվոր է, որ այս հանդիպումների ժամանակ ներառված մարմինները հասկանան եւ շտկեն իրենց մոտ առկա խնդիրները: Այս ուղղությամբ առաջին քայլերն իրականացվել են, բայց դեռեւս վաղ է ասել, թե արդյոք խորհուրդը կունենա փոփոխությունները պարտադրելու որեւէ իշխանություն զոհերին պաշտպանելու ավելի լավ եւ արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

55 Տե՛ս Council of Europe, Police Response to Violence against Women and Domestic Violence in Armenia, 2018, էջ 31 https://womensupportcenter.org/assets/PDF%20publications/EUR%20ENG%20FINAL.pdf:

XII

ԱՄՓՈՓ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, ինչպես նաեւ ընտանեկան, սեռական բռնության հանցագործությունները կանխարգելելու եւ անպատժելիության մթնոլորտը վերացնելու համար Հայաստանը պետք է ձեռնարկի ընտանեկան բռնության արձագանքման, կանխարգելման եւ դրա դեմ պայքարի բազմաոլորտային միջոցառումներ: Հայաստանը պետք է համակարգային փոփոխություններ կատարի պետական եւ համայնքային ծառայությունների ոլորտում: Անհրաժեշտ է արդյունավետ օրենսդրական կարգավորումներ ապահովել դրանց պատճաշ գործունեությունն իրականացնելու համար:

Հայաստանը պետք է վավերացնի Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան եւ դրան համապատասխան փոփոխություններ իրականացնի ՀՀ քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքերում, ինչպես նաեւ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերում:

Ինչպես նաեւ, Հայաստանը պետք է իրականացնի հետեւյալ քայլերը.

I. Օրենսդրական փոփոխություններ

- Քրեականացնել ընտանեկան բռնության գործողությունները ՀՀ քրեական օրենսգրքի բոլոր հոդվածներում՝ համաձայն ստամբուլյան կոնվենցիայի:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանել, որ գենդերային բռնության դեպքերում տուժողները չեն կարող առերեսվել մեղադրյալի կամ վկայի հետ, եթե վարույթն իրականացնող մարմինը չի ապահովում տեխնիկական հնարավորություն, առերեսումն իրականացնել տարբեր սենյակներում՝ առանց միմյանց տեսնելու:

- ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրել երեխաների ներկայությամբ կատարված ընտանեկան բռնության համար ծանրացուցիչ հանգամանքների կիրառում:

- Գենդերային հիմքով կատարված արարքը ամրագրել՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսել ընտանեկան բռնության դեպքերով գործերի քննության առանձին (կամ հատուկ) իրավակարգավորումներ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

- Իրավական համապատասխան փոփոխությունների միջոցով ընտանեկան բռնության զոհերի շահերի պաշտպանության նպատակով ապահովել աջակցման կենտրոնների ներգրավումը դատավարական գործընթացում, որոնք հանդես կգան որպես զոհի եւ նրա երեխայի լավագույն շահի ապահովման երաշխավորներ:

- Օրենքում կատարել փոփոխություն եւ հանել ոստիկանության նախազգուշացումը՝ որպես պաշտպանության միջոց:

- Օրենքում կատարել փոփոխություններ եւ անհետաձգելի միջամտության որոշման համար սահմանված ժամանակահատվածը փոփոխել՝ դարձնելով 20 օր տեւողությամբ եւ հնարավոր դարձնել տեղում անհետաձգելի միջամտության որոշման տրամադրումը, ինչպես նաեւ այն բռնարարներին, որոնք ունեն հոգեկան առողջության խնդիրներ, սակայն հոսպիտալացված չեն:

- Օրենքում կատարել փոփոխություն՝ թույլատրելով պաշտպանական որոշում կայացնել նաեւ այն պարագայում, երբ առկա չէ անհետաձգելի միջամտության որոշում՝ զոհերի կամ վտանգի տակ գտնվող անձանց անվտանգություն ապահովման նպատակով:

- Ազատել զոհին դատարան դիմելիս պետական տուրքի վճարման պարտավորությունից:

- Վերանայել բռնարարին ոստիկանական հաշվառումից հանելու չափանիշները:

- Ամրագրել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման եւ ազատման վերաբերյալ կարգավորումներում ընտանեկան բռնության դեպքերով տեղափոխման թերթիկի կիրառման առանձնահատուկ ընթացակարգ՝ հիմնվելով լավագույն փորձի վրա:

- Ընտանեկան բռնության օրենքը բարեփոխել, ինչը կապահովի անվճար առողջապահական ծառայությունների մատչելիությունը ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի համար, որոնք վնասվածքներ են ստացել բռնության պատճառով:

II. Համակարգերի զարգացում

- Ստեղծել եւ ներդնել գենդերային բռնության դեպքերի արձագանքման բազմաոլորտային համակարգ:
- Ստեղծել եւ հանրայնացնել անվճար, առանց հանգստյան օրերի, շուրջօրյա ռեժիմով գործող գենդերային բռնության հարցերով ազգային թեժ գիծ:
- Ստեղծել միասնական բազա գենդերային բռնության դեպքերով հաշվառման կանգնած բռնարարների համար:
- Մշակել երեխայի պաշտպանության ամբողջական ծառայություն, որը կղեկավարեն աշխատավարձ ստացող մասնագետները:
- Ստեղծել մասնագիտացված սոցիալական աշխատողների եւ հոգեբանների բազա, որոնք ընտանեկան բռնության դեպքերով կներգրավվեն որպես անկախ փորձագետներ եւ կտրամադրեն իրենց մասնագիտական եզրակացությունները շահագրգիռ կողմերին՝ երեխայի բնակության վայրի, ծնողի կամ ծնողների հետ միասին ապրելու, տեսակցության իրավունքների, ծնողների իրավունքները սահմանափակելու եւ այլ հարցերի վերաբերյալ:

III. Համակարգային մեխանիզմների ներդրում

- Մշակել մեխանիզմներ՝ իրավապահ համակարգում գենդերային բռնություն գործադրող աշխատակիցների բացահայտման ու համակարգից նրանց հեռացման ուղղությամբ:

- Մշակել համապատասխան մեխանիզմներ (այդ թվում նաեւ իրավական)՝ բռնության զոհերի նկատմամբ զոհակենտրոն մոտեցում ապահովելու նպատակով:

- Մշակել ընտանեկան եւ սեռական բռնության դեպքերով բժիշկների՝ իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելու պայմաններ եւ մեխանիզմներ, ներառյալ՝ բոլոր հնարավոր ռիսկերի գնահատման:

- Սահմանել ուսուցիչների համար ընտանեկան բռնության դեպքերի մասին աջակցման կենտրոններին հաղորդելու պարտականություններ:

- Մշակել եւ ներդնել առողջապահական ծառայությունների չափորոշիչներ, կլինիկական ուղեցույցներ ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի համար:

- Վերանայել դատաբժշկական փորձաքննության չափանիշները՝ գենդերային բռնության դեպքերում դրանք ավելի զգայուն եւ զոհակենտրոն դարձնելով:

IV. Համակարգային վերապատրաստումներ

- Իրականացնել գենդերային բռնության, բռնության կանխարգելման, բռնության զոհերի կարիքներին համապատասխան արձագանքման մեխանիզմների վերաբերյալ շարունակական եւ համակողմանի վերապատրաստումներ՝ ՀՀ իրավապահ ողջ համակարգի աշխատակիցների, դատավորների, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների, ընտանեկան բռնության աջակցման կենտրոնների եւ երեխայի պաշտպանության ծառայությունների բոլոր աշխատակիցների, բժիշկների եւ ուսուցիչների համար:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Բազմաոլորտային մոտեցում

Ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի գործում պետությունը պետք է ունենա բազմաոլորտային մոտեցում, որը կմիավորի պետության տարբեր տարածքներում գործող տարբեր նախարարություններ, գերատեսչություններ եւ ծառայություններ, ինչպես հասարակական կազմակերպությունները՝ զոհի կարիքները հոգալու եւ բռնարարին պատասխանատվության ենթարկելու նպատակով: Սա կստեղծի ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրա դեմ կանխարգելման ու պայքարի միասնական համակարգ:

Գենդեր

Տարբեր սեռերի անձանց սոցիալապես ամրագրված վարք, կանանց եւ տղամարդկանց միջեւ հարաբերությունների սոցիալական ընկալում, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ ներառյալ քաղաքականությունը, տնտեսությունը, առողջապահությունը, գիտությունը, իրավունքը, մշակույթն ու կրթությունը:

Գենդերային խտրականություն

Գենդերային նախապաշարմունքների, կարծրատիպերի, սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմա-

նափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

Գենդերային հավասարություն

Հավասար վերաբերմունքի եւ սեռով պայմանավորված խտրականությունից զերծ պայմանների եւ հնարավորությունների առկայություն հասարակությունում:

Գենդերային բռնություն

Բռնություն, որն առաջանում է գենդերային դերերից բխող նորմատիվ դերային սպասումների եւ հարաբերություններում ուժի անհավասար բաշխման հետեւանքով:

Երկրորդային զոհականացում

Երկրորդային զոհականացումը բռնության այն տեսակն է, որը հանցագործության ուղիղ հետեւանք չէ, բայց պայմանավորված է ծառայություններ մատուցող սուբյեկտների կողմից արձագանքների կամ հանցագործությանը հակազդելու հետեւանքով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրորդային զոհականացումն առավելապես կապված է արդարադատության համակարգում առկա խնդիրների հետ:

Զոհակենտրոն մոտեցում

Զոհակենտրոն մոտեցումը ընտանեկան եւ սեռական բռնության զոհերի պահանջներին եւ կարիքներին միտված համակարգային մոտեցում է: Զոհի ցանկությունները, անվտանգությունն ու բարեկեցությունը զոհի հետ աշխատանքում առաջնահերթություն են: Այս մոտեցումը պետք է կիրառվի բոլոր ընթացակարգերում ոստիկանության, քննիչների եւ յուրաքանչյուր ծառայություն մատուցողի կողմից: Բռնության զոհի իրավունքներին պետք է առաջնահերթություն տրվի բռնարարի իրավունքների նկատմամբ: Սա կնպաստի բռնության զոհի մոտ վստահության առաջացմանն ու իրավապահ մարմինների հետ համագործակցությանը եւ վերջինիս արագ վերականգնմանը: Հակառակ դեպքում բռնության զոհը կենթարկվի կրկնակի զոհականացման եւ չի կարողանա վստահել, որ իրեն կարող են պաշտպանել կամ օգնել: Չունենալով զոհակենտրոն մոտեցման վրա հիմնված համակարգ՝ երբեւէ հնարավոր չի լինի իրականացնել արդյունավետ պայքար ընտանեկան բռնության դեմ:

Ընտանեկան բռնություն

Ֆիզիկական, հոգեբանական, սեռական եւ տնտեսական բռնության բոլոր դրսեւորումներն ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ նախկին կամ ներկայիս ամուսինների կամ զուգընկերների միջեւ՝ անկախ նրանից, թե բռնարարը բնակվում կամ բնակվել է զոհի հետ նույն տեղում, թե ոչ:

Ընտանեկան բռնություն կամ զուգընկերոջ կողմից բռնություն պատճառում են այն մարդիկ, որոնք ցածր ինքնագնահատական ունեն եւ առաջնորդվում են գենդերային կարծրատիպերով:

Բռնարարը կարծում է, որ նա իրավունք ունի վերահսկել իր զուգընկերոջը, նա իրավասու է անել, ինչ ուզում է, եւ որ կանայք հավասար չեն տղամարդկանց: Շատ քիչ դեպքերում նրանք ունեն հոգեկան առողջության խնդիրներ: Մյուսները սովորում են այս բռնարար վարքն իրենց ընտանիքներից, քանի որ դա տեսել են իրենց ծնողներից:

Ընտանեկան բռնության ինտենսիվությունը միշտ աճում է, կրկնվում է եւ կարող է մարդասպանության հանգեցնել:

Հայրիշխանություն

Հասարակական կյանքի ձեւ, որտեղ տղամարդն է հանդիսանում քաղաքական ուժի հիմնական կրողն ու բարոյական հեղինակությունը: Հայրիշխանությանը բնորոշ են տղամարդկային ուժի ինստիտուտի եւ տղամարդկային արտոնությունների առկայությունը, մինչդեռ կանանց ստորադասվածությունն ու ենթակա կարգավիճակը՝ տղամարդու ուժին: Տղամարդն է իրականացնում սեփականության վերահսկողությունը, իսկ հայրերն ընտանիքում իշխանություն ունեն կանանց եւ երեխաների հանդեպ:

Վերահսկող վարք

Բռնությունը միայն ֆիզիկական չէ: Բռնությունն օգտագործվում է զոհի նկատմամբ ուժ եւ վերահսկողություն գործադրելու, զոհի կամքին բռնանալու եւ այն ստորադասելու համար: Բազմաթիվ կանայք, որոնք իրենց զուգընկերոջ կողմից բռնության են ենթարկվել, հայտնում են, որ ենթարկվել են հոգեբանական բռնության տարբեր ձեւերի, ինչպիսին են, օրինակ՝ արտաքին աշխարհից մեկուսացումը, վիրավորանքները, սպառնալիքներն ու ահաբեկումները կամ ստիպված են եղել կատարել նվաստա-

ցուցիչ գործողություններ (ներառյալ սեռական): Բռնության զոհի համար տրավման անխուսափելի է, ինչը նրան թույլ չի տալիս մտածել կամ որոշում կայացնել, քանի որ նա անընդհատ վախի մեջ է: Բռնարարն այս գործողությունները փոխարինում է ջերմ վերաբերմունքով, բայց դա օգտագործվում է զոհին մանիպուլյացիայի ենթարկելու համար՝ տալով նրան կեղծ հույս, որ նա կփոխի իր դիրքորոշումն ու վարքը, որպեսզի վերջինս մնա հարաբերությունների մեջ: Այս բոլոր մարտավարությունները անհրաժեշտ են բռնարարին զոհին վերահսկելու եւ նրան ամբողջովին անօգնական դարձնելու՝ ոտնահարելով նրա ինքնավստահությունը եւ վստահությունը ու իրենից ամբողջովին կախվածության մեջ պահելով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ոստիկանության վտանգի գնահատման թերթիկ

1. Դուք վնասվածք ստացե՞լ եք ներկա դեպքի պատճառով:

2. Արդյո՞ք Դուք վախ ունեք, որ ենթադրաբար բռնություն գործադրած անձը կվնասի Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց:

3. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է վնասել Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց:

4. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է սպանել Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց:

5. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը սպառնացել է Ձեզ կամ Ձեր խնամքի տակ գտնվող անձանց՝ գործածելով զենք /դանակ կամ այլ առարկա/:

6. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբեւէ ֆիզիկական բռնություն գործադրե՞լ է Ձեր նկատմամբ /ի՞նչ հաճախականությամբ/:

7. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեզ երբեւէ պարտադրե՞լ է սեռական հարաբերություն ունենալ իր հետ:

8. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը հետապնդել է Ձեզ, վերահսկողություն իրականացրե՞լ է Ձեր գործողությունների նկատմամբ:

9. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը մեկուսացրե՞լ է Ձեզ կամ զրկե՞լ է ֆինանսական միջոցներից:

10. Ենթադրաբար բռնություն գործադրած անձի տիրապետության տակ արդյոք առկա՞ է զենք:

11. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբեւէ դաժանաբար վարվե՞լ է Ձեր ընտանի կենդանու նկատմամբ:

12. Ենթադրաբար բռնություն գործադրած անձից Դուք վերջերս (վերջին մեկ տարվա ընթացքում) փորձե՞լ եք ամուսնալուծվել կամ բաժանվել կամ Ձեր միջեւ արդյոք կա՞ երեխաների խնամակալության հետ կապված վեճ:

13. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը տառապու՞մ է ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, թունամոլությունից կամ խաղամոլությունից:

14. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը Ձեր հղիության ընթացքում (եթե նա տեղյակ էր հղիության մասին) գործադրե՞լ է բռնություն:

15. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձի նկատմամբ երբեւէ կայացվել է ընտանիքում բռնության համար նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ մեղադրական դատավճիռ:

16. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբեւէ խախտե՞լ է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումները:

17. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը երբեւէ դատապարտվե՞լ է բռնությամբ զուգորդված հանցանք կատարելու համար:

18. Ենթադրաբար բռնություն գործադրած անձը հաշվառվա՞ծ է հոգեբուժական կամ նարկոլոգիական դիսպանսերում:

19. Արդյո՞ք ենթադրաբար բռնություն գործադրած անձը հնչեցրել է սպառնալիք Ձեր կողմից, ոստիկանություն կամ այլ իրավապահ մարմիններ դիմելու դեպքերում:

20. Բռնարարը սպառնու՞մ է կամ փորձու՞մ է ինքնասպան լինել:

21. Արդյո՞ք Դուք հղի եք կամ ծննդաբերել եք վերջին մեկ տարվա ընթացքում կամ ունե՞ք հաշմանդամություն:

Միջազգային պրակտիկայի վրա հիմնված «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի վտանգի գնահատման թերթիկը

1. Ֆիզիկական բռնության հաճախականությունը կամ սրությունը անցած մեկ տարվա ընթացքում ավելացե՞լ է:

2. Նա զենք ունի՞:

3. Անցած մեկ տարվա ընթացքում հեռացե՞լ եք նրանից (նրա հետ միասին բնակվելուց):

4. Եթե *երբեւիցե* նրա հետ չեք բնակվել, նշեք այստեղ _____:

5. Նա աշխատանք ունի՞:

6. Նա երբեւիցե զենք օգտագործե՞լ է Ձեր դեմ, կամ զենքով սպառնացե՞լ է Ձեզ: (Եթե զենքը ատրճանակ էր, նշեք այստեղ _____):

7. Նա սպառնացե՞լ է Ձեզ սպանել:

8. Նա կարողացե՞լ է ընտանեկան բռնություն գործելու համար խուսափել ձերբակալվելուց:

9. Երեխա(ներ) ունե՞ք, որ իրենից չեն:

10. Նա երբեւիցե Ձեզ ստիպե՞լ է Ձեր կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալ իր հետ:

11. Նա երբեւիցե փորձե՞լ է Ձեզ խեղդել:

12. Նա թմրադեղեր օգտագործու՞մ է:

13. Նա հարբեցո՞ղ է (ամեն օր կամ համարյա ամեն օր խմում է) կամ խմու՞մ է, երբ խնդիրների առջեւ է կանգնած:

14. Նա Ձեր առօրյա գործողությունների մեծ մասը կամ ամենը վերահսկու՞մ է: Օրինակ՝ ինքն է որոշում ում հետ պետք է ընկերություն անեք, երբ կարող եք Ձեր ընտանիքի անդամներին հանդիպել, ինչքան գումար կարող եք ծախսել եւ այլն: (Եթե նա այսպես է վարվում, բայց դուք նրան չեք թույլատրում, նշեք այստեղ _____):

15. Նա Ձեզ մշտապես (ագրեսիվորեն) խանդու՞մ է: (Օրինակ՝ ասում է՝ «եթե ես քեզ չեմ կարող ունենալ, ոչ մեկ չի կարող ունենալ»):

16. Նա Ձեզ հղի ժամանակ ծեծե՞լ է: (Եթե նրանից հղի չեք եղել, նշեք այստեղ _____):

17. Նա երբեւիցե սպառնացե՞լ է կամ փորձե՞լ է ինքնասպան լինել:

18. Նա սպառնու՞մ է Ձեր երեխաներին վնաս տալ:

19. Արդյո՞ք կարծում եք, որ նա ի վիճակի է Ձեզ սպանել:

20. Նա Ձեզ հետեւում կամ հետապնդու՞մ է, սպառնացող հաղորդագրություններ կամ գրություններ թողնու՞մ է, Ձեր գույքը փչացնու՞մ է, կամ զանգու՞մ է, երբ դուք չեք ցանկանում իր հետ խոսել:

21. Դուք սպառնացե՞լ, փորձե՞լ եք ինքնասպան լինել կամ ինքնասպանության մասին մտքեր ունեցե՞լ եք: Գրել նշվածների ընդհանուր թիվը: